


637.1
G - 67



Խ. ՅԵՐԻՑՅԱՆ



ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾՎԱԿԱՆ ՀԵՌՆԱՐԿ

ԹԵԱՏՐԸ

«Զ ա կ կ 6 ի զ ա»

1926

11 APR 2013

01 OCT 2010 637.1 ար.

№ 8 (11) «Գյուղացու գրադարան» № 8 (11).

Խ. ՅԵՐԻՑՅԱՆ

ԿԱԹՆԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ

ԳՈՐԾՆԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

1003
10975



«Զ Ա Կ Կ 6 Բ զ ա»

1925

ՅԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հ.Ա.Խ.Հ. ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԽՄԲ. ԿՈՎԵԳԻԱՅԻ:

Գյուղատնտեսական հանրամատչելի գրականությունից բացի, վոր անհրաժեշտ ե գյուղացիության լայն մասսաների ընթերցանության համար, կարևոր ե ունենալ նաև գյուղատնտեսության տարբեր ճյուղերի վերաբերյալ գործնական ձեռնարկներ, վորովհետև գյուղատնտեսական արդյունաբերության մասնագիտացումն այդ պահանջն արդեն դրել ե մեր առաջ։ Մեր յերկրի կաթնատնտեսության նկատելի ծավալումն արդեն ստեղծել ե համապատասխան գրականության կարիքը։ Գործարանային բնույթ ստացած մեր կաթնատնտեսական արդյունաբերությունը կարիք ունի կաթնատնտեսության գործնական այնպիսի ձեռնարկի, վորը բացի գործնական ցուցմունքներից պարունակի նաև գիտական հիմունքներ, վոր մեծ չափով անհրաժեշտ ե ըմբռնելու համար լավորակ կաթնամթերքներ ստանալու պայմանները։ Մանավանդ անհրաժեշտ ե այսպիսի մի ձեռնարկ որեցոր աճող կաթնարտելներին, վորոնց մեջ կենտրոնացել ե մեր պահովի և յուղի արդյունաբերությունը։

Այդպիսի մի ձեռնարկ սակայն պետք ե լինի միանգամայն մատչելի միջակ ընթերցողի համար թե լեզվով և թե իր մեկնությամբ։ Յելակետ ունենալով այս, գիրք կազմելիս յես առանձնապես նկատի յեմ առել կաթնատնտեսական արտեներում աշխատողներին, գյուղացի միջակ գրագետներին, և ընդհանրապես նրանց, վորոնք գրաղվելով կաթնատնտեսությամբ, կցանկանային

ծանոթանալ նորագույն կաթնատնտեսության հիմունքների
հետ և ողովել դրանցից:

Նման ձեռնարկի բացը վաղուց զգացվում եր մեզա-
նում: Թարգմանական գրականությունը լինելով ոտար մի-
ջավայրի պահանջների արդյունք՝ չի կարող բավարարել
մեր յերկրի ուրույն պայմաններին: Այս հանգամանքը հար-
կադրում է ստեղծել մեր յերկրի պայմաններին հարազատ
ինքնուրույն գրականություն: Գիրքս կազմելիս հիշյալ
հանգամանքը ուղեցույց ե ծառայել ինձ համար:

Չեռնարկիս յերկրորդ մասը նվիրված ե լինելու պահ-
սակործության: Այս ճյուղը այնքան խոշոր նշանակու-
թյուն ունի մեզ համար, վոր արժանի յե առանձին ուշա-
գրության, մանավանդ շվեյցարական պանրագործությունը,
վոր խոշոր ապագա ե խոստանում:

Գրքիս վերջում բերած շուն ու ջիլ պանիրն իրան-
ցից չեն ներկայացնում ինքնագույշ մթերքներ, այլ դրանք
սերտ կերպով կապված են յուղագործության հետ և
միջոց են համդիսանում յուղագործության մնացորդները
ողովործելու համար: Այդ ե պատճառը, վոր նըանց բա-
ժանելով պանիրներից, զետեղել եմ ձեռնարկիս առաջին
մասում:

Գրքիս մեջ առաջարկում ե մածնի գործածու-
թյունը կաթնատնտեսության մեջ բարձր վորակի սմե-
տանա, եքսպորտի կարագ և շոռ պատրաստելու համար,
վորի առավելություններն ու նպատակահարմարությունը
ստուգել եմ անձնական փորձով:

Այս ձեռնարկը կազմելիս ոգովել եմ կիրխների, Ֆլայշ-
մանի, Բարթելի, Լյոնիսի, Ավ. Քալանթարի, Շտեբլերի,
Կրոնախերի և այլոց աշխատություններից:

I. ԿՈՎԻ ԿԱԹԻ ԲԱՂԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ

Կաթը կազմված ե ջրից, յուղից, սպիտակուցային
նյութերից, կաթնաշաքարից և հանքային նյութերից կամ
մոխրից:

Մեզ մոտ գործ են ածում կովի, վոչխարի, այծի և
գոմշի կաթը. բայց ամենից շատ գործ են ածում կովի կա-
թը, ուստի նաև ծանոթանանք կովի կաթի հետ:

Կովի կաթի բաղադրության մասին գաղափար կազ-
մելու համար բերենք հետևյալ տախտակը.

100 ֆունտ կովի կաթի մեջ գտնվում ե՝

Միջին քով	Տառանգում ե
Զուր	87,80 ֆ. . . 83-ից մինչև 91
Յուղ	3,40 „ . . 2 „ „ 8
Կազեյին (պանրանյութ)	2,70 „ . . 2,0-ից „ 4,5
Ալբումին և գլոբուլին (լոռ)	0,50 „ . . 0,2-ից „ 1,3
Սպիտակուցային այլ նյութեր	0,20 „ . . — —
Կաթնաշաքար	4,70 „ . . 3 „ „ 6,6
Մոխրի	0,70 „ . . 0,6-ից „ 1,0
Հնդամենը . . .	100 ֆունտ:

1. Զ Ո Ւ Բ Ը

Կովի, ինչպես և մյուս կենդանիների կաթի մեծ մասը
կազմում է ջուրը:

Կովի սովորական կաթի մեջ, ինչպես յերեսում ե վե-
րելում բերած տախտակից, միջին թվով 100-ից 87,8 մասը
ջուր ե: Բայց միշտ այդպես չի լինում:

Կաթի մեջ 100 մասից ամենաքիչը 83 և ամենաշաքար
91 մասը ջուրն է կազմում: Կաթի ջրիկ կամ թանձր լինելը
կախված է զանազան պատճառներից. որինակ՝ կովի ցե-

դից, նրա առանձնահատկություններից, սեռական գործունեությունից և այլ պայմաններից, վորոնց մասին մանրամասն կխոսենք մի քիչ հետո։ Յեթե կաթը յերկար ժամանակ յեռացնենք, միջի ջուրը կգոլորշիանա և կաթը հետզհետեւ կթանձրանա ու հետո բոլորովին կցամաքի։ Ամանի տակ կմնա կաթի սպիտակ—դեղնավուն ցամաք մասը։ Այդ մասը յեթե 24 ժամ պահենք տաք վառարանի մեջ, բայց այնպես, վոր նա միայն չորանա և փոչ թե այրվի, կատանանք կաթի չոր կամ պինդ մասը։ Բացի ջրից, կաթի մնացած բոլոր մասերը մտնում են որա մեջ։

2. ԶՈՐ ԿԱՄ ՊԻՆԴ ՄԱՍԸ

Կովի կաթի չոր նյութը կազմում է միջին թվով կաթի 100—մասից $12^{1/2}$ -ը, ուրիշ խոսքով՝ կազմում է կաթի $12^{1/2}^0/_{0}$ -ը։ Յերբեմն չոր նյութը պակաս է լինում, յերբեմն ել ավել։ Ամենաքիչը 100-ին կարելի յե հաշվել 9-ը, իսկ ամենաշատը 17 մաս, դա յել նույն պատճառներն ունի, ինչ վոր ջրի՝ շատ կամ քիչ լինելը կաթի մեջ։


Կաթի չոր կամ պինդ մասը բաղկացած է յուղից, սպիտակուցային նյութերից, (կազեյինը, ալբումինը, գլուռովինը) կաթնաշաքարից և մոլիրից։ Դրանցից շաքարը, մոլիրը, ալբումինը և գլուռովինը ջրի մեջ հալված գրությամբ են գտնվում, իսկ յուղն ու կազեյինը փուլած են կաթի մեջ։

Ա. Յ Ո Ւ Ղ Ը


Կաթի մեջ գտնված ամենակարևոր նյութերից մեկը յուղն է, վորը մանր կաթիներով տարածված է նրա մեջ։ Այդ կաթիները գնդածեն, չափազանց մանր և հատարակ աչքով անտեսանելի։

Յեթե կաթի մի կաթիլը գնենք խոշորացույցի կամ, — ինչպես ասում են ոտար բառով, միկրոսկոպի տակ և

նայենք, կտեսնենք մանր գնդածեն կաթիներ, վորոնք լողում են կաթի մեջ։ Դրանք յուղի կաթիներն են։ Յուղի կաթիները, կամ գնդիկները լինում են զանազան մեծության։ Գնդիկների մեծությունը կախված է տավարի ցեղից, նրա առանձնահատկություններից և այլ պայմաններից։ Որինակ՝ նոր ծնած կովի կաթի յուղի գնդիկներն ավելի մեծ են, քան վաղուց կթվող կովի կաթինը։ Յուղի գնդիկները կաթից թեթև են և յերբ կաթը հանգիստ դրած է լինում, նրանք բարձրանում են կաթի յերեսն ու սեր կապում։ Առաջ բարձրանում են մեծ գնդիկները, հետո միջակ և ամենավերջը՝ փոքրիկները։ Յուղի մանր ու միջակ գնդիկները կաթի մեջ ավելի շատ են, քան մեծ գնդիկները։ (Տես նկ. 1 և 2):



Նկ. 1. Անարատ կաթի յուղի գնդիկները խոշորացույցի տակ։



Նկ. 2. Քաշած կաթի յուղի գնդիկները խոշորացույցի տակ։

Յուղի քանակը կաթի մեջ տարբեր է։ Յերբեմն կաթի 100 մասի 2-ն է յուղ, յերբեմն ել՝ 3, 4, 5 և այլն։ Կան տավարի ցեղեր, վորոնց կաթը յուղալի յե, բայց կան և ջրիկ կաթ ունեցող ցեղեր։ Որինակ՝ հոլլանդական կովի կաթը ջրալի յե ($3^0/_{0}$ յուղ), սիմենթալինը և մեր տավարինը միջակ ($4^0/_{0}$ յուղ), իսկ անգլիական Ջերզեյի կոշված ցեղի կաթը շատ է յուղալի ($5^0/_{0}$ յուղ է)։ Միենույն ցեղին պատկանող կովերը

կարող են յուղալի և ջրիկ կաթ տար, դա յել կախված ե կովերի առանձնահատկություններից:

Յուղի գնդիկները կաթի մեջ հալված դրությամբ են դանվում: Խնոցի հարելիս նրանք պնդանում ու ձեռփոխվում են: Յուղի կաթիկները կաթի մեջ շրջապատված են լուծված նյութերի մասնիկներով, որինակ՝ ալբումինի, պորուլինի և աղերի մասնիկներով և կազմում են այդ նյութերից բաղկացած խիտ շերտ, վորը քանդվում է խնոցի հարելու ժամանակ և միջից յուղը դուրս է գալիս պընդացած ձեռվ, կարագի նման: Կաթի յուղը բաղկացած է հետեւյալ 10 տեսակ զանազան յուղերից. ստեարին, պարմիտին, միրիստին, ոլեին, բուտիրին, կապրինին, կապրիլին, կապրոնին և լաուրին: Սրանցից առաջին հինգը ջրի մեջ չեն լուծվում և չեն գոլորշիանում ու ողը ցնդում, իսկ վերջին հինգ տեսակները ջրի մեջ լուծվում են և գոլորշիանում: Յուղի համա ու հոտը առաջ են գալիս այս վերջին հինգ տեսակներից: Սրանք կազմում են կաթի յուղի միայն $90/0$ -ը, իսկ առաջին հինգ տեսակները կազմում են յուղի $91 0/0$ -ը: Սրանց մեջ կան պինդ և փափուկ տեսակներ, ինչպես և ուշ կամ շուտ հալվողներ: Ոլեինը հեղուկ դրությամբ է, իսկ մնացածները՝ պինդ:

Բ. Սպիտակուցային նյութեր.— Սպիտակուցային նյութերից կաթի մեջ գտնվում են կազեինը կամ պանրանյութը, ալբումինը (լոոլ) և գլոբուլինը:

Պանրանյութն (կազեինը) այն է, վորը պանրի ե գտնում: Նա պանրի մերանի ազդեցության տակ մերվում, (մակարդվում) է. նույնը պատահում է, յերբ կաթի մեջ թթվուտ ենք ածում: Պանրանյութը կաթի մեջ լուծված չի, ինչպես շաքարը, այլ նա գտնվում է փքված և շաղընկած դրության մեջ, ինչպես ջրում բաց արած սոսինձը կամ սուլան:

Թարմ կաթը յեռացնելու դեպքում պանրանյութը թեղետ և չի կարվում, ինչպես ալբումինը, բայց իր հատկություններից շատերը փոխում ե: Որինակ յեփած կաթի մեջ նա պանրի մերանով լավ չի մակարդվում և այդ պատճառով յեռացրած կաթից մերանով պանրի չեն պատրաստում: Պանրանյութի քանակը կաթի մեջ տարբեր է, նա կազմում է կաթի $2^{1/2} 0/0$ -ը և յերբեմն նույնիսկ $30/0$ -ը: Շոռը, թանը, պանիրը և այլն զլխավորապես նրանից են բաղկացած: Կարփած կաթի պանրանյութը ձգվող, թելեր կազմող հատկություն ունի, վորի հիման վրա մեզանում պատրաստում են ջիլ կամ թել պանիրը:

Ալբումին կամ լոոլ.— Յերբ նոր սկսում են կաթը տաքացնել կաթի յերեսն սկզբում բռնվում է մի բարակ փառով կամ թաղանթով: Շատերը այդ թաղանթին սեր են ասում, բայց դա իրոք վոչ թե սեր է, այլ մեծ մասամբ կազմված է ալբումինից: Հետո այդ փառի տակը հավաքվում է սերը և կաթի յերեսը կապում սերոցի շերտով:

Ալբումինն իր բոլոր հատկություններով շատ նման է ձիվ սպիտակուցին. Նա յել տաքացնելուց ձվի սպիտակուցի նման կարվում, պնդանում է: Կաթի յերեսի փառն սկզբում համարյա միայն կարփած ալբումինից և բաղկացած: Կաթը յեփելուց հետո շատ անգամ ալբումինը կտած է լինում ամանի տակին: Նա գտնվում է նույնպես և պանրի շիճուկի մեջ հալված դրությամբ: Շիճուկը յեռացնելուց՝ ալբումինը շաղվում, կարփում է ու շիճուկի միջից դուրս գալիս: Դրան հայերեն ասում են լոոլ:

Կաթի մեջ ալբումին շատ քիչ կա, նա կաթի $1/2 0/0$ -ն է կազմում: Բայց նա դալի (մոր առաջին կաթը) մեջ շատ կա, նա կազմում է դալի 100 մասից միջին թվով մոտ 9 մասը, ամենաքիչը $4^{1/2}$, իսկ ամենաշատը 19 մասը: Ալբումինը կաթի մեջ հալված, լուծված դրությամբ և գտնվում, ինչպես և շաքարը:

Գլոբուլին.—Աս կաթի մեջ շատ քիչ քանակությամբ ե գտնվում. գալի մեջ ավելի շատ ե: Կաթը յեռալուց նա յել ալբումինի նման կտրվում ե: Գլոբուլինը կարելի յե պանրի շիճուկից առանձնացնել՝ շիճուկի մեջ վորոշ աղեր դցելով: Շիճուկը յեփելիս նա նույնպես կտրվում ու խառնվում ե լոսի հետ:

Դ. Կաթնաշաքարը կաթի մեջ գտնվում ե հալված դրությամբ: Սրա քանակը աարբեր ե լինում: Կաթի հարյուր մասից միջին հաշվով չորս ու կես մասը ($4^{1/2} / 0$) կաթնաշաքարն ե կաղմում: Կաթնաշաքարը զանազան մանրեների (բակտերիաների) շնորհիվ վտխվում ե և դառնում կաթնաթթու: Յերբ կաթի մեջ կաթնաթթվի քանակը փորոշ աստիճանից բարձր ե լինում, կաթի պահպանյութը կտրվում ե, այսինքն կաթը շաղվում ե:

Կաթնաշաքարը մեծ չափով անցնում ե պանրաշիճուկի մեջ և մասամբ ել պանրի մեջ ու մեծ դեր ե կատարում պանրի համելու գործում:

Դ. Հանքային մասեր կամ մոխիր. — Յեթե կաթը ցամաքացնենք և ստացված չոր նյութը լավ այրենք, կմաս մոխիրը, վորը բաղկացած ե զանազան հանքային նյութերից: Այդ հանքային նյութերը կարենը են մատղաշինղանիների մննդառության և նրանց մարմնի կաղմության համար: Թեպես մոխիր քանակը կաթի մեջ քիչ ե, բայց նրա նշանակությունը շատ մեծ ե պանրի պատրաստելու գործում: Ընդհանրապես կաթի կարենը հատկություններից մի քանիսը կախված են հանքային մասերից: Միջին հաշվով մոխիրը կաթի մեջ կաղմում ե համարյա $1^{1/2} / 0$, յերբեմն ել մի քիչ ավելի: Հանքային նյութերը չափազանց կարենը են հորթերի առողջ կաղմության համար:

II. ՄՅՈՒՄ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԱԹԵՐԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆԵՐԸ

1. Վոչիարի կաթը. — Վոչիարի կաթը ավելի թանձը ե, քան կովի կաթը: Համ ու հոտով նույնպես վոչիարի

կաթը տարբերվում է կովի կաթից: Այդ համն ու հոտն անցնում ե պանրին և յուղին: Վոչիարի կաթը կովի կաթից յուղալի յե, պանրանյութն ել ե ավելի: Որինակ՝ վոչիարի կաթի յուղը միջին հաշվով կազմում է $7^{1/2} / 0$ պանրանյութը $4^{1/2} / 0$ (այսինքն 100 մասից 7 մասը յուղ ե, իսկ 4 մասը պանրանյութ): Կաթի ամբողջ չոր նյութը $17^{1/2} / 0$ -ից ավելի յե: Այդ պատճառով մի փութ վոչիարի կաթից ավելի յուղ և պանրի ե ստացվում, քան մի փութ կովի կաթից: Որինակ՝ մի փութ չանախ պանրի համար զնում ե միջին թփով 6 փութ վոչիարի կաթ, իսկ նույն քանակությամբ պանրի ստանալու համար հարկավոր ե 8—9 փութ կովի կաթ: Վոչիարի կաթը մերկելու համար ավելի շատ պանրի մերան ե պահանջում, քան կովի կաթը: Վոչիարի կաթի յուղի գընդիկներն աւելի մանր են, քան կովինը և այդ ե յերեսի պատճառը, վոր վոչիարի կաթը դժվար ե արածան բւնում և դժվար ե սերգատով նրա յուղը ջոկվում: Վոչիարի կարագը շատ փափուկ ե, ճարպի հատկություն ունի և յերկար չի դիմանում ու սպիտակ—կապտավուն գույն ունի: Վոչիարի կաթից սովորաբար յուղ չեն պատրաստում, այլ վլխավորապես պանրի են պատրաստում, թեպես ամեն աեսակ պանիրների համար նրան գործ չեն ածում. որինակ՝ շվեյցարական պանրի համար, վորովինետե նրա կազեինը և յուղի հատկությունները կովի կաթի կազեինի և յուղի հատկություններից տարբեր են, այդ պատճառով նրանից խկական շվեյցարական պանրի չի ստացվում:

Մյուս կենդանիների կաթերի բաղադրությունը միջին հաշվով հետևյալն ե (Համեմատառության համար նորից բերում ենք նաև կովինը):

	կաթը պարունակում ե.					
	Առփի	Վոչխարի	Սյնի	Դոմի	Զիու	Իօի
Զուր	87,80	81,50	86,3	82,30	90,58	90,12
Յուղ	3,40	7,00	4,00	7,70	1,14	1,37
Կազեխն	2,70	4,30	3,60			
Ալբումին			4,80	2,05	1,85	
և այլն	0,70	1,30	1,00			
Շաքար	4,70	5,00	4,30	4,40	5,87	6,19
Մոլիբդ	0,70	0,90	0,80	0,80	0,36	0,47
	100,00	100,00	100,00	100,00	100,00	100,00

2. Գոմշի կաթը.—Գոմշի կաթը կովի կաթից յուղավի յեւ ու թանձր։ Յուղի թանձրության կողմից նաշատ մոտ ե վոչխարի կաթին, բայց վոչխարի կաթի յուրահատուկ համն ու հոտը չունի։ Գոմշի կաթը շատ սպիտակ ե։ Կարագը յերկար չի դիմանում, սպիտակ գույն ունի և ճարպանում ե։ Գոմշի կաթից յուղ շատ ե ստացվում, բայց յուղը իր հատկություններով կովի յուղից ցածր ե։

Մեր ժողովուրդը գոմշի կաթից մածուն ե մերում և յուղ հանում։ Գոմշի կաթը ավելի կորդ ե մերվում, քան կովինն ու վոչխարինը։ Ամենակորդ մածունն ստացվում ե դրանից։ Գոմշի կաթից մեզանում տեղ-տեղ պատրաստում են և տեղական պանիր, վորը իր հատկություններով հիշեցնում ե վոչխարի պանիրը։ Խտալիայում կան պանիրներ, վորոնք հատկապես գոմշի կաթից են պատրաստվում։ Գոմշի կաթի գործածության նկատմամբ վորձեր չեն արված։ Վորովինեաւ մեզանում գոմշը համեմատաբար քիչ են պահում, այդ պատճառով նրա կաթն ու կաթնամթերքները միայն տեղական, սահմանափակ նշանակություն ունեն։

3. Այծի կաթ։—Այծի կաթը համարյա նույն բաղադրությունն ունի, ինչ վոր կովի կաթը, բայց այդ կաթը այծի մարմնին հատուկ, անդուրեկան սուր հոտ ունի։

Այծի կաթից սովորաբար յուղ չեն պատրաստում, այլ գլխավորապես պանիր են պատրաստում։

III. ՆՈՐՄԱՆ ԿԱԹԻ ՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Գույնը։—Անարատ կաթի գույնը գեղնավուն ե։ Յերեսը քաշած կաթի գույնը, ընդհակառակն, սպիտակ կապտավուն ե։ Կաթի սպիտակ գույնն առաջ ե գալիս սպաներանյութից (կազեխնից) և յուղի գնդիկներից։ Կանաչ խոտով կերակրվող կովի կաթը գեղնավուն ե լինում, իսկ չոր խոտով և դարմանով մնան կովի կաթը սպիտակ տեսք ունի։

Թափանցիկությունը։—Կաթը թափանցիկ չե։ Անթափանցիկ լինելու պատճառն այն ե, վոր նախ յուղի գնդիկները չեն թողնում լույսն կաթի միջով (նրանք ինչպես ասում են, բեկում են կամ ծոռում են լույսի ճառագայթները) և ապա՝ կաթի կազեխնը հալված չլինելու պատճառով (չե վոր նա փոփած ե ու փռված) թույլ չի տալիս նույնպես, վոր լույսն մնան կաթի միջով։

Համը։—Թարմ ու անարատ կաթի համը քաղցրավուն ե։ Ամեն մի կենդանու կաթն իր հատուկ համն ունի։ Անարատ կաթն ուրիշ համ չպիտի ունենա, քան միայն «կաթնահամ»։ Կաթը շատ հեշտությամբ ուրիշ համ ե ընդունում (որ, ծխահամ), այդ պատճառով նրան պետք ե պահել միանգամայն մաքուր տեղ ու ծխից հեռու։

Հոտը։—Ամեն մի կենդանու կաթ իր հոտն ունի։ Կաթը հեշտությամբ ընդունում ե և ուրիշ առարկաների հոտը, այդ պատճառով հոտ արձակող առարկաների մոտ կաթ չը պետք ե պահել։

Կպչողությունը։—Մենք գիտենք, վոր կաթն ապակե ամանի մեջ կպչում ե պատերին։ Կաթի կպչող հատկությունն առաջ ե գալիս հատկապես պանրանյութից և յուղի գնդիկներից։ Վերջինները բարձրացնում են կաթի կպչող հատկությունը։ Վորքան յուղալի ե կաթը, այնքան

ել կպչուն ե նա: Բոլորն ել զիտեն, որինակ՝ վոր յերեսը քաշած կաթն այնպես չե կպչում ապակի ամանի պատերին, ինչպես յուղալի կաթը: Կաթի կպչողության չափը կախված ե և տաքության աստիճաններից: Սառը կաթն ավելի յե կպչող, քան տաք կաթը:

Ծանրությունը (տեսակարար կշիռը): Զրի համեմատությամբ կաթը ծանր ե: Որինակ՝ մի լիտր ջուրը կշռում է 1000 գրամ, իսկ մի լիտր կաթը, միջին հաշվով 1031 գրամ, ամենապակասը 1028 և ամենաշատը 1034 գրամ: Մեկ դույլ ջուրը կշռում է 30 ֆունտ, իսկ մեկ դույլ կաթը մոտավորապես 31 ֆ: Այն թիվը, վորը ցույց է տալիս, թե մի վորնե մարմին քանի անգամ է թեթև կամ ծանր միջնույն ծավալ ունեցող ջրից, կոչվում է տեսակարար կշիռ: (Տես գլուխ „Կաթի հետազոտություն“, 3): Քաշած կաթի տեսակարար կշիռը մեծ ե, անարատ կաթինը՝ փոքր: Նոր կթած կաթի տեսակարար կշիռը հին կաթի տեսակարար կշիռը փոքր ե:

Յեռման և սառուցման կետերը. — Ջուրը յեռում է Ցելսիուսի 100° -ում և Ռեոմյուրի 80° -ում, կաթը համարյա նույնպես. ջուրը սառչում է Ցելսիուսի և Ռեոմյուրի 0° -ում, կաթը՝ նույնպես:

Կաթի ու ակցիան. — Նոր կթած թարմ կաթը միաժամանակ ունի թթու և ալկալի ուեակցիա (ամֆոտեր ուեակցիա): Այդ նշանակում ե, վոր բոլորովին թարմ կաթը միաժամանակ ունի թթվի և ալկալու հատկություն:

IV. ԴԱԼ (ԿԵՆԴԱՆՈՒ ԱՐԱՋԻՆ ԿԱԹԸ)

Կենդանու առաջին կաթը (խակ կաթը) կոչվում է դար: Դան աչքի յե ընկնում նրանով, վոր մեծ քանակությամբ պարունակում է չոր նյութեր, վորոնց գլւխավոր մասը կազմում է ալբումինը: Ալբումինի քանակը համար է յերեմին $15\text{-}19^{\circ}/_0$ -ի: Իբրև հորթի առաջին

կեր, դալը շատ մնադարար ե և չափազանց հեշտ մարսվող, այնպես, վոր հորթերին անպայման հարկավոր ե դալ խմեցնել: Դան ունի և մի ուրիշ կարեոր հատկություն: Նա հորթի վորը բաց ե անուամ, աղիքները մաքրում այն բոլոր կեղտառառություններից, վոր հավաքվել են ամիսների ընթացքում մոր արգանդում յեղած ժամանակը, ուրիշ խոսքով՝ նա հորթի ստամոքսի և աղիքների վրա ազգում ե իբրև լուծողական և ոգնում ե մարսողությանը:

Դալը դեղին գույն ունի, աղի համ և սուր հոս: Դալը յեփելուց կտրվում, պնդանում և դառնում ե խիժ: Կտրվելու պատճառն ալբումինն է: Պանրի մերանը նրան չի մերում, իսկ յեթե յերեմին մերում ե, ապա միայն շատ թույլ և անկանոն: Դալից յուղ և պանրիր չեն պատրաստում, վորովինետե յուղ նրանից շատ դժվար ե դուրս գալիս, իսկ պանրիր չի ստացվում:

Դան որո՞րի վրա փոխում է իր հատկությունը և 3—4 որից հետո համարյա սովորական կաթի բնույթ ե ստանում: Բայց բոլորովին նորմալ կաթ դանալու համար հարկավոր ե սպասել 2 շաբաթ: Մեզ մոտ այդքան չեն սպասում, նույնիսկ շվեյցարական պանրագործության համար 7—8 որից հետո արդեն գործ են ածում: Բայց դա սխալ ե, վորովինետե յեթե կաթը, թեկուղ չնշին չափով, սովորականից տարբեր ե, շվեյցարական պանրի վրա կարող ե վատ ազդել, պանրիր կարող ե փշանալ: Մյուս տեսակ պանիրները, ինչպես որինակ՝ չանախ պանիրը՝ այնքան ել պահանջնություն չեն և նրանց համար կենդանին ծնելուց 8—9 որ հետո կաթն արդեն կարելի յե գործ ածել: Յուղ պատրաստելու համար կարելի յե գործադրել և 5—6 որից հետո:


V. ԿՈՒՐԾԸ ՅԵՎ ԿԱԹԻ ԳՈՅԱՆԱԼԸ

Կաթը գոյանում է կուրծի մեջ: Կուրծը յերկարությամբ բաժանվում է աջ ու ձախ մասի: Յուրաքանչյուր

մասն իր հերթին բաղկացած ենույնպես յերկու՝ առաջին և հետեւ մասերից, վորոնք, թեպետ վոչ մի բանով իրարից չեն բաժանված, բայց գործունեությամբ միանդամայն անկախ են: Այդ մասերից ամեն մեկը մի մեծ գեղձ է, վորի մեջ արտադրվում եւ կաթ: Յուրաքանչյուր գեղձ ունի մի պտուկ և մի կաթնաման կամ կաթնավազան, վորը գտնվում է պտուկից բարձր և լցվում եւ կաթով (Տես նկ. 3): Կաթնամանը միանում է պտուկի հետ մի լայն անցքով: Պտուկը փակվում է մի առանձին մկանով, վորը գտնվում է պտուկի ծայրին: Այդ փականքը նրա համար ե, վոր կաթը չթափախ: Յերեմն այդ մկանները

այնքան թույլ են լինում, վոր չեն դիմանում կաթի ճընշմանը և բացվում են ու կաթը հոսում է պտուկներից: Պնդակիթ կովերի պրտուկների անցքը նեղ և ու մկանները հաստ են և ուժեղ, այդ պատճառով ել նրանք դժվար են


Նկ. 3. Կովի կուրծի կորպածքը:
ա—կաթնագեղձիներ, բ—կաթնատար խողովակներ, կթվում:
ե—կաթնավազան, դ—պտուկ:



Ինչպես առա-

ցինք, չորս մեծ գեղձերից յուրաքանչյուրը գործում է միանդամայն անկախ մյուսներից: Ամեն մի գեղձ բաղկացած է վորկուկանման փոքր գեղձերից, իսկ սրանք, իրենց հերթին, բաժանվում են ավելի մասն գեղձիկների: Սրանց ներսը գտնվում են ալվեոլներ, կամ մասն բշտիկներ, վորոնց պատերը բաղկացած են կաթ արտադրող բջիջներից (Տես նկ. 4): Կաթնատվության շրջանում այդ

բջիջներն սկսում են աշխատել և կաթ պատրաստել արյան բերած մննդարար նյութերից: Յերբ բջիջները լցվում են կաթով, կաթն անցնում, թափվում եւ բշտիկի մեջ: ¹⁾ Այս տեղից կաթը հոսում է բարակ կաթնատար խողովակներով և թափվում կաթնավազանի մեջ:



Նկ. 4. Կաթնագեղձիկների բշտիկը կաթնատվության շրջանում խոշորացուցիչ պականը բշտիկի պատերը բաղկացած կուրծի կազմի մեջ մտնում են ճարպան կաթնատարագող բջիջներից: (Հաստացած):

Կուրծի ամբողջ փափուկ մասը բաղադասական գաղաքանը կացած է մասն գեղձիկներից: Սակայն տակ, բշտիկի պատերը բաղկացած կուրծի կազմի մեջ մտնում են ճարպան կաթնատարագող բջիջներից: Են և մկանային հյուսվածքներ, վորոնք մեծացրածներ: յերեմն կուրծի խոշոր մասն են կաղմում: Ճարպով և մկանային հյուսվածքով (մսով) հարուստ կուրծը պինդ է լինում: Կթելուց հետո չի փոքրանում և ցույց է տալիս, վոր կովը կաթնառատ չե: Ընդհակառակն՝ գեղձերով առատ, փափուկ կուրծը կաթնառատության նշան է:

Կաթնատվության շրջանում գեղձերը միշտ կաթ են արտադրում, բայց նրանց գործունեությունը կանգ է առնում, յերբ կաթնավազանը, կաթնատար խողովակներն ու բշտիկները կաթով լցվում են: Կաթ արտադրող բջիջները, կարծես, խեղդվում են ու դադարում գործելուց: Կթի ժամանակ, յերբ հիշյալ կաթի անօթները գատարկվում են, գեղձերը նորից սկսում են կաթ արտադրել: Ուրեմն վորքան ցամաք կթվի կովը, այնքան ավելի հսարավորություն կտրվի գեղձերին շատ կաթ արտադրելու:

Կաթի արտադրության վրա խոշոր չափով ազդում է և կթելու գրգիռը: Կաթի մեծ մասը գոյանում է կթելու

1). Թե արդյոք, կաթ պատրաստելուց հետո բջիջները պոկվում, քայքայվում են, հեղուկանում ու նրանց տեղը նորերն են առաջանում, կամ թե պատռվում են ու իրենց միջից դուրս թողնում կաթը, կամ դուցե մի այլ ձևով եւ կաթը բջիջներից դուրս գալիս՝ դեռ վերջնականորեն ծառագած չե: Խ. Յեր.

լու միջոցին, ճիշտ այնպես, ինչպես թուքն առաջանում է ուտելու ժամանակ։ Ուրեմն, կթելը մեծ նշանակություն ունի և այդ արվեստն ամեն մի կթող պետք է լավ սերտի ու կանոնավոր կերպով գործադրի։ (Կարդա VII զլուխը, կթելու մասին):

Կաթի առաջին կաթիլները ջրալի յեն, իսկ վերջինները շատ յուղալի։ Ցամաք կթելով մենք շահում ենք այն, վոր վերջին յուղալի մասն ամբողջովին անցնում է կաթի մեջ, իսկ հակառակ գեպքում՝ մնում է ներսը, վորի պատճառով կաթը ջրալի յե դուրս գալիս և գեղձերը թուլանում, կաթը, լավ չեն արտադրում։ Կաթի վերջին շիթերի յուղալի լինելու պատճառն այն է, վոր յուղի գնդիկները, մանավանդ նրանց խոշորները, կաթնատար խողովակներով անցնելիս դեմ են առնում պատերին, խցկում, կուտակվում են և առաջ չեն գնում։ Միայն մանր գնդիկների մի աննշան մասն է կարողանում անցնել կաթնավազան։

Կթելու ժամանակ շնորհիվ բջիջների արագ աշխատանքի ու կաթի ուժեղ հոսանքի, յուղի գնդիկները պատերից պոկլում են ու անցնում կաթի հետ խողովակներով դեպի դուրս։

VI. ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԲՐ ԵՆ ԱԶԴՈՒՄ ԿԱԹԻ ՔԱՆԱԿԻ ՅԵՎ ՎՈՐԱԿԻ ՎՐԱ

1. Առանձին կենդանիների անհատական և յեղական հատկությունները.— Կենդանու անհատական ու յեղական հատկություններից են գլխավորապես կախված կաթի քանակն ու վորակը։ Կան յեղեր, վորոնք ընդհանուր առմամբ կաթնառատ են և քիչ թե շատ բավարար պայմաններում նրանք ամեն մի մննդանութ, վոր ապրելու կարիքը հոգալուց հետո մնում են նրանց տրամադրության տակ կգործադրեն կաթ պատրաստելու համար։ Սակայն կան յեղեր, վորոնց վորքան ել լավ կերակրենք այնուամենայնիվ շատ կաթ չեն տալ։

Որինակ՝ տավարի ցեղերի մեջ միշտ ել կարելի յե համդիպել այնպիսի կովերի, վորոնց հատկությունները նման չեն ցեղի հատկություններին։ Որինակ՝ կաթնառատ հոլանդական ցեղի մեջ այնպիսի կովեր են պատահում, վորոնք շատ քիչ կաթ են տալիս։ Մեր սովորական տավարի մեջ շատ հաճախ պատահում են կովեր, վորոնք որական, նույնիսկ մինչև 1 փութ կաթ են տալիս, թեպետ բոլորիս ել հայտնի յե, վոր մեր տեղական կովերի որական կաթի քանակը միջին թվով համում է 5—8 ֆունտի։

Այս ամենից յերեսում է, վոր կաթի քանակն ու վորակը վորոշողը վերջու կենդանու անհատական և ցեղային հատկությունն եւ։ Կերակրումն ու խնամքը՝ միայն ոժանդակում են՝ յեթե կանոնավոր են տարվում, և խանդարում են՝ յեթե տարվում են անկանոն։

2. Կաթնատվության շրջան՝ Այս ժամանակաշրջանը, վորի ընթացքում կենդանին կաթ ե տալիս, այսինքն սկսած կենդանու ծնելու որից մինչև ցամաքելը, կոչվում է կաթնատվության շրջան։ Կաթնատվության շրջանի սկզբում կենդանին սովորաբար կաթ շատ ե տալիս, իսկ հետո, կամաց՝ կամաց կաթի քանակը պակասում է և վերջը կենդանին ցամաքում եւ։ Առատ և կանոնավոր կերակրելու միջոցով կարելի յե կաթի սկզբնական քանակը պահել անփոփոխ համարյա մինչև ցամաքելու որելը, սակայն այս բանը չի հաջողվում, յեթե ժամանակին կանոնավոր խնամքը չի յեղել, և կենդանին արդեն զգալի չափով պակասեցրել է կաթը։ Այս դեպքում վորքան ել առատ կերակրենք կենդանուն, այնուամենայնիվ չենք կարող կարճ ժամանակում նորից կաթը հասցնել իր սկզբնական չափին։ Բայց լինում են և բացառություններ, վորոնք պետք ե վերագրել կենդանու առանձնահատկություններին։

3. Կերը և կերակրելը. — Թեպետ կենդանու անհատական և ցեղական հատկությունները վճռական դեր են խաղում կաթի գոյանալու և վորակի մեջ, բայց և այնպես կանոնավոր կերակրելով միայն կարելի յե հասցնել կատարյալ զարգացման կենդանու բնական ընդունակությունները և ընդհակառակն, անկանոն և վատ կերակրելով կենդանու կաթսատվության ամենալավ ընդունակությունները կարելի յե թուլացնել և նույնիսկ բոլորովին մեռցնել: Կանոնավոր կերակրելը հսարավորություն ե տալիս կաթսատվության ամբողջ շրջանում կաթի քանակը պահպանել, առանց զգալի փոփոխության յենթարկելու այն՝ նույնիսկ վերջին ամիսների ընթացքում:

Կանոնավոր կերակրելով կարելի յե հնակիթ կենդանիների կաթը նույնիսկ կրկնապատկել, այն ել վոչ թե միայն ամառն ու գարնանը, այլ և աշնանն ու ձմբանը:

Բացի կանոնավոր կերակրելուց, առանձին կերերը նույնպես առանձնահատուկ ազդեցություն են թողնում կաթի քանակի վրա: Հայտնի յե, որինակ՝ վոր ճակնդեղը (տակը, բազուկը) կաթ շատացնող հատկություն ունի, նույն հատկությունն ունի նաև կանաչ խոտը և այլ կերեր: Հայտնի յե նաև, վոր ուժեղ կերերը, ինչպես, որինակ՝ թեփը, քուսպը, ալյուրը, բամբակի սերմը և այլն, մեծ քանակությամբ սպիտակուցային նյութեր են պարունակում և ընդունակ են նույնպես ավելացնել կաթը: Յեվ ընդհակառակն, սպիտակուցային նյութերով աղքատ կերերը (որինակ՝ դարմանը, ճկուտի խոտը և այլն) այդ հատկությունը չունեն:

Կաթի վորակի վրա տարբեր կերեր տարբեր ձեռվ են ազդում: Որինակ՝ յուղի քանակը կաթի մեջ սովորաբար պակասեցնում են այն կերերը, վորոնք ոսլայով և շաքարով հարուստ են, ինչպես որինակ՝ ճակնդեղը: Կանաչ յեղիպտացորենը (սիմինդը) կաթի յուղի քանակի վրա նույնպես պակասեցնող ազդեցություն ունի: Սպիտակու-

ցային նյութեր պարունակող կերերը, սովորաբար, ավելացնում են կաթի յուղի քանակը, թեպետ այստեղ ել շատ հաճախ բացառություններ են լինում: Որինակ՝ շաքարառատ կամ ոսլառատ կերեր, վորոնք կաթի յուղն ավելացնում են, և կան սպիտակուցառատներ վորոնք չեն ավելացնում: Ինչպես յերեսում ե, յուղի վրա ազդում են վոչ միայն առանձին սննդանյութերը, այլ և մանավանդ կերերի առանձնահատկությունները, այսինքն կան կերեր, վորոնք կաթի յուղն ավելացնելու կամ պակասեցնելու զորություն ունեն:

Կերը կաթի մյուս հատկությունների վրա յել ե ազդում: Որինակ՝ կան կերեր, ինչպես զանձիլը կամ զանձլամերը, վոր իրենց համն ու հոտը տալիս են կաթին: Սրանց նման կերեր շատ կան: Կան նաև կերեր, վորոնք այնպես են ազդում կաթի վորակի վրա, վոր այդպիսի կաթից լավ յուղ չի ստացվում, կաթը շուտ շաղվում ե, լավ չի մերժում և լավ պանիր չի ստացվում: Զանազան կերերի նկատմամբ զգայուն ե մանավանդ շվեյցարական պանիրը, վորի պատրաստելու ժամանակ կովերին չի կարելի արածեցնել ճկուտ, ճահճոտ տեղերում, չի կարելի թթու կեր տալ, կամ մեծ չափով քուսպ, կարտոֆիլ, ճակնդեղ և այլ կերեր:

4. Յուլով գալը (բերգալը). — Յուլով գալը և հղիությունը վորոշ չափով ազդում են կաթի քանակի և վորակի վրա: Բերգալու ժամանակ յերբեմն կաթը աննշան պակասում ե, նույնը պատահում ե և կաթի յուղի հետ: Կաթը ժամանակավորապես փոխում ե իր հատկությունը և հետո նորից լավանում ե, յերբ հովանում ե կովը: Բերգալու ժամանակ կաթը պանրի մերանով կանոնավոր չի մերժում ու կորդանում, այլ ավելի շուտ շաղվում ե: Կարագն ել լավ չի ստացվում: Յերբեմն կաթը կտրվում ե յեփելուց: Բայց յերբեմն այդ ամենը տեղի չի ունենում,

այսինքն յերբեմն բերդալը բոլորովին կաթի քանակի և պորակի վրա չի ազդում։ Կովի առանձնահատկությունները, ինչպես յերեսում ե, այստեղ ել մեծ դեր են խաղում։

Համենայն դեպս ցուլով յեկող կովերի կաթը չպիտի խառնել ընդհանուր կաթի հետ պանիր պատրաստելու ժամանակ, մանավանդ շվեյցարական պանիր պատրաստելիս։

5. Կենդանու հասակը.—Կովի կաթնատվությունը առաջին ծնից սկսած՝ հետզհետե բարձրանում և ամենամեծ չափին համար ե 5-րդ և 6-րդ ծնի ժամանակ։ Այնուհետև կաթի քանակը աստիճանաբար սկսում է պակասել։ Յուղը պակասում է ավելի քիչ չափով։ 8—9 ծին կովերը, սովորաբար, այնքան պակասեցնում են կաթը, վոր կովերը, սովորաբար, այնքան պակասեցնում են կաթը, վորչարժե դրանց պահել։ Սակայն լինում են և այնպիսի կովեր, փորոնք կաթի քանակը զգալի չափով չեն պակասեցնում, նույնիսկ ավելի ծեր հասակում։

6. Զբոսանք ու աշխատանք.—Բազմաթիվ փորձերով հաստատված ե, վոր մանգալը նպաստում է կաթի արտադրությանը, յեթե ինարկե, դա չի հոգնեցնում և ձանձրացնում կովին։ 2—3 ժամվա հանգիստ զբոսանքը միշտ լավ է ազդում, իսկ յերկար ճանապարհ անցնելը զգալի չափով պակասեցնում է կաթի քանակը։ Այդ պատճառով հեռու ընկած արոտներն աննպաստ են կաթնատվության համար։ Վատ է ազդում կաթնատվության վրա մանավանդ քոչն իր յերկար և դժվար ճանապարհներով։

Յերեքն լծում են կթի կովերին ու մատակներին։ Այդ առթիվ կատարած փորձերը ցույց են տվել, վորթեթև աշխատանքը չի պակասեցնում կաթի քանակը, այլ ընդհակառակն, յերեքն նույնիսկ ավելացնում է, իսկ ծանր և մանավանդ յերկարատև աշխատանքը՝ զգալի չափով պակասեցնում է կաթի քանակը։

7. Տարվա յեղանակները.—Նկատված ե, վոր գարնան ամիսների կաթն ավելի ջրիկ է լինում, քան

աշնան ամիսներինը։ Կաթի քանակը, կարծես, նույնպես փոփոխական է տարվա յեղանակների հետ։ Ապրիլ-հունիս ամիսներին կաթն ավելի շատ է ստացվում, քան մյուս ամիսներին։

8. Որվա յեղանակը.—Որվա յեղանակի ազդեցությունը կաթնատվության վրա մեծ է։ Շատ ցուրտ և շատ տաք յեղանակը պակսեցնում է կաթը և, ընդհակառակն, բարեխառն յեղանակը նպաստում է կաթի ավելանալուն։ Անձրեվի կամ կարկուտի տակ ընկած կովերի կաթի քանակն իսկույն պակասում է։ Գոմի տաքության աստիճանը նույնպես ազդում է կաթի վրա։ Ցուրտ գոմը պակսեցնում է կաթը։ Գոմի ամենալավ ջերմությունը պիտի համարել 12° — 14° Ցելսիուսի։ Դրանից ցածու բարձր աստիճանները կաթի քանակի վրա վատ են ազդում։

9. Խնամքը.—Խոշոր նշանակություն ունի կովի խընամքը։ Կաշվի մաքրությունը նպաստում է կաթի բարձրացման իսկ կեղտոտությունը պակսեցնում է կաթի քանակը։ Մաքուր կաշին լավացնում է շնչառությունը և մննդառությունը, վորի շնորհիվ ավելանում է և կաթի արտադրությունը, այդ պատճառով կովատերը պետք է ամենոր մաքրի իր կովի կաշին։ Ահազին նշանակություն ունի կովի հետ վարկելու ձեր։ Կոպիտ վերաբերմունքը, ծեծը պակսեցնում է կաթը, քնքույշ, մեղմ վերաբերմունքն, ընդհակառակն, նպաստում է կաթի ավելանալուն։

Կովի ամեն մի սովորության խախտումը աննպաստ կերպով և անդրադառնում կաթնատվության վրա։ Այդ պատճառով ել հարկավոր է կերակրելու, կթելու, ջուր տալու, գոմ քերելու, կաշին մաքրելու և այն աշխատանքների համար սահմանած ժամերն անփոփոխ թողնել կամ, համենայն դեպս, հաճախ չփոփոխել։

VII. Կ Թ Ե Լ Ը

Կթելն այն աշխատանքներից ե, վորոնք մեծ ազդեցություն ունեն կաթի քանակի և վորակի վրա:

Փորձը ցույց ե տվել, վոր հաճախակի կթելուց կաթն ավելանում ե, որինակ՝ որական յերեք անգամ կթելիս շատ կաթ ե ստացվում, քան 2 անգամ, 4 անգամ կթելիս ավելի շատ կաթ ե ստացվում, քան 3 անգամ կթելուց և այլն: Սակայն այստեղ ել վորոշ սահման կա: Շատ անգամ դժվար ե գլուխ բերել 3 կամ 4 անգամ կթելը: Բացի դրանից հաճախակի կթելը մեծ մասամբ ծախսը չի հանում, վորովինետև ավելացած կաթը շատ չի լինում, այդ պատճառով միտք չունի կովն որական յերկու անգամից ավելի կթել մասնավանդ մեր տեղական կովերը, վոր այնքան ել կաթնառատ չեն:

Նշանակություն ունի և այն, թե մեկ կիթից մինչև մյուս կիթը վորքան ժամանակ ե անցել կամ վորքան ընդմիջում ե յեղել յերկու կիթերի մեջ: Վորքան ընդմիջումը կարծ ե, այնքան ել կաթը յուղալի յելինում, թե պետ կաթի քանակը պակաս ե ստացվում, իսկ վորքան ընդմիջումը յերկար ե տևում, այնքան համեմատաբար կաթը շատ ե ստացվում, բայց ջրիկ ե լինում: Իսկ յեթե յերկու կիթերի մեջ հավասար ժամանակ ե անցնում, այն դեպքում ստացվում ե մոտավորապես հավասար քանակությամբ կաթ և յուղ: Յերբեմն ինարկե, լինում են և բացառություններ:

Ա. Կթելու ձեզ.— 1. Կաթը պիտի կթել մինչև վերջին կաթիլը, այսպես վոր կուրծը բոլորովին դատարկվի: Պետք ե հիշել վոր վերջին կաթը շատ յուղալի յե, այդ պատճառով ամեն մի կաթիլը թանգ արժե և չպետք ե թողնել, վոր կրծում մնա: Բացի դրանից, մաքուր կթելուց կաթ շատ ե ստացվում:

2. Կթել հարկավոր ե միալար և արագ: Դանդաղ կամ փոփոխակի արագությամբ կթելը պականանում ե կաթը:

3. Կաթի առաջին հոսանքը, վոր համարյա յուղ չունի, լավ ե կթել գետնին, քանի վոր նրա կաթիները կեղտոտ են և յեթե մնան կաթի մեջ՝ կարող են փչացնել ամբողջ կաթը: Սրանք անցնելով պտկի միջով մաքրում են նրա ծայրն ու անցքը կեղտոտությունից և բակտերիաներից (Տես հետևյալ գլուխը): Յեթե ընդունված ե, վոր կթելուց առաջ հորթը ծծի, այն դեպքում, ինարկե միտք չունի առաջի կաթիները գետնին կթել: Բայց լավ կինի առաջին ծծելուց հետո մաքրել պտուկները և ապա կթել:

4. Կթելու ժամանակ կովը պետք ե հանգիստ լինի ու կեր չուտի:

5. Պետք ե աշխատել, վոր կով կթողը մշտապես լինի միենույն մարդը և չփոխվի շուտ-շուտ: Կովն ում սովորում ե՝ նրան ել կաթ ե տալիս, խամ, անծանոթ մարդկանց նա կասկածով ե վերաբերվում և աշխատում ե կաթ չտալ:

6. Կովի հետ պետք ե վարվել չափազանց քնքույշ և մեղմ: Վոչ բարկացիր, վոչ ել ծեծի, այլ քնքությամբ մոտեցիր, քորիր, փայփայիր նրան, ունույն քնքությամբ կթիր և հեռացիր նրանից: Կովն այդպիսի վերաբերմունքը գնահատում ե, ընդունում ե կթողին իրեն իր բարեկամ և առատորեն կաթ ե տալիս: Կոշտ ու կոպիտ վերաբեր մունքը հակառակ հետևանք ե ունենում. կովը կաթը պահում ե, ել չի տալիս:

7. Կթելուց առաջ պետք ե անպայման ձեռքերը լվանալ սապնով ու ցամաքեցնել: Կեղտոտ ձեռքերով կարելի յե վարակել կովի պտուկները և կեղտոտացնել կաթը:

8. Կթելուց առաջ հարկավոր ե կրծի վրա կպած կեղտերը պոկել և շորով սրբել, հարկավոր և քորելով մանգալ թե կրծի վրա կամ շեքերում տիգեր կան, թե չե: Բոլոր տիգերը հարկավոր ե պոկել ու պոկած տեղերը քորել, վոր կովը հանգստանա:

9. Կթելուց առաջ հարկավոր ե պտուկները լվանալ գոլ ջրով ու ցամաքացնել: Թաց պտուկները յերբեք չպետք ե կթել, այլ պիտի ցամաքացնել ու այնպես կթել: Թաց կթելուց պտուկի կաշին թուլանում ե, ճաքում և հիվանդանում:

10. Կթելու ժամանակ շատերը պտուկները թրջում են կաթով ու այնպես կթում: Դրանից վատ բան չկա. թե կաթն ե կեղտոտավում, թե պտուկները թացությունից փշանում են, ճաքում և թե կաթի մասերը մնալով պտուկների վրա՝ թթվում են, հոտում և հեաեյալ անգամ վարակում են կթած կաթը: Ուրեմն՝ կաթով յերբեք չպետք ե թաց անել պտուկները: Շատերը պտուկները թաց են անում և թքով: Այդ պետք ե խստիվ արգելել վորովիետն բացի պտուկների հիվանդանալուց թքի միջոցով կարելի յե վարակել կաթը մարդու համար հիվանդաբեր միկրոբներով, վորոնք կարող են անցնել մարդուն կաթի, յուղի և պանրի միջոցով ու հիվանդացնել նրան:

Մեզանում, շատ աեղերում պտուկները լվանում են, բայց կեղտոտ ջուրը թողնում են կովկիթի մեջ և վրան կթում կաթը: Պարզ ե, վոր կեղտոտ ջուրը փշացնում ե կաթը, ուրեմն այդ յերբեք չպետք ե անել այլ կեղտոտ ջուրը պետք ե թափել, ամանը մաքուր ջրով վողողել և ապա կթել:

11. Լավ կթողը պետք ե իմանա, մանրամասնորեն ծանոթ լինի, թե ինչպես ե հորթը ծծում, ինչպես ե նա բերանով բռնում պտուկը և ինչպես ե նա յերբեմն դնչով կուրծին խփում:

Ինչպես հորթն ե անում, այնպես ել պետք ե աշխատի անել կթողն իր ձեռքով:

12. Պտուկներն ավելի նպատակահարմար ե բռնել բռունցքով և վոչ թե մատների ծայրով: Ամբողջ ձեռքով բռնելիս հնարավոր ե լինում ձեռքում պահել ամբողջ պտուկը

և բացի դրանից սեղմել և կրծքի ներքեմ մասը, վորը պտկի շարունակությունն ե կազմում: Մոտավորապես այդ ձեռվ ե բռնում և հորթը:

Կթելու ժամանակը յերբ կաթն սկսում ե պակասել, հարկավոր ե յերբեմն մեղմ կերպով ներքեմից վերև յերկու ձեռքով պտուկները բռնած՝ զարկել կրծին, ինչպես հորթն ե անում (դուրդմա տալ) և շարունակել նորից կթել:

13. Փորձը ցույց ե տվել, վոր միենույն չե, թե վոր պտուկները պետք ե իրար հետ միաժամանակ կթել:

Կթողին նայող յերկու պտուկները (մեկն առաջինը և մեկը հետեւինը) միասին կթելիս կովը այնքան կաթ չի տալիս, վորքան խաչաձև (խաչփառ) կթելու ժամանակ:


Խաչաձև կամ խաչփառ ձեն այն ե, յերբ կթողին նայող առաջի պտկի հետ միասին կթվում ե հակառակ կողմի հետեւի պտուկը:

Շատ լավ արդյունք ե ստացվում նաև յերբ կթում են առաջի յերկու և հետեւի յերկու պտուկները միասին: Շատերը այս ձեր գերադասում են խաչփառ ձեից:


Բ. Կովկիթներ.—Մեզ մոտ ընդունված պղնձե կովկիթները, բաղյաները, հարմար չեն. նախ փոքր են, կարճ և հետո տակը կոլորաձև լինելու շնորհիվ հաստատանիստ չեն, հեշտությամբ շուռ են գալիս: Բերանը լայն ե, քան հատակը և բակտերիաներին ու քամու բերած կեղտի ու փոշուն ավելի մեծ նարավորություն ե արվում ընկնելու կաթի մեջ: Ավելի լավ են գույլի (վեդրոյի) նման կովկիթները, վոր շինվում են սպիտակ յերկաթից, կամ անդվական կայակած յերկաթից:

Կովկիթները շինվում են թե կոլոր ձեր և թե տափակ, յերկու կողմից հուպ տված (Տես նկ. 5, 6 և 7): Յերեմն շինում են և դնչով: Յերկու կողմից հուպ տված

կովկիթը նրանով ե լավ, վոր գրան կարողանում են պահել
գոտների արանքում, գետին չեն դնում, վոր տակը չկեղ-



Նկ. 5 և 6. Կոլոր և դնչափոր կովկիթներ։



Նկ. 7. Տափակ կովկիթ։

VIII. ԻՆՉ ԵՆ ԲԱԿՏԵՐԻԱՆԵՐԸ ՅԵՎ ԻՆՉ ԴԵՐ ԵՆ ԿԱՏԱ- ՐՈՒՄ ԿԱԹՆԱՑՆԵՍՆԵՍՈՒԹՅԱՆ ՄԵԶ

1. Այս, ինչ ամեն որ տեսնում ենք.—Մի
բանի վոր սովորում ենք, նա մենք սովորական բան ենք
համարում և կարծում ենք, վոր հենց այդպես ել պետք ե-

լինի: Վոչ զարմանում ենք, վոչ ել ցանկանում ենք պատ-
ճառներն իմանալ:

Որինակ՝ ով չի սովորական բան համարել կաթի թթվելը,
և ով ե ցանկացել դրա պատճառն իմանալ: Հազարից մեկը:
Բոլորովին քաղցր կաթը լցնում ենք ամանի մեջ և մի
քանի ժամ չանցած նա իրեն-իրեն կտրվում ե, շաղվում
է: Ի՞նչն ե պատճառը:

Մենակ կաթի շաղվելը կամ թթվելը չե: Կան և ուրիշ
շատ յերկույթներ, վորոնք մեր աչքի առաջ կատարվում
են: Հում ու գոլ կաթի մեջ պանրի մերան ենք գցում և
կաթը մի քանի բոպեյից հետո մերվում (մակարդկում)
ե: Յեփած ու տաք կաթի մեջ մածնի մերան ենք գցում,
կաթը մի քանի ժամից հետո մածուն ե զառնում: Թարմ ու
քաղցր կարագը յեթե մի քանի որ անալի ենք, թողնում
կծվում ե, անալի պանիրը մի կողմից կծվում ե, մյուս
կողմից հոտում և հետո ել բորբոսնում ե:

Խմորից հաց ե ստացվում, բայց յեթե հացը յերկար
մնում ե՝ ծաղկում ե: Խաղողի քաղցունից (շիրայից) գինի
յե գոյանում, գինին թթվում ե, քացախ ե զառնում:

Վերջապես, ով չգիտե, վոր միսը, ձուն, ձուկը կհոտեն,
յեթե յերկար ժամանակ հում պահվեն:
Սրանց նման շատ յերկույթներ են տեղի ունենում ամեն
որ թե մեր տանն ու դունը, աչքի առաջ, և թե բնու-
թյան մեջ:


2. Ինչն ե այդ ամենի պատճառը.—Հարց ե
ծագում, ինչից են առաջանում այդ բոլոր յերկույթները՝
թթվելը, շաղվելը, մերվելը, յեռումը կամ խմորումը, բոր-
բոսնելը փտելը, հոտելը և այլն:

Գիտնականներն այդ հարցով շատ են զբաղվել, բայց
այդ հարցին կարողացել են ճիշտ պատասխան տալ միայն
այն ժամանակ, յերբ հնարել են խոշորացույց գործիքը
(մանրադիտակը) կամ, ինչպես ասում են ուսար բա-
ռով, միկրոսկոպը: Միկրոսկոպը մի գործիք ե և ունի այն-
պիսի ապակիներ, վորոնց միջով յեթե նայում ենք, ամե-

Նափոքը առարկաները շատ մեծ են յերեսում, յերբեմն մի քանի հարյուր կամ հազար անգամ մեծ։ Մի բարակ մազը մանրադիտակի տակ մի հաստ փայտի չափ է յերեսում։

Յեթե թթված կաթի շիճուկից մի կաթիլ դնենք ապակու վրա և նայենք միկրոսկոպով, կտեսնենք նրա մեջ բազմաթիվ մանր եակներ, վորոնք տարբեր են. յերկար, բարակ, կարճ, հաստ, կողոր, մեծ, փոքր, շարժվող, անշարժ և այլն։ Մի տեսակից շատ ե, մյուսից քիչ։ Նույնպես մանր եակներ կտեսնենք, յեթե վերցնենք մի կաթիլ քացախ, յեփող գինի և այլն։ Այդ եակներն այնքան մանր են, վոր մի ասեղի սուր ծայրի վրա կարող են միլիոնավոր եակներ տեղափորվել։

Այդ ամենը յերբ գիտնականները տեսան, հարց տվին՝ չինի՞ թե կաթի թթվելը, շաղվելը, գինու կամ քացախի խմբումն առաջացնում են այդ մանր եակները, վորոնք հասարակ աչքով չեն յերեսում, բայց շատ լավ յերեսում են միկրոսկոպի տակ։ Յեկ յերբ գիտնականները բազմատեսակ փորձեր և քննություններ կատարեցին՝ վերջնականապես համոզվեցին վոր, իսկապես, վերեսում հիշած բոլոր յերեսութիւնների պատճառն այդ մանր եակներն են (Տես նկ. 8)։



նկ. 8. կաթի միջի բակտերիաները խոշորացույցի տակ.
ա. մաքուր կաթը (բակտերիաները քիչ են); բ. շուկայի սովորական կաթը (բակտերիաները շատ են); գ. կեղոտու կաթը. (բակտերիաները չափազանց շատ են և բազմատեսակ); դ. հիվանդու կաթը, միքը զանազան տեսակ բակտերիան. (700 անգամ մեծացրած)

Դրանց մանր լինելու պատճառով գիտնականներն անշահացին մանրեներ կամ ոտար բառով միկրոբներ։ Դրանք

նույնպես բազմատեսակ ու բազմացեղ են ինչպես և բույսերն ու կենդանիները։ Մանրեների ամեն մի տեսակն իրեն հատուկ ձև ունի և ուրիշներից տարբերվում է։ Այդ տարբերության համար մի տեսակին բակտերյա յեն անվանում, մյուսին՝ բացիք յերրորդին կոկի և այլն։ Կաթի և կաթնամթերքների մեջ բակտերիաներն ավելի շատ են պատահում, քան ուրիշ տեսակները, այդ պատճառով ել մենք հեշտության համար բոլորին ել բակտերիա յենք ասելու։

3. Վորտեղ են գտնվում բակտերիաները։ Բակտերիաները գտնվում են ամեն տեղ, ողում, հողի մեջ, քարերի, ծառերի, բույսերի վրա, ջրի մեջ, ամեն տեսակ առարկաների վրա, կենդանիների կաշվի, կրծի, պատկերի և մարմնի ամեն մի մասի վրա, խոտի մեջ, գոմի ողում, մեզի և թրիքի մեջ, մարդու բերանում, ստամոքսում, ձեռների, շորերի վրա և այլն։

Ոդից, ջրից, ամանից, ձեռներից, կենդանիների կաշվից և այլ առարկաներից բակտերիաներն ընկնում են կաթի, գինու և այլ նյութերի մեջ և առաջացնում են այն յերեսությները, վորոնց մասին արդեն խոսել ենք վերը։

4. Ինչպես են ապրում բակտերիաները։ Բակտերիաները կենդանի արարսաներ են, նրանք ել շընչում ու սննունդ են ստանում, ինչպես և կենդանիներն ու բույսերը։ Կան բակտերիաներ, վորոնք շաքարով են մնվում, կաթով, հողով, մատվ և այլ նյութերով ու փոփոխության են յենթարկում կամ քայքայում են նրանց, ուրիշ խոսքով՝ տարրալուծում են նյութերը։ Որինակ խաղողի շաքարն ուտելիս նրանք առաջացնում են մի կողմից սպիրտ, մյուս կողմից ել գազ։ Կաթի շաքարն ուտելիս նրանք մի կողմից արտադրում են թթու, վորից կաթը կտրվում է, մյուս կողմից ել գազ և այլն։ Ամեն ինչ նրանք այդպես տարրալուծում են։

5. Ինչպես են բակտերիաները բազմանում և աճում։ Նրանց բազմանալը շատ հասարակ ձևով ե

կատարվում։ Փոքրիկ բակտերիան մեծանում է և յերբ հասնում է իր ցեղին հատուկ մեծությանը, այլևս չվ մեծանում, այլ կիսից կտրվում դառնում է յերկու հատ. այդ յերկուսը նորից իրենց հերթին մեծանում են ու նորից կիսվում և այդպես շարունակ։ Կան բակտերիաների տեսակներ, վորոնք յերբ ընկնում են ցուրտ կամ մի փորսե աննպաստ պայմանի մեջ, կուշ են գալիս և նրանից ամեն մեկը պատվում է պինդ, դիմացկուն կեղեռվ (կճեպով)։ Այդ կեղեռի մեջ բակտերիաները յերկար կարող են մնալ և այդ գրությամբ զրանք կոչվում են սպորներ։ Այդ սպորների միջոցով բակտերիաները պաշտպանվում են ցըրտից, տաքությունից և չորությունից։ Յերբ լավ պայմանների մեջ են ընկնում, այդ սպորները ծակում են կճեպը և միջից դուրս գալիս ու շարունակում վերևում նկարագրած ձևով բազմանալ։ Բակտերիաները շատ արագ են բազմանում։ Մի հատիկ բակտերիայից 24 ժամում կարող է առաջանալ մի քանի միլիոն հատ բակտերիա։

6. Ինչ պայմաններ են սիրում բակտերիաները և ինչից են վախենում։ — Դա կախված է բակտերիաների տեսակից, ցեղից։ Բայց կան պայմաններ, վորոնք բոլորի համար լավ են, կամ բոլորի համար վատ։ Այդ պայմաններից ե ջերմություն։ Բակտերիաները սիրում են բարեխառն ջերմությունը, շատ տաքը և շատ ցուրտը նրանք չեն սիրում։ Նրանք սիրում են մութ տեղ և խոնավություն, լույս չեն սիրում, չեն սիրում և չորություն։ Արևի լույսը շատերին սպանում է շատ կարճ ժամանակում։ Շատ սառնությունը նրանց կիսամեռ և դարձնում, բայց չի սպանում, յեթե նորից տաքանան, դարձյալ կապը են, բայց շատ տաքն արդեն սպանում է դրանց։ Յեռացնելուց կաթի մեջ բոլոր բակտերիաները կոտորվում են։ Բակտերիաները վախենում են նաև զանազան դեղերից։ որինակ՝ ֆորմալինից, կարբույան թթվից, սուլեմայից և այլ թույներից։ Բակտերիաների սպորները

դիմանում են վոչ միայն ցրտին, այլ և տաքությանը։ Կան այնպիսի սպորներ, վորոնք յեռացող ջրին ել են դիմանում։ Նրանց սպանելու համար հարկավոր է լինում յերկար ժամանակակի յեռացնել ջուրը։

7. Կաթի ու կաթնամթերքների բակտերիաները և նրանց տված վասան ու ոգուտը։ — Կաթի մեջ կարող են ընկնել ամեն տեսակ բակտերիաներ։ Կաթից նրանք անցնում են պանրին և յուղին։

Ի՞նչ դեր են խաղում բակտերիաները կաթի մեջ։

Կաթը թթվում, կտրվում և շաղվում ե բակտերիաների շնորհիվ։ Յերբեմն կաթը կտրվում է ու կորդ մերգում և ունենում է թթու դյուրալի համ, յերբեմն ել կտրվում է, բայց մնում է քաղցր, իսկ յերբեմն ուղղակի շաղվում ե մանր կաթիներով ու հատիկներով։ Դրանցից յուրաքանչյուրն առաջանում է առանձին բակտերիաներից։ Մածունը նույնպես մերգում է առանձին բակտերիաների շնորհիվ։ Վորքան շատ է լինում բակտերիաների թիվը կաթի մեջ այնքան ավելի շատ է թթվում ու կտրվում կաթը։

Բացի վերը հիշած բակտերիաներից, կաթի մեջ լինում են և այնպիսիները, վորոնք դառնացնում կամ ազի յեն դարձնում կաթը։ Կան նաև այնպիսի բակտերիաներ, վորոնց շնորհիվ կաթը վշանում է, դառնում է լորձյունանման, լպրտած, ձգվող։ Յերբեմն կաթի գույնն ել է փոխվում։ Կաթի յերեսին առաջանում են կապույտ կամ գեղին մանր բծեր, վորոնք հետո մեծանում են ու շատ հաճախ կաթի ամբողջ յերեսը բռնում։ Կապտագույն բծերը պատահում են ավելի հաճախ թթված կաթի մեջ։ Կաթն ունենում է յերբեմն և կարմիր գույն, Մասսամբ այդ գույնը առաջանում է մարմնի արյան կաթիներից կամ կերի կարմիր գույնից, բայց յերբեմն կաթի կարմիր գույնն առաջանում ենույնպես բակ-

տերիաներից։ Յերբեմն կաթը կտրվելուց հետո դեղնում է, սա ել առաջանում է առանձին բակտերիաների շնորհիվ։

Կաթի շատ հիվանդություններ և արատներ կան, վորոնք գարձյալ առաջանում են բակտերիաների շնորհիվ։ Հիվանդությունների միջոցով բակտերիաներն ընկնելով պահրի և յուղի մեջ, փչացնում են թե պահրը և թե յուղը։ Յուղը լավ չի հարվում, շուտ փչանում է, կծվում, իսկ պահրը կանոնավոր չի համում, ուռչում է, ճեղքվում, կամ մնում է առանց համելու, սապոնի նման, դառնանում է, հոտում և այլն։

Այդպիսի արատաբեր բակտերիաները պատահում են զիվագորապես կեղասոտ կաթի մեջ։ Յեզ վորքան կաթը կեղասոտ և այնքան ավելի յե բակտերիաների քանակը։ Հետեապես բակտերիաներից ազատվելու համար հարկավոր է կաթը մաքուր պահել, այսինքն այնպես կթել ու պահել վոր նրա մեջ վորքան կարելի յե քիչ բակտերիաներ ընկնեն։

Սակայն, կան և ոգտավետ բակտերիաներ, առանց վորոնց անհնարին և որինակ՝ մածուն ստանալը թթվեցնել կաթը, պահնիր մերել ու հասցնել, վոր խակ չմնա և այն։

Կաթի կտրվելն ու թթվելը մեզ ոգուտ չեն, յերբ ցանկանում ենք նրան քաղցր պահել կամ յուղ և այլ մթերքներ ստանալ։ Բայց շատ հաճախ մենք ինքներս ենք ուղում կաթը թթվեցնել։ Որինակ՝ ջիլ պահնիր պատրաստելու, մածուն և այլ մթերքներ ստանալու համար։ Արաժանը նույնպես աննշան թթված պիտի լինի, վոր լավ յուղ դուրս գա և այլն։ Այդպիսով բակտերիաների թթվեցնող և մի շարք այլ հատկությունները հաճախ հենց մեզ են հարկավոր լինում, և մենք շատ անգամ նրանց կարիքն զգում ենք և աշխատում ենք բակտերիաների այդ հատկություններն ոգտագործել մեր նպատակների համար։ Ուրեմն տեսնում ենք, վոր առանց բակտերիաների կաթ-


նատնտեսությունը չի կարող գոյություն ունենալ։ Կաթնատնտեսության շահերը պահանջում են, վոր մենք առաջացնենք ու բազմացնենք այն բակտերիաները, վորոնք մեզ հարկավոր են ուղած ժամանակին և վոչ թե տեղի անտեղի խառնվեն կաթին ու մեր կամքին հակառակ փոփոխություններ մտցնեն և հաճախ փչացնեն կաթին ու կաթնամթերքները։

Կաթի մեջ լինում են նաև այնպիսի բակտերիաներ, վորոնք հիվանդաբեր են մարդու համար։ Որինակ՝ խոլերա, տիֆ, փորահարինք, սիբիրախտ, թոքախտ, սիֆիլիս և այլն հիվանդությունների բակտերիաներ։ Դրանք ընկնում են կաթի մեջ կթողի ձեռքերից, թքից, յերբ կթելու ժամանակ պտուկները թաց են մնում թքով։ Դրանցից շատերն աւելի հաճախ ընկնում են կաթի մեջ ջրի միջոցով, մանավանդ յեթե ինկատի ունենանք, վոր շատ անգամ գետերի և հորերի ջրերը վարակված են լինում։ Այդ հիվանդությունների բակտերիաները տարածվում են նաև ճանձերի միջոցով։ Հում կաթ խմելուց միշտ կարելի յե հեշտությամբ վարակվել այդ հիվանդություններով։ Հիվանդ կաթից պատրաստած կարագն ու պահնիրը նույնպես կարող են վարակման աղբյուր դառնալ։

8. Ինչպես են ոգտվում բակտերիաների լավ հատկություններից։ Գիտնականների ուսումնասիրությունները ցույց են տվել, վոր, ինչպես վերն ասացինք, կաթի կամ կաթնամթերքների մեջ կատարվող ամեն մի փոփոխություն առաջանում է առանձին տեսակ բակտերիաների կամ նրանց խմբակցությունների գործունեության շնորհիվ։ Գիտնականներն սկսել են ջոկ-ջոկ բազմացնել այդ բակտերիաները և դրանցից արհեստական ձեռվ պատրաստել մերաններ, որինակ՝ մածնի մերան, սերի մերան և նույնիսկ պահնիրի համար բակտերիաների առանձին խմբակցության մերան։ Որինակ՝ շվեյցարական պահնիրի

մերանին աշխատում են ավելացնել այնպիսի բակտերիաներ, փորոնք. հարկավոր են շվեյցարական պանրի կաղմվելու և համելու համար:

Զտած բակտերիաներից պատրաստած մերանները կոչվում են մաքուր կուլտուրաներ, փորսփիտեռ դրանք պարունակում են միայն այն բակտերիաները, փորոնք հարկավոր են տվյալ մթերքն ստանալու համար: Բակտերիաների մաքուր կուլտուրայով մերում են մածունը, արաժանը (սմետանա ստանալու համար), կեֆիրը և այլն (Տես նկ. 9): Մեզ մոտ գործածվող մածնի մերանը մաքուր



ա. բ. գ. դ.

Նկ. 9. Մաքուր կուլտուրաների բակտերիաներ:
ա.-կեֆիրի բակտ. բ. յաղուրթի բակտ. գ. մածնի բակտ.
դ.-կումիսի բակտերիաներ. (մեծացրած են 700 անգամ):

կուլտուրա չե, քանի փոր զտված բակտերիաներից չե կաղմված, ուստի նրա մեջ կարող են լինել և ուրիշ տեսակ բակտերիաներ: Վորքան առաջ գնա բակտերիաների ուսումնասիրությունը, այնքան ավելի կզարգանա բակտերիաների մաքուր կուլտուրաներով ոգտվելու գործը և ավելի մաքուր ու արժեքավոր կաթնամթերքներ կստացվեն:

IX. ՄԱՔՈՒՐ ԿԱԹ ՍՏԱՆԱԼՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԸ

Ամենալավ պանիրը, յուղը և այլ կաթնամթերքներն ստացվում են միայն մաքուր և թարմ կաթից: Մաքուր և կոչվում այն կաթը, փորի մեջ բակտերիաները քիչ են: Հարց ե ծագում՝ ինչ միջոցների պետք ե դիմել մաքուր կաթ ստանալու համար:

Սրան պաաասխանելու համար նախ անհրաժեշտ է մոտիկից ծանոթանալ այն ճանապարհներին, վորոնցով բակտերիաներն ընկնում են կաթի մեջ և ապա ծանոթանալ սրանց առաջն առնելու միջոցների հետ:

1. Կենդանու մարմինը.—Բակտերիաները կաթի մեջ են ընկնում ամենից առաջ կթելու ժամանակ՝ կենդանու կրծից, պտուկներից, կաշվի վրայից, պոչից: Յեթե մարմնի այս մասերը կեղտու են, թթքոտ, ապա կեղտի հետ ավելի շատ բակտերիաներ են թափվում կաթի մեջ: Ուրեմն հարկավոր ե կենդանու մարմինը մաքուր պահել: Մաքուր պահելու ձեռ հետեւյալն ե:

Ամեն որ անհրաժեշտ է կենդանուն թիմարե, կաշին խոզանակով (չոտկով), մաքրել, շաբաթը մեկանգամ լավ կլինի գոլ ջրով լվանալ ամբողջ մարմինը և խոկույն ցամաքեցնել, փոր չմրսի (ձմեռները լավ ե խույս տալ լվանալուց):

2. Կթողը.—Բակտերիաներն ընկնում են կաթի մեջ կթողի ձեռներից և շորերից: Հետեւապես կթելուց առաջ կթողը պետք ե ձեռները սապնով լվանալուց բացի, թեւկերը վեր քաշի, հատուկ մաքուր գոգնոց կապի: Կթելու ժամանակ նա պետք ե կատարի և այն բոլոր կանոնները, փոր բերված են ՎԻ գլխում կթելու մասին:

3. Ողը.—Բակտերիաները կաթի մեջ ընկնում են և ողից: Դրսի ողն ավելի մաքուր ե, քան գոմինը: Գոմում կթելիս կաթը կարող ե մեծ չափով վարակվել բակտերիաներով: Ուրեմն անհրաժեշտ ե գոմի ողը մաքուր պահել: Գոմի մաքուր պահելու զիսավոր պայմաններից մեկը լույսն ե: Պետք ե գոմերում լուսամուտներ շինել: Ինչպես արդեն գիտենք, լույսը բակտերիաներին հեշտությամբ վոչնչացնում ե: Պատուհանները յերեմն պետք ե բացել ողը մաքրելու համար: Բայց ավելի լավ ե ոգանցքներ շինել առաստաղում, փոր ուղած ժամանակ կարելի լինի ողը

մաքրել։ Այսուհետև գոմի պատերն ու առաստաղը պետք է տարեկան դոնե 2 անգամ կրով սպիտակացնել։ Կրածուը բակտերիաներին սպանում է։ Անկյուններում չպետք է թողնել սարդերի փոստայններ, փառեր, փրովինետեն սրանց վրա մեծ քանակությամբ բակտերիաներ են հավաքվում։ Հատակը պետք է սալած լինի, ջրով հեշտությամբ լվանալու համար։ Մեզի (շեռի) համար պետք է հատակի վրա, կենդանիների հետեւ կողմից առու անցկացնել, վոր մեզը միջով անցնի, գոմից դուրս գա։ Գոմը պետք է որական 2—3 անգամ քերել, մաքրել։ Մեր գյուղացու, ներկայումս գոյություն ունեցող, մութ ու կեղտոտ գոմերում անհնարին է մաքուր կաթ ստանալ, ուրեմն՝ ավելի լավ և այդպիսի գոմերում չկթել։

Բացի գրանից, կթելու ժամանակ չպիտի ավել կամ քերել գոմը, չպիտի կեր տալ, քանի վոր կերը տանել-քերելու և ուտելու ժամանակ շարժումից կերի փոշու հետ մեծ քանակությամբ բակտերիաներ են անցնում ողը և այնտեղից ընկնում կաթի մեջ։ Կերն ավելի լավ և տալ կթելուց հետո։

Կթելուց անմիջապես պետք է կաթը դուրս տանել և վոչ մի դեպքում չպիտի պահել գոմում։

4. Կեղտը.— Պետք է հիշել վոր բակտերիաները սերտ կապված են ամեն տեսակ կեղտոտության՝ թրքել կտորների, փոշու, կենդանու կաշվի մազերի հետ և այլն։

Սրանք իրենց հետ կաթի մեջ մտցնում են բազմաթիվ բակտերիաներ։ Յեթե կատարենք առաջին կետում ցույց տված պայմանները, հեշտությամբ կառնենք և սրանց առաջը։

5. Ամանները.— Բակտերիաները կաթի մեջ են ընկնում և այն բոլոր ամաններից, վորոնց մեջ կաթը կթվում է, պահվում է, մերգում է, քամփում և այլն, այսինքն՝ կովկիթից, մաղից, քամիչից, շերեփից, գղալից, կաթսայից, տաշտից, սերգատից, դույլից (վեգրո) և այլ ամաններից։ Ուրեմն

այդ բոլոր ամաններն ու իրերը պետք են մաքուր պահվեն, այսինքն ամեն անգամ հենց վոր ամանը կաթից աղատվում է, իսկույն և յեթ հարկավոր է տաք ջրով և խոզանակով լավ լվանալ վոր ամանների վրա կաթի մնացորդներ չմնան, հակառակ դեպքում նրանք կչորանան և վնասակար բակտերիաներին զարգանալու հնարավորություն կտան։

Ամանները բոլորովին մաքուր պահելու համար հարկավոր է շաբաթը մի յերկու անգամ լվանալ սողայով, կամ մաքուր մոխրաջրով։

Ամեն տեսակ շորի կտորներ, վորոնցով կաթը քամում են կամ ամանները սրբում, հարկավոր է միշտ լվանալ տաք ջրով ու սապոնով։

Ամանները լվանալուց հետո հարկավոր է յերեսի վրա դնել կամ շորով ծածկել, վոր մեջը մաքուր մնա և փոշի չնստի։

Գործածելուց առաջ ամանները հարկավոր է լավ վողողել տաք ջրով և ապա սառը ջրով։ (Կարդա գլուխ X):

6. Կաթնատունը.— Այն բնակարանը, վորտեղ կաթ են պահում կամ կաթնամթերքներ պատրաստում (կաթնատունը), պետք է չափազանց մաքուր պահել, պատերը, առաստաղը և հատակը պիտի այնպես շինված լինեն, վոր հնարավոր լինի ջրով լվանալ։ Յեկ իրոք, ամեն անգամ աշխատանքը վերջացնելուց հետո, հարկավոր է լվանալ պատերն ու հատակը։ յերեմն և առաստաղը, յեթե ցեմենտով և սվաղած։

Իսկ յեթե ցեմենտով չեն սվաղած հարկավոր է պատերն ու առաստաղը ճերմակացնել կրաջրով տարին 2 անգամ։ Կաթնատում պիտի ունենալ լվացարան՝ ճեռքերը սապոնով լվանալու համար։

7. Չուրը.— Ի՞նչ տեսակ ջրով պետք է լվանալ ճեռքերը, ամանները և այլ իրեն ու պարագաները։ անպայման աղբյուրի մաքուր ջրով։ Պետի, առուների, և յերեմն ել հորերի ջրերը մեծ քանակությամբ բակտերիաներ

են պարունակում, հետևազես այդ ջրերը մաքրելու փոխարեն կարող են կեղառացնել կաթը և նրա մթերքները: Գետի և հորերի ջրերը պարունակում են շատ հաճախ և հիվանդաբեր բակտերիաներ, այսպես վոր պիտի աշխատել դրանցով չվանալ ամաններն ու իրերը, այլ միմիայն աղբյուրի ջրով:

Իսկ յեթե աղբյուրի ջուր չկա, պետք է հորի և գետի ջրերը յեռացնել ու ապա պաղեցնել գործածության համար: Լեռներում և գյուղերից հեռու գտնվող հորերի ջուրը կարելի յե անվաս համարել և գործ ածել աղբյուրի ջրի փոխարեն:

8. Ճանձերն.—Կաթը, կարագը և այլ կաթնամթերքները յերբեք չպետք ե բաց պահել, այլ հարկավոր ե միշտ ծածկել, գորպեսզի ճանձերը չնստեն դրանց վրա և զանազան մխասակար ու հիվանդաբեր բակտերիաներով չվարակեն: Կաթը կարելի յե ծածկել թանձիֆով կամ ծակոտիներ ունեցող խուփով: Մաքրության և առողջապահության ամենամեծ թշնամիները ճանձերն են. պետք ե սրանցից ամեն կերպ հեռու պահել կաթնամթերքներն ու կաթը:

Սրանք են մաքուր կաթ ու կաթնամթերքներ ստանալու նախադգուշական միջոցները: Յեթե այս ամենը ճշշտությամբ կատարվի, կստացվի չափազանց մաքուր կաթ, վորից իր հերթին կստացվեն լավորակ և առողջ կաթնամթերքներ:


X. ԿԱԹ ՔԱՄԵԼՆ ՈՒ ՔԱՄԻՉՆԵՐԸ

Վորքան ել աշխատենք մաքուր կաթ ստանալ, այնուամենայիվ գործնականում անհնարին ե այնպես անել, վոր կթելու ժամանակ վոչ մի կեղտ կամ փոշի չնկնի կաթի մեջ և հետը բակտերիաներ չբերի: Այդ պատճառով հարկավոր ե կթելուց հետո անմիջապես կաթը քամել կեղտերից աղատելու համար: Քամելու միջոցով կաթից բաժանվում են վոչ միայն կեղտի այն մասերը, վորոնք յե-

րեռում են աչքով, այլ և կեղտի այն չափազանց մանր մասերը, վորոնք հասարակ աչքով չեն յերեռում. այս դեպքում, իհարկե, նայած ինչ քամիչ ե գործածվում:

Կաթը քամելու զանազան գործիքներ կան: Մեզ մոտ քամելու սովորական գործիքը մազից շինած մաղն ե, կամ մի վորկե ցանցառ շորի կտոր: Այդ յերկուսն ել անհարմար են այն պատճառով, վոր հեշտ չեն լվացվում և շուտ պատռվում, անպետքանում են: Ավելի լավ ե դրանցից հրաժարվել և գործ ածել միմիայն մետաղյա մաղեր կամ քամիչներ: Մաղերը լինում են զանազան մեծության:

Մանր տնտեսությունների համար լավ ե սովորական քամիչ, վոր ցույց ե տրված 10-րդ նկարում:




Նկ. 10.

Սովորական կաթքամիչը.

Նրա մաղը շինած ե պղնձե կամ յերկաթե կլայեկած թիթեղից և ունի մանր ծակոտիներ: Նրա նման՝ կաթքամիչներ պատրաստվում են նաև հանովի հատակով: Հանովի հատակը բաղկացած ե 2 մաղից. մեկը խոշոր ծակերով, մյուսը՝ մանր (Տես Նկ. 11): Պահեստի համար դրանցից հար-


կավոր ե մեկ զույգ ավելի ունենալ:



Նկ. 11. Կաթքամիչը հանովի տակով:

Յերբ մաղերը կեղտություն են, իսկույն հանում են և նրանց տեղը նորերը դնում, իսկ կեղտուները լվանում են, վոր նորից հերթով գործածեն: Տակի մաղերն ամրացվում են նըկարի վրա ցույց տրված ողակով:

Սրանցից ավելի լավը պիտի համարել Ուղանդեր զտող-քամիչը, փորը կաթը միանգամայն մաքուր և դուրսի բերում: (Տես նկ. 12):



Նկ. 12. Ուղանդերի կաթքամիչը.
(Փելտը):

Հակառակ գեպքում բամբակի վրա հավաքված կեղտը կարող է կաթով լվացվել և դանդաղացնել զտելը: Քամիչները պետք են ընդունարաննամանների մեջ այսպես նստեն, փոր միանգամայն ծածկեն նրանց բերանը, փորպեսզի բաց տեղերով քամած կաթը նորից չկեղտուտի: Այդ քամիչների փոքր տեսակները լավ են մանր տնտեսությունների համար, փորտեղ մեծ քանակությամբ կաթ չի մշակվում: Փոքրերը լավ են նրանց համար, փորոնք իրանց կովերի կաթը քամում, ուղարկում են կաթնագործարան մշակելու համար: Կաթնատնտեսական գործարանները, մանավանդ խոշոր արտելները, փորտեղ բազմաթիվ անդամներից կաթ են ստանում, պետք են զործագրեն ավելի խոշոր քամիչները, փորոնք թե արագ և թե միանգամայն մաքուր են քամում զտում կաթը:

Սրա հատակը նույնապես հանովի յե և բաղկացած է զարձյալ յերկու իրար վրա սարքած մետաղյա մաղերից: Այդ մաղերի արանքում ամրանում են հատկապես զրա համար պատրաստած բամբակի կոլոր և բարակ փաթիլներ: Կաթն անցնում է մաղերի և բամբակի միջով ու բոլորովին մաքուր դուրս գալիս: Բամբակը պետք է շուտ-շուտ փոխել,

Գործարան ուղարկելու գեպքում, նոր ամանի մեջ ածելիս, կաթը նորից պետք է քամել: Գործարանում կաթն ընդունելիս նույնպես պետք է անպայման քամել: Քամելուց հետո կաթը պետք է միշտ փակ պահել, վորպեսզի նա նորից չկեղտուտի: Կաթը պետք է գործարան կամ կաթնատուն տանել փակ դրությամբ:

Կաթը քամելուց հետո, ամեն անգամ պետք է քամիչները լվանալ, հետեւյալ գլխում ցույց տված ձևով:

XI. ԻՆՉ ՏԵՍԱԿ ԱՄԱՆԵՐ ՊԵՏք Ե ԳՈՐԾԱԾԵԼ ԿԱԹՆԱՑՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ: ԱՄԱՆԵՐԻ ԼՎԱՆԱԸԸ:

Կաթը քամելուց հետո ածում են զանազան ամաների մեջ պահելու, ուրիշ տեղ ուղարկելու և կամ կաթնամթերքներ պատրաստելու համար:

Պահելու համար մեզ մոտ գործ են ածում զանազան մեծության պղնձե կաթսաներ, թասեր և այլն: Պահում են և կավե թասերի, կճուճների և եմալով պատած ամաների մեջ: Շատ քիչ գեպքերում պահում են և փայտե ամաների մեջ կողերում, նույնիսկ տկաներում, վոչխարի մորթու մեջ: Վարն և սրանցից ամենալավը: Այս հարցին պատասխանելու համար անհրաժեշտ է իմանալ, թե ինչ պահանջների պիտի բավարարի կաթնամանը:


Կաթնամանը պիտի լինի թեթև, հեշտ լվացվող, կեղտուտություն չընդունող ու դիմացկուն: Բացի դրանից նա պիտի տաքության լավ հաղորդիչ լինի, այսինքն շուտ սառչող ու շուտ տաքացող, այլև հարմար լինի տեղափոխության համար: Մեզ մոտ ընդունված պղնձե կամ յերկաթե կաթսաները (պղինձները) շատ ծանր են և համեմատաբար քիչ են կաթ տանում և բացի դրանից՝ տեղափոխության համար հարմար չեն, մանավանդ պղինձների մեծ, ունկնավոր տեսակներն-ունկնանիները: Կավե թասերն ու կճուճներն անպետք ամաններ են: Կաթը ծծվում է նրանց պատերի մեջ, մնում է ու թթվում: Այդ ամանների մեջ ա-

ծած նոր կաթը վարակվում ե և նույնպես շուտ թթվում։ Այդ ամանները շատ դժվար ե մաքուր պահել։ Հախճապակու շերտով պատած (շիրա տված) կավե ամաններն իրենց վորակով չեն տարբերվում խամ ամաններից։ Նրանք ել սրանց նման հեշտ ջարդվող, ուշ սառչող և ուշ տաքացող են, համեմատած յերկաթե ամանների հետ։

Փայտե կողերը կամ կիսատակառներն անհարմար են նրանով, վոր ծանր են և դժվար են մաքրվում։ Բացի զրանց փայտե ամաններն շատ ուշ տաքանում և ուշ ել սառչում են։ Կաթը ծծվում ե դրանց ծակուիների մեջ, թթվում ե ու հետո փշացնում թարմ կաթը, այնպես վոր ավելի լավ ե այդ տեսակի ամաններից հրաժարվել։ Բացառություն կազմում են խնոցին, կարագ հունցող մեքենան և մի քանի մանր-մունր գործիքներ, վորոնք անհրաժեշտ ե փայտից շինել։ Տկնորների մասին խոսք անգամ չի կարող լինել, վորովհետև հենց իրենք կեղտ են և միանգամայն անթույլատրելի յե դրանց գործածությունը։

Այս ամենից յերեսում ե, վոր վերոհիշյալ ամաններից և վոչ մեկը հարմար չե կաթ պահելու և մանավանդ տեղափոխելու համար։ Վերեսում բերած բոլոր պահանջներին միանգամայն բավարարում են սպիտակ բարակ յերկաթից շինած ամանները։ Դրանց ձևը և մեծությունը տարբեր են լինում։ Սպիտակ յերկաթից շինած ամաններն ավելի տաքուր են, քան կամե ու փայտե ամանները, նրանցից թեթև են, հեշտ են լվացվում, փոխադրության համար հարմար են, պղինձներից թեթև են և գործածության համար հեշտ ու ավելի հարմար։ Բացի դրանից յերկաթե ամանները հեշտությամբ տաքանում են և սառչում, այնպես վոր կաթի տաքության աստիճանը դրանց մեջ հեշտ ե կանոնավորել։ Անգլիական սպիտակ թիթեղից շինած ամաններն ավելի վատ են, քան սպիտակ յերկաթից շինվածները։ Վերջինները կրկնակի կամ յեռակի կլայեկած են լինում։

Սպիտակ յերկաթից պատրաստած ամանները գործ են ածում զանազան պետքերի համար, որինակ՝ կաթը կթելու (տես նկ. 5, 6 և 7), պահելու, փոխադրելու և զանազան կարիքների համար։ Կաթը կամ սերը պահելու համար սովորաբար գործ են ածում զանազան մեծության, քառանկյունի, կամ կոլոր դույլածե ունկնանիներ։




13-րդ նկարում ցույց ե տրված դրանց կոլոր տեսակը։ Դրանցից պատրաստում են $1\frac{1}{2}$ -ից մինչև 5 դույլանոցներ։ Կաթը մոտիկ կթառեղում հավաքելու և ձեռքով տուն բերելու համար հարմար են փոքրերու, $1\frac{1}{2}$ —3 դույլանոցներ։ Դրանք լավ են նաև կաթնարանի պետքերի համար։ 4—5 դույլանոցները լավ են միայն կաթնարանի կաթնամարում կաթ ընդունելու, հավաքելու և պահելու համար։ Այս ունկնանիները շատ հարմար ամաններ են, բայց խուփ չունեն, վորի պատճառով կաթը կարող է կեղտոտվել։ Կաթը մաքուր պահելու համար հարկավոր ե այդ ունկնանիներին խուփ պատվիրել թեկուզ հենց հասարակ սպիտակ թիթեղից։ Խուփը պետք ե ծակոտիներ ունենա, վորպեսզի ամանի մեջ ոդ մտնի։ Բացովիա կթելիս ամանների բերանը ծածկելու համար շորը հարմար չե, վորովինետև նա ընդհանրապես այնքան ել մաքուր չե կարող համարվել, բայց յերբ խուփ չկա, հարկավոր ե գոնե կտակով կամ թանձիֆով ծածկել ամանի բերանը։

Կաթնամաններ կաթը փոխադրելու համար։ Յերեմն ստիպված ենք լինում կաթը մի տեղից մի ուրիշ տեղ տանել կառքով, սայլով, ձիով կամ շալակով։ Այդ տեղի յե ունենում

մանավանդ այդ ժամանակ, յերբ կաթը հավաքում, ուղարկում ենք կաթնագործարան, որինակ՝ յերբ գյուղի ծայրամասերից կամ հարևան գյուղերից կաթը հավաքում են ու տանում կաթնարտելի գործարանը։ Այս գեպքում գործ են ածում հատուկ կաթնամաններ, վոր ցույց եւ տված նկ. 14 և 15-ի վրա։ Կոլոր (զլանաձե) ամանները հարմար են լվանալու համար, բայց կառքով, ձիով կամ շալակով փոխադրելու համար բավականին անհարմար են, վորովհետև իրար մոտ դնելիս լավ չեն հարմարվում ու շատ տեղ են բռնում։ Փոխադրության համար ավելի հարմար են չորս կողանի, անկյունավոր կաթնամանները (նկ. 15), վորոնք մի տեղից մի ուրիշ տեղ կառքով շալակով, կամ ձիով տանելու համար ավելի հարմար են, քան կոլոր ամանները։ Չորս կողանի ամանները հեշտ եւ սայլի վրա իրար կողքի դարսել։ Շալակով, ձիով կամ եղով փոխադրելու համար չափազանց հարմար են կիսակոլոր ամանները, վոր հատկապես պատրաստվում են շալակի կամ բեռնակիր կենդանիների համար (Տես նկ. 15)։

Մեզ մոտ, լեռնային շրջանների արոտավայրերում ամեն տեղ դեռ այնպիսի ճանապարհներ չկան, վոր կաթը բարձած ուստորով կառքը կարողանա անվտանգ անցնել։ Նույնիսկ Շվեյցարիան դեռ շատ տեղերում այդպիսի ճանապարհներ չունի։ Յեվ այս գեպքում Շվեյցարիան կաթը փոխադրում եւ ուրիշ միջոցներով, նայած ճանապարհի հարմարության։ Այսոր, յերբ մեր կաթնամանտե-



նկ. 14. Գլանաձե աման կաթ փոխադրելու համար,

սությունն ավելի արագ եւ զարգանում, քան հաղորդակցության միջոցների կանոնավորումը լեռներում, անհրաժեշտ ե այս խնդրում ել որինակ վերցնել շվեյցարացուց։



նկ. 15. Քառանկյունի աման կաթ փոխադրելու համար։

միայն այս գեպքում հարկավոր եւ հեշտացնել կաթի փոխադրությունը գեպի ցած։ 16-րդ նկարում ցույց տված ամանը շատ հարմար ե այդ նպատակի համար։



նկ. 16. Կաթնաման, շալակով կամ ձիով փոխադրելու համար։

սությունն ավելի արագ եւ զարգանում, քան հաղորդակցության միջոցների կանոնավորումը լեռներում, անհրաժեշտ ե այս խնդրում ել որինակ վերցնել շվեյցարացուց։

Շվեյցարացին այդպիսի գեպքերում իր կաթը փոխադրում ե կամ շալակով, կամ թե եշով, ձիով և ջորիով։ Մեզ մոտ այդ յերկու ձեն ել նայած տեղական և այլ պայմաններին, կարելի յե կիրառել։ Այդ նպատակի համար հաջողությամբ կարելի յե ոգտվել մանավանդ եշերից և ջորիներից։ Կաթի փոխադրության այս միջոցների կիրառումը հնարավորություն կտա ոգտագործել լեռնային այնպիսի բարձունքների արոտատեղիները, վորտեղ գործարան շինել անհնարին ե, բայց տավարպահել ու կով կթել կարելի յե.

միայն այս գեպքում հարկավոր եւ հեշտացնել կաթի


փոխադրությունը գեպի ցած։ 16-րդ նկարում ցույց տված ամանը շատ հարմար ե այդ նպատակի համար։

Այդ ձեռքով փոխադրելու ժամանակ կաթը բոլորովին չի փշանում, միայն հարկավոր ե, վոր ամանը բոլորովին լիքը լինի, մաքուր և յերկար ժամանակ արեկի տակ չմնա։ Դրա համար լավ ե կաթնամանը թաց շորով դրսից փաթթաթել։ Այդ ձեռք կաթը միանգամայն սառը և թարմ դրությամբ կհանդի գործարան։ Բացի դրանից կաթն ուղարկելուց առաջ հարկավոր ե յերբեմն, նայած յեղանակին

ու տարածությանը, կաթը սառցնել և ապա ուղարկել։ Շեյցարական պանիր պատրաստելու համար շատ հեռու տեղերից կաթ բերելը լավ չե։

Պետք ե ուշադրություն դարձնել կաթնամանների փականքի վրա, փականքը պետք ե լավ նստի ու պինդ կախի ամանի բերանը և կողպերով փակվի։ Այս գեղքում բանալիներից մեկը պետք ե լինի կաթ ուղարկողի, մյուսը կաթ ստացողի մոտ։

Ամանները լվանալու համար գործ են ածում խոզանակներ (չոտկեր), վորոնք շինվում են խոզանից կամ արմատներից և շատ հարմար են ամաններ լվանալու համար։ (Տես նկ. 17-ա)։ Բացի այդ գոյություն ունեն և կաթնատան հատակը լվանալու խոզանակներ, վորոնք շինվում են արմատներից և ռետինից։ (Տես նկ. 17-բ)։ Դրանցով շատ



Նկ. 17. Խոզանակներ. ա. Ամաններ լվանալու համար.
բ. Հատակը լվանալու համար։

լավ մաքրվում և լվացվում ե կաթնատան հատակը։ Արմատներից պատրաստված խոզանակները գործ են ածում փայտե ամաններ լվանալու համար, իոկ խոզանից շինածները՝ թիթեղյա ամանների համար։

Շատերը լվանում են խսիրով, կամ շորի կտորով, սակայն գրանք կեղտ վերցնող են, ուստի և անպետք են աման լվանալու համար։

Գործածությունից հետո ամանները, ինչպես արդեն ասել ենք, լվանում են յեռացրած տաք ջրով մեկ—յերկու անգամ, կամ գոլորշիով՝ յեթե շոգեմեքենա կա, վորպեսզի ամանի վրա ամենափին կաթի կամ յուղի հետքեր չմնան։ Տաք ջրով լվանալուց հետո հարկավոր ե ցամաքեցնել մաքուր շորով ու ծածկել թանձիֆով կամ մի այլ բարակ շորով, վորպեսզի ամանի վրա կամ մեջ փոշի և ճանճ չնստի։

Գործածելուց առաջ ամանները հարկավոր ե նորից տաք ջրով լվանալ և ստոր ջրով վողողել։

Շաբաթը մեկ-յերկու անգամ հարկավոր ե բոլոր ամանները տաք սողաջրով կամ մոխրաջրով լվանալ, բայց պետք ե աշխատել, վոր ամանի վրա կամ մեջը սողաջրի կամ մոխրաջրի հետքեր չմնան։ Դրանք կաթի և կաթնամանների վրա վատ են ազդում։

Ամեն մի կաթնատանտեսական գործարան պետք է շոքեմեքենա ունենա, վորովինեակ կատարյալ մաքրություն պահելու համար անհրաժեշտ ե գործադրել գոլորշի։ Մանավանդ փայտե ամանները (որինակ՝ ինոցին և այլն) հնարավոր ե կատարելապես մաքուր պահել միայն գոլորշու գործադրության միջոցով։

XII. ԿԱԹԻ ԿԾՈՒԵԼՆ ՈՒ ՉԱՓԵԼԸ


Կաթնատանտեսության ընկերության ամեն մի անգամ կովը կթելուց և կաթը քամելուց հետո, նախքան գործարան ուղարկելը, պետք ե իր կաթը կամ չափի կամ կշռի։ Սովորաբար արտելներում կաթը միմիայն կշռում են, չափելը գործածական չե։ Կաթը կշռելն անքան կարեոր ե, վոր լավ կլինի, յեթե ամեն մի կաթնատեր ամեն որ կշռի և իմանա իր կաթի քանակը։ Նախ, այդ հնարավորություն կտա իմանալու, թե վորքան ձեռնատու յե այս կամ այն կովի պահելը և յերկրորդ՝ թե կաթի ինչպիսի քանակից ինչքան կաթնամթերք ե ստացվում։

Այդ պատճառով ամեն մի տնտեսություն պետք է իր ամուլ կշեռք ունենա թե կաթը և թե անասնի կերը կշռելու համար։ Սրա հետ միասին ցանկալի յե ունենալ կաթի ճշտած, հաստատած մի փորեն չափ, որինակ՝ գույլ, լիոր կամ մի ուրիշ ընդունված չափ։

Ամեն մի տավարատեր իր կարիքների համաձայն ինքը պետք է փորոշի ու ընտրի թե ինչպիսի կշեռք կամ չափ և հարկավոր իրեն։ Այսուղ մենք կծանոթանանք այն կշռների ու չափերի հետ, փորոնք սովորաբար գործ են ածվում թե առանձին տնտեսություններում և թե ընկերական գործարաններում։

Կշեռքներ շատ կան, բայց մեզ համար կարեոր են այնպիսիները, փորոնք բացի ճիշտ ցույց տալուց, հասարակ են և գործնական, յերկրորդ՝ ամուր են, դիմացկուն և եժան։

Բացի սովորական, տամնորդական կշեռքից գոյություն



Նկ. 18. Տամնորդական կշեռք՝ շարժական կշռաբարեռով։

ունեն և շարժական կշռաբարեռով տամնորդական կշեռքներ, փորոնք բավականին հարմար են կաթնահանտեսական գործարանների համար (տես նկ. 18)։ Հարմար է արտելների համար և նկար 19-ում ցույց տված լծակավոր կշեռքը, փորի գործածության յեղանակը պարզ յերե-

ում և նկարից։ Պատերազմից առաջ վրա ամենափոքր սեռակն արժեքը 20 ր. 50 կոպ։ Մեծերն ավելի թանգ ելին։ Մի այլ լծակավոր կշեռք ցույց է տրված


20-րդ նկարի վրա։

(Բերնախու կշեռքը)։


Այդ կշեռքը բավականին տարածված է կոնտրոլ միություններում և աչքի յե ընկնում իր պարզությամբ ու ճշտությամբ։ Գինը պատերազմից առաջ մոտավորապես 16 րուրլի յեր։ Վերջապես կարելի յե ոգովել և Սալտերսի զսպանակավոր կշեռքով (տես նկ.

21), փորը միանգամայն մատչելի յե մասր տնտեսությունների համար։ (Պատերազմից առաջ փոքրն արժեքը 6 ր. 50 կ.)։


Կաթի քանակը կարելի յե փորոշել և զանազան չափերով, փորոնցից ամենահարմարը և համեմատաբար ավելի ճիշտը՝ կաթնաքաշ գույն ե (տես նկ. 22), նա ունի կողմանը լողակ։ Լողակի կոթը յերկու կողմից տատիճանների յե բաժանված։ Մի կողմի վրա ցույց են տրված ֆունտերը, մյուս կողմից՝ շիշեր կամ գավաթներ։ Լողակի կոթն անց են կացնում դույլի վրա ամրացրած կամարաձև յերկաթե կտրվածքի միջոցով, ինչպես պարզ յերեւմ է նկարի վրա։ Յերբ կաթն ածում են դույլի մեջ, լողակը բարձրանում է և լողակի կոթի այն աստիճանը, վոր կանգնում է կամարի վրա, ցույց է տալիս, թե քանի ֆունտ կամ շիշ կաթ կա դույլի մեջ։



Նկ. 19. Մալերի լծակավոր կշեռքը։



Նկ. 20. Բելնատիռու լծակագոր կշեռքը:



Նկ. 21. Սալտերսի
դպանակագոր կը-
շեռքը:

Ակ. 22. Կաթնաքաշչույլը իր լողակով:
Աջ կողմը առանձին նկարած է լողակը:

Կաթը չափելու համար գործ են ածում և կաթնաշափ գույլեր ու գավաթ, փորոնք ցույց են տված 23-րդ նկարի վրա: Սրանք անհարժար են նրանով, վոր ցույց են տալիս կաթը միմիայն գույլերով, կամ շիշերով (առանց ֆունտերի), մի հանգամանք, վոր կապ- ված ե մեծ անձտու- թյունների հետ: Պարզ ե ուրեմն, վոր կշեռքներն ա- վելի լավ են, քան չափերը:

XIII. ԿԱԹԻ ՊԱԼԵՑՆԵԼՆ ՈՒ ՏԱԲԱՑՆԵԼԸ

Ի՞նչու համար են սառցնում կամ տաքա- ցնում կաթը: — Վորքան ել մենք կաթը մաքուր գուրս բերենք, միևնույն ե, անկարելի յե վոր կաթի մեջ ամեննեին բակարիա՛մտնի: Յեկ ինչպես գիտենք, մաքություն պահպա- նելու նպատակն այն չե, վոր բակտերիաներից միանգամայն ազատ կաթ ստանանք (դա անհնարին ե), այլ այն, վոր կաթի մեջ վորքան կարելի յե բակտերիաների թիվը շինի: Ուրեմն ամենամաքուր կաթի մեջ անգամ բակտե- րիա կա: Բակտերիաները կաթի մեջ ընկնելով անմիջապես սկսում են բազմանալ և մի քանի ժամում նրանց թիվը մեծ չափերի յե հասնում: Յեկ յեթե հում կաթը սովորա- կան տաքության մեջ մնա 5—6 ժամ, կարող ե կտրվել, շաղվել: Դրա պատճառը բակտերիաներն են, վոր կաթնա- շաշարն ուտելով դրանից կաթնաթթու յեն առաջանում, իսկ վերջինս, ինչպես հայտնի յե, կտրում, շաղում և պահրանյութը և կաթից ջոկում: Մենք գիտենք արդեն, վոր բակտերիաներն իրենց սիրած շերմության աստիճանն ունեն և շատ սառն ու տաքը չեն սիրում: Որինակ՝ ջեր- մության 4⁰-ի ժամանակ (ըստ Յելսիուսի), ինչպես այդ փորձերով հաստատել են գիտնականները, բակտերիա- ները շատ դանդաղ են բազմանում:

12⁰ տաքութ. ժամանակ 2 ժամում 4 անգամ են ավելանում:


„	„	„	3 „	6 „	„	„
„	„	„	4 „	8 „	„	„
„	„	„	5 „	25 „	„	„
„	„	„	6 „	435 „	„	„

Բակ ջերմության

35 ⁰	„	„	4 „	215 „	„	„
„	„	„	5 „	1830 „	„	„
„	„	„	6 „	3800 „	„	„

Յերբ տաքության աստիճանը սրանից ել բարձրա-

ցնում ենք, բակտերիաների բազմանալը դանդաղում է և վորքան շատ ենք բարձրացնում աստիճանը, այնքան ավելի



նկ. 23. Կաթնաչափ դույլը և կաթի գալաթը:

դանդաղ են բակտերիաները բազմանում և վերջապես, Ցելիտում 45° -ում բակտերիաներն չափանց դանդաղ են բազմանում, 50° -ից բարձր նրանք այլևս չեն բազմանում. յերբ ջերմությունը մոտենում է 100° -ին, բոլորովին կոտորվում են:

Ուրեմն՝ շատ ցուրաը և շատ տաքը դանդաղեցնում են բակտերիաների բազմանալը, իսկ չափազանց բարձր ջերմությունը նույնիսկ վոչչացնում է նրանց. Դրանից ոգտավելով՝ կարողանում ենք յերկար ժամանակ պահել կաթը:

Յեվ իրոք, գիտնականներից մեկը շատ մաքուր հում կաթը պահել է զանազան ջերմության տակ, փորձելու համար՝ թե վոր տաքության ժամանակ ավելի շուտ և փշանում (թթվում) կաթը. պարզվել է, վոր որինակ՝ Ցելսիուսի.—

31° -ի տաքութ.	մեջ կաթը թթվում է 19 ժամից հետո
16°	, , , , , 48 , , (2 որ — ժ.)
12°	, , , , , 88 , , (3 որ 16 ժ.)
8°	, , , , , 99 , , (4 որ 3 ժ.)
$1^{\circ}/_2$, , , , , 336 , , (14 որ ~ ժ.)

Բակտերիաների բազմանալու մասին վերելում բերած թվերը ցույց են տալիս նաև, վոր սկզբում բակտերիա-

ները կամաց են աճում, իսկ այնուհետև բակտերիաներն ավելի արագ են բազմանում, իհարկե տաքության միևնույն պայմաններում: Բացի գրանից, սառը կաթի մեջ ել, թեպետ դանդաղ, բայց ելի բազմանում են բակտերիաները սկզբում թույլ, բայց հետո ուժեղ կերպով: Մի ուրիշ բան ել և պարզվում այդ թվերից: Այսինքն՝ վորքան մեծ է տաքության աստիճանը, այնքան ել մեծ է բակտերիաների բազմանալու չափը առաջին ժամերին և ընդհակառակն:

Բացի գրանից, պարզվում է նաև, վոր բակտերիաներն իրենց բազմանալու համար ունեն ջերմության ամենացածր, միջակ կամ նորմալ և ամենաբարձր աստիճաններ, կամ ինչպես ասում են ոտար լեզվով՝ ջերմության մինիմում, ոպտիմում և մաքսիմում: Մինիմումի և մաքսիմումի ժամանակ նրանք շատ դանդաղ են աճում, իսկ ոպտիմումի ժամանակ՝ շատ արագ: Վերևում բերած փորձերից յերեսում է, վոր կաթի բակտերիաների համար ջերմության մինիմումը 4° -ից ել ցածր է, մաքսիմումը 45° -ից բարձր, իսկ ոպտիմումը 35° — 36° է:

Այս ամենից հետևում է, վոր՝

1. Սառնությունն ու բարձր տաքությունը դանդաղեցնում կամ բոլորովին դադարեցնում են բակտերիաների բազմանալը կաթի մեջ:

2. Կթելուց անմիջապես հետո վորքան շուտ և շատ սառչի կաթը, այնքան ավելի յերկար կղիմանա:

3. Շատ տաքացնելն իսպառ վոչչացնում է բակտերիաներին:

Հետևապես, յեթե մենք ուզում ենք կաթը յերկար ժամանակ պահել առանց թթվելու, կամ պետք է ուժեղ կերպով և իսկույն սառցնենք, ու սառը դրությամբ պահենք, կամ շատ տաքացնենք, նույնիսկ յեռացնենք:

Կաթը յերկար պահելու կարիք է լինում հետեւյալ դեպքերում:

1. Յերբ կաթը ծախում են փոքր քանակով:
2. Յերբ կաթը ուղարկում են հեռու տեղեր:
3. Յերբ յերեկոյան կաթը պահում են առավոտվա կաթի հետ խառնելու համար, կամ ընդհակառակն:

Բացի յերկար պահելուց, կաթի սառցնելն ու տաքացնելն անհրաժեշտ են հաճախ նաև կաթից լավ յուղ ստանալու համար: Տաքացնելու և սառցնելու կարիք զգում ե վոչ միայն կաթը, այլ և շատ գեղքերում արաժանը: Թե ինչպիսի գեղքում հարկավոր ե դիմել սառցնելու և ինչպիսի գեղքում տաքացնելու ողնությանը, բացատրված ե հաջորդ զլուխներում:

1. ԿԱԹԻ ՊԱՂԵՑՆԵԼԻ.

ա) Սառույցի կարևորությունը և սառցատունը.—Յերբ կարճ ժամանակով (մի քանի ժամով, կամ մի յերկու որով) կաթը կամ արաժանը ուղում են հում դրությամբ պահել, այդ գեղքում զիմում են սառը ջրի կամ սառույցի ողնությանը: Որինակ՝ կաթը ծախելու, ուրիշ տեղ ուղարկելու, մինչև առավոտ կամ յերեկո պահելու և ընդհանրապես կաթը թարմ պահելու համար (լավ մթերքներ ստանալու նպատակով): Բայց փորովինետև ամեն տեղ սառը ջուր չի ճարվում և սովորաբար ամառը ջրերը տաքանում են, ուստի անհրաժեշտ ե ամեն մի կաթնատնտեսության մեջ բավականաչափ սառույց ունենալ, տնտեսությունը գյուղում թե սարում լինի, այդ միևնույն ե: Ամառն առանց սառույցի դժվար ե լավ յուղ ու պանիր և ընդհանրապես լավ կաթնամթերքներ ստանալ:

Սառույցի պատրաստությունը պետք է տեսնել ձմեռը և պետք ե հավաքել այնքան, վոր ամբողջ ամառը լիովին բավականացնի: Սառույցը հավաքում և պահում են հատուկ սառցատներում: Ամեն մի կաթնատնտեսական արտել պետք ե իր սառցատունն ունենա: Սառցատները—գետնափոր շնորհեր են, հաստ և յերեմն կրկնակի պատերով:

Սառցատները շինում են կամ առանձին, կամ հարմարեցնում են գլասվոր շենքի ներքնատանը—նկուղում: Սառցատունը պետք է նայի դեպի հյուսիս, բավական խորը լինի, տեղը չոր, պատերը պետք ե հաստ լինեն, գուռն ոչ պատերը արև չպետք ե տեսնեն: Դուան առաջ պետք ե նախասենյակ լինի, վորպեսզի արտաքին ողն անմիջապես չպղի սառցատնան ողի ջերմության վրա:

Սառցատնան հատակն ավելի լավ ե շինել կավից՝ 4—5 վերշոկ հաստությամբ և թեք գիրքով, այնպես վոր հալված սառույցի ջուրը մի կողմ հոսելով դրա համար պատի մեջ թողած անցքով անցնի կաթ պահելու սենյակը և թափվի ավազանը, վորտեղ դնում են կաթնամանները կաթը սառցնելու համար:

• Լավ կլինի գետնի վրա մի շերտ մանր խիճ ածել 3—4 վերշոկ հաստությամբ, հետո յերեսը գերաններով կամ հաստ տախտակներով ծածկել: Սառցաջուրը տախտակների կամ գերանների արանքով կթափվի հատակի վրա և այնտեղից կհոսի ավազանի մեջ: Դա անհրաժեշտ է անել, վորպեսզի ջուրը սառույցի աակը չմնա ու ավելի չհալի նրան: Վոչ մի գեղքում թույլ չպիտի տալ, վոր հալած ջուրը մնա սառույցի տակը: Սառցատունը պիտի ունենա և ողանցք՝ ոդափոխության համար:

Սառույցը պետք է դարսել այնպես, վոր արանքներում գատարկ տեղեր չմնան: Դրա համար գետերում ձմեռը սառույց կտրելիս պետք ե աշխատել այնպիսի ձեռվ դուրս բերել սառույցի կտորները, վոր հնարավոր լինի իրար վրա կամ կողք-կողքի սերտ գարսել: Զյունը հավաքելիս պետք ե պնդացնել, վորպեսզի արանքներ չմնան և ձյունը յերկար դիմանա: Խիստ սառնամանիքների ժամանակ պետք ե ձյունի վրա ջուր ածել, վորպեսզի նա սառույց դառնա: Սառույցը լավ ե ծածկել գարմանով, կամ ծղոտի հաստ շերտով. այդ դրությամբ նա լավ մնում է

ամբողջ ամառը: Սառույցը պետք է գործածել կույտերի գլխից կամ կողերից, բայց յերբեք տակից, հակառակ գեպը սառույցը շուտ կհաջի: Յեթե հնարավոր ե շառցատունը պետք է այնուես շինել, վոր նրա պատերից մեկը միենույն ժամանակ ծառայի իրեն պատ կաթնատան համար, վորպեսզի ամառը կաթնատունը պաղ մնա:

Բարձր լեռների շրջաններում, վորտեղ հոսող սառն աղբյուրներ կան և հնարավոր ե հոսող ջուրն անցկացնել կաթնատուն, կարելի յե առանց սառցապահեստի յել մի կերպ գործ տեսնել, բայց չպետք է մոռանալ, վոր ինչքան ել սառը լինի ջուրը, այնուամենայնիվ նա չի կարող փոխարինել սառույցին, այնպես վոր, անհրաժեշտ է սառցի պաշար ունենալ նաև սարերում:


Բ. Կաթ պաղեցնելու ձևերը.— Կաթը պաղեցնելու համար ցեմենտից ավաղաններ են շինում. այդ ավաղանները լցնում են հոսող սառը ջուր, կամ սառույցով և մեջը գնում կաթով լիքն ամաններ: Կաթը հարկավոր է սառցնել կթելուց և քամելուց անմիջապես հետո, վորովհետև ինչպես գիտենք, ուշ սառցրած կաթը շատ հեշտությամբ է թթվում: Վորտեղ կաթը սառցնում են, այնտեղ ուժեղ հոտ ունեցող նյութեր չպիտի պահել, վորովհետև կաթը հեշտությամբ ընդունում է ուսար նյութերի հոտը: Կաթը կամ արաժանն ավաղանի մեջ սառցնելը տարածված ձև է, բայց դա այնքան ել նպատակահարմար չե, վորովհետև նախ շատ սառույց ե գնում և ապա կաթը դանդաղ է պաղում: Բացի գրանից, կաթն ու սերը ամանի մեջ հավասար կերպով չեն սառչում, ամանի պատերի մոտ ավելի շուտ են սառչում, քան մեջտեղը:

Այդ պատճառով կաթը սառցնելու համար գործ են ածում հատուկ պաղարաններ, վորոնք հնարավորություն են տալիս կաթը կամ արաժանը միանգամից սառցնել մեծ քանակությամբ և արագ ու հավասար չափով: Պաղարան-

ներ շատ կան թե ըստ մեծության և թե ըստ տեսակի: Շատերը հարմար են փոքր տնտեսությունների համար, շատերն ել՝ մեծ: Բացի գրանից մի քանիսը սառնցում են հոսող ջուր, մյուսները սառուցով ու աղով:

Սյատեղ մենք բերում ենք միայն յերկու պաղարանների նկարագրությունը, վորոնք բավական հարմար են և հեշտությամբ կարող են գործադրվել նաև մեր կաթնատնական գործարաններում: Շմիգի պաղարանը (տես նկ. 24) մի գլանաձև աման է, վոր բաղկացած է գլանից, հատակից և ընդունարանից:

Գլանը կրկնակի վորորածեալ պատ ունի. սառցով պաղեցրած ջուրը տակից խողովակով մտնում է գլանի մեջ ու նրա յերկու պատերի արանքով բարձրանում է մինչև ընդունարանի տակը և առանձին խողովակով, վոր տանցնում է գլանի մեջտեղով, թափվում է ներքի: Ընդունարացին կաթը բարակ շերտերով դրաի կողմից թափվում է գլանի յերեսով տակի թասի մեջ, վորտեղից ծորակի միջոցով հոսում է մի վորեե ամանի մեջ: Զուրը հնարավոր է պաղեցնել սառույցով, առանձին ավաղանում, վորը կարելի յե հարմարացնել մի վորեե բարձր տեղ և այնտեղից խողովակով ջուրն անցկացնել պաղարան:



Նկ. 24. Շմիգի պաղարանը:

Արա նման է և Պետերսենի պաղարանը:

«Աստրա» կոչված պաղարանը (տես նկ. 25) նույնպես գլանաձև է, բայց պատվող է: Գլանը հորիզոնական դիրքով ընկած է յերկու վոսների վրա և պատվում

և առանցքի ծայրին ամրացված կոթով։ Գլանի վերևում ամրացրած ե նավը, վորի մեջ են ածում կաթը և նա, նավի հատակի մանր ծակերով թափվում ե գլանի վրա, սառչում ե և այստեղից հոսում գլանի տակը ու հատուկ անցքով



Նկ. 25. «Աստղա» պաղարանը.

ժեղ կերպով իջեցնում ե տաքությունը։ Ցերեմն գլանակի վրա դնում են մի նոր պաղարան։ Կաթն սկզբում անցնում ե այս պաղարանի միջով և հետո թափվում գլանի վրա, վորտեղ շարունակում ե պաղել։ Այս ձևով կաթի տաքությունը կարելի է իջեցնել նույնիսկ մինչև 1°-ի։ Այդքան կարելի յե պաղեցնել այն գեղքում, յերը ամառվա շող որերին հարկավոր ե լինում հում կաթը հեռու տեղ ուղարկել կամ յերկար պահել։ Այդպիսի գեղքերում հաճախ գործ են ածում առանձին կաթնամաններ, վորոնց մեջ դնում են սառցով լիքը կոլորածեն, նեղ ու յերկար սառցամաններ։ (Տես Նկ. 26)։ Կաթը դանվում ե այդ սառցամանի շուրջը և սառն ե մնում։ Այդ սառցամանների ոգնությամբ կարելի յե կաթը հեշտությամբ ուղարկել բավականին հեռու տեղեր։

2. ԿԱԹԻ ՏԱՐԱՑՆԵԼԻ, ՊԱՍՏՅՈՐԻ ԶԵՎ ՍՏԵՐԻԼԻ ԶԱՅԱ-

Մ. Պաստյորի զացիա։ — Հում կաթը, ինչպես արդեն զիտենք, վորքան ել սառցնենք, միենույն ե, վաղ թե ուշ թթվելու յե։ Բացի զրանից, հում կաթը միշտ ել կարող ե պարունակել մարդկանց կամ կենդանիների համար։ Իվանդաբեր բակտերիաներ և զանազան հիվանդությունների պատճառ

դառնալ։ Այդ

պատճառով

շատ անգամ

անհրաժեշտ ե

լինում կաթը

յեռացնել։ Ու

րինակ՝ սովորաբար հում

կաթ չեն խը

մում, այլ յե-

ռացրած։ Փո-

ղովուրդն իր


փորձով հա-

մոզվել ե, վոր

հում կաթը

մնան կաթը

մնաս ե առող-



Նկ. 26. Կաթնամանը իր սառցամանով
(ձախ կողմի կողմը գլանակը)։

ջության համար։ Ցեվ իսկապես, հում կաթից կարելի յե վարակել թոքախտով, խոլերայով, տիֆով, վորահարինքով, գաբաղով և բազմաթիվ այլ հիվանդություններով։ Իսկ յեռացրած կաթի մեջ այդ հիվանդությունների բակտերիաները բոլորն ել կոտորված են, ուրեմն և այդպիսի կաթը անվտանգ ե։ Հետեապես կաթն առողջության համար անվտանգ դաշտներու և յերկար պահելու նպատակով բավական չե սառցնելը, այլ անհրաժեշտ ե տաքացնել մինչև յեռման կետը։

Կաթը շատ յերկար կարելի յե պահել, յեթե յեփելուց հետո խկույն և յեթ սառցնում են պաղարանի միջոցով։ Այդպիսի կաթը կարելի յե թարմ պահել մինչև 3—4 որ, այնպես վոր մտնավանդ հեռու տեղ ուղարկելու համար լավ ենախ յեռացնել կաթը և ապա իսկույն պաղցնել։

Սակայն նկատված ե, վոր գեռ չյեռացրած, այլ միմիայն շատ տաքացրած կաթի մեջ ել արդեն կոտորվում են բակտերիաները։ Գիտենք, վոր կաթը յեռում է համարյա ։ Յելփուսի 100°-ում, բայց բակտերիաները կոտորելու համար բավական ե տաքացնել մինչև 80°—90°-ն Յելփուսի, միայն հարկավոր ե այդ աստիճանում կաթը պահել 5—10 րոպե։ Դրա համար եր յերբ ուզում են մածուն մերել կամ կաթն ու արաժանը տաքացնել, կարիք չկա տաքությունը բարձրացնել մինչև յեռման կետը, այլ բավական ե տաքացնել մինչև ջերմության վերոհիշյալ աստիճանները, պահելով այդ ջերմության մեջ 5—10 րոպե, կամ ավելի բարձրացնել տաքությունը, բայց յերկար չպահել կրակի վրա։

Կաթը 100°-ից ցածր տաքացնելը կոչվում է պաստյորիզացիա, ի պատիվ գիտնական Պաստյորի, վորն առաջին անգամ բացատրել ե, թե բակտերիաների նկատմամբ ինչ նշանակություն ունի յեռացնելը։ Կաթը պաստյորիզացիայի են յենթարկում սովորաբար այսպես. կաթն ածում են ունկնավոր ամանի մեջ և դնում յեռացող ջրում։ Զրի միջոցով տաքանում ե կաթը։ Զրով կարելի յե կաթի տաքությունը բարձրացնել մինչև յեռման աստիճանը։ Տաքացնելիս պետք է կաթն անընդհատ խառնել հատուկ խառնիչով։ Խառնիչի ծայրով կաթը հատակից պետք է անընդհատ վեր բարձրացնել, վորպեսզի նա նավասարաչափ տաքանա։ Ուղղակի կրակով տաքացնելը լավ չե, վորով հետեւ արաժանի կամ կաթի վորոշ մասը կպչում է հատա-

կին խանձվում ե և կաթից կամ արաժանից խանձահամ ե դալիս։ Զրի կաթսան պետք ե վառարանի մեջ հարմարեցրած լինի այնպես, վոր վառարանը բոլորովին ծուխ չանի, վորովինետև կաթն ընդունում է ծխի համն ու հոտը։ Յեթե կաթը տաքանում ե մինչև ցանկալի աստիճանը, նրան պահում են 5—10 րոպե, հետո հանում են տաք ջրից և իսկույն գնում սառը ջրի մեջ, վորպեսզի պաղի։ Սառցնելու ժամանակ նույնպես հարկավոր ե կաթը խառնել անընդհատ, վորպեսզի հավասարաչափ պաղի։ Սառը ջրի մեջ դնելու փոխարեն ավելի լավ ե կաթը սառցնել պաղարանի միջոցով, յեթե իհարկե, այդպիսին կա տնտեսության մեջ։

Ի՞նչ դեպքերում են տաքացնում կաթը և արաժանը։

1. Յերբ յեռացրած կաթ են գործածում։
2. Յերբ ուզում են մածուն մերել։

3. Յեթե ուզում են կաթի կամ արաժանի միջի բակտերիաները կոտորել, վորպեսզի նրանցից ստացած կարաղը դիմացկուն լինի։

4. Յերբ արաժանից ուզում են սմետանա պատրաստել։

5. Յերբ յերեսը քաշած կաթը կաթնագործարաններից վերադարձնում են տաքարատիրոջը։ (Մեզ մոտ այդ սովորությունը չկա)։


6. Հիվանդ կովի կաթով կամ խառը կաթով հորթերին կերակրելու ժամանակ (ձեռքով կերակրելու դեպքում)։

7. Յերբ կաթը հեռու տեղ են ուղարկում։

Կան մեքենաներ, վորոնց միջոցով շատ հեշտությամբ տաքացնում են կաթը կամ արաժանը։ Նրանք կոչվում են պաստյորիզատորներ։

Բուրմայստերի և Վայնի պաստյորիզատորը միացրած ե պաղարանի հետ (նկ. 27)։ Կաթը խողովակով իջնում ե և ցած կողմից մանում փայտե տակառում դրված կլայե-

կած պղնձե կաթսայի մեջ, (6): Կաթսայի և տակառի արանքը դատարկ է լինում: Կաթսան ունի մի խառնիչ, վորը մեկ բողեցում պատվում է 130 անգամ: Այս պաստյորիզատորը տաքանում է գոլորշու ոգնությամբ, այնպես վոր—այդ սիստեմի պաստյորիզատորներ բանեցնելու համար անհրաժեշտ է տնտեսության մեջ ունենալ շոգեմեքենա: Շոգին լցվում է տակառի և կաթսայի արանքը: Յերբ կաթսան տաքանում է, թողնում են կաթը




Նկ. 27. Պաստյորիզատոր Բուրմայստերի և Վայնի:

հոսի դեպի կաթսան: Խառնիչն արագ պատվելով ներսի կողմից շաղ և տալիս կաթը կաթսայի պատերի վրա, վորից կաթը խակույն տաքանում է՝ վորքան քիչ է լինում կաթի հոսանքը և շատ է լինում գոլորշու հոսանքը, այնքան արագ և տաքանում կաթը: Տաքացած կաթը բարձրանում է վերև և (B) խողովակով դուրս գալիս ու թափվում պաղարանը, վորտեղ նա պաղում է մինչև ցանկացած աստիճանը ու թափվում դույլի մեջ, ինչպես այդ

պարզ յերեսում և 27-րդ նկարի վրա: Գեղերսենի, «Աստրա» և այլ պաստյորիզատորները նույն ոչ ստեմին են պատկանում, և տարբերվում են միայն կառուցվածքի մահրամանություններով:

Այս պաստյորիզատորները պահանջում են շոգեմեքենա: Գետք և տսել, ընդհանրապես, վոր շոգեմեքենան չափազանց անհրաժեշտ է կաթնամատեսական գործարանների համար: Փայտե ամանները, ինոցին, տակառները և այն կարող են հիմնովին մաքրվել միմիայն գոլորշու միջոցով: Հենց այդ պատճառով ցանկալի յե, վոր մեր կաթնամատեսական գործարանները ձեռք բերեն շոգեմեքենաներ, վորոնք լինում են զանազան սիստեմի ու զանազան մեծության: Նրանք լավ են թե մաքրություն պահելու, թե կաթը պաստյորիզացիայի յենթարկելու համար: Նկ. 28-ի վրա ցույց է տված այդպիսի մի շոգեմեքենա:



Նկ. 28. Շոգեմեքենա.

Պատճենական պարունակով գոլորշիով չեն տաքացնում կաթը, այլ ջրով և ունեն հատուկ վառարաններ ջուրը տաքացնելու համար: Նրանք համարյա նույն կառուցվացքն ունեն, ինչպես վերևում հիշված պաստյորիզատորները: Որինակ՝ կարելի յե մատնանշել «Գերֆեկտ» պաստյորիզատորը, վորն աշխատում է ջրով: Կան և այլ սիստեմի պաստյորիզատորներ, վորոնց նկարագրությունը սակայն մեր նպատակի մեջ չի մանաւմ:

գ. Առերի կացացիա. —Պաստյորիզացիայով մեռցնում ենք կաթի միջի բակտերիաները, բայց վուրոշ բակտերիաների սպորները մնում են կենդանի, թմրած դրության մեջ՝ կաթը հովանալուն պես նրա միջի սպորներն խսկույն փոխվում, դառնում են նորից բակտերիա և բազմանում: Բազմանալու արդյունքն այն է լինում, զոր կաթն սկսում է փշանալ: Բայց յեթե ուղում ենք, զոր կաթն ամեննեին չփշանա, պետք է այնպես անենք, զոր կաթի մեջ կոտորվեն վոչ միայն բակտերիաները, այլ և նրանց սպորները և բացի զրանից ողից այլն վոչ մի բակտերիաներս չմնի: Դրա համար հարկադիր է կաթը յեռացնել յերկար ժամանակ, մոտ 20—30 վոր և կաթը յեռացնել յերկար ժամանակ, մոտ 100⁰—105⁰ ըերիտուսի: Այս գեպքում բոլոր սպորները կոտորվում են: Այդ կատարվում է հետեւյալ ձևով. կաթով լիքը և խցանով փակած շերը դնում են ամանների մեջ, փորսոց տաքությունը կրակով կամ գոլորշու միջոցով հասցնում են ցանկալի աստիճաններն և յերկար ժամանակ պահում են այդ աստիճանում: Այս ձևով տաքացնելը կոչվում է ստերիլիզացիա, իսկ մեքենաները՝ ստերիլիզատորներ: Կաթը ստերիլիզացիայի յեւ յենթարկվում ապահով շերի մեջ: Այդպես պատրաստված կաթը կարող է առանց փշանալու մնալ յերկար տարիներ, յեթե միայն մեջը ող չմնի:

մեջը ող չմարդու: — Յերբ չեն ուզում, վոր
գ. Հոմոգենիզացիա: — Յերբ չեն ուզում, վոր
կաթի միջի յուղը ստերիլիզացիայից հետո կաթից ջոկվի
և բարձրանալ վերև, այդ գեպում հատուկ մեքենայի մի-
ջոցով յուղի գնդիկները ջարդում են և շատ մանրացնում,
այսպես փոք մասը հատիկներն այլև չեն կարողանում
բարձրանալ կաթի յերեսը և մնում են նրա մեջ հավասա-
րապես ցրված: Սրան ասում են հոմոգենիզացիա: Իսկ այն
մեքենաները, փորոնց միջով հոմոգենիզացիայի յենթարկ-
վում կաթը, կոչվում են հոմոգենիզատորներ:

XIV سعیت گل و گلخانه.

1. Տաշտիպակասությունները.—Ինչպես հայոցնիյն, արաժան կամ հում սեր ստանալու համար մեզանում սովորաբար կաթն ածում են փայտե լախ տաշտերի կամ լայն թասերի մեջ (պղնձե կամ կավե), թողնում են մի վորոշ ժամանակ և յերբ սերը բարձրանում է կաթի յերեսը, շերեփով կամ մի ուրիշ գործիքով քաշում, հավաքում են: Վո՞րն է կաթի յերեսը քաշելու եյությունը: Հաճագիտա թողած կաթի մեջ յուղի գնդիկները, երբև կաթի ամենաթեթև մասեր, բարձրանում են յերեմն ու կազմում արաժան: Ամեն մի կաթնատեր շահազրդուած է, վոր կաթի միջի յուղի բոլոր գնդիկները բարձրանան վերև և արաժան կազմեն, վորպեսզի արաժանը շատ լինի և շատ կարագ ստացվի:

Տեսնենք, թե կաթի յերեսը քաշելով հստափնոր և
արդյոք կաթը լիովին յուղահան անել: Վորպեսզի հանգիստ
թողած կաթը շատ արածան տա, անհրաժեշտ, և վոր նա
տաշտի մեջ յերկար մնա առանց թթվելու, վորովհետեւ
թթու, թանձրացած կամ կտրված կաթի միջով յուղի կա-
թիները չեն բարձրանում վերև, այլ մնում են կաթի մեջ,
մերգածքում: Բայց յերկար ժամանակ կաթը թարմ պա-
հելու համար անհրաժեշտ է, վոր նախ՝ կաթը և կաթնա-
մանները, ուրեմն և տաշտը չափազանց մաքուր լինեն և
ապա կաթն սկզբից սառցրած ու այնպիսի ամանի մեջ
ածած, վոր հեշտ լինի նրան սառցնել ու այդ գրոթյամբ
պահել: Ինչպես հայտնի յե, առաջ բարձրանում են յուղի
մեծ գնդիկները, հետո միջակները և այնուհետև ամենա-
փոքրերը: Վորքան տաք և պահվում կաթը, այնքան ել
շուտ և թթվում և վորքան շուտ և թթվում: այնքան քիչ և
արածան սառցվում:

Կաթը սառը զբությամբ պահելու համար փայտե ա-
մանները, մանտվանդ տաշտը, բոլորովին անպիտք են,

գորոզինեան նրանք ուշ են սառչում և հարմար չեն սառը ջրի
մեջ դնելու համար։ Բացի դրանից, փայտե ամանները,
ինչպես զիտենք, իրենց պատերի ծակութների մեջ կեղա-
են հավաքում։ Կաթի մասերը մնում են նրանց մեջ և բակ-
տերիաների համար պարարտ հող պատրաստում։ Այդ պատ-
ճառով տաշտի մեջ ածած կաթը մի քանի ժամից հետո
մնում է թթվել և հաճախ այնպես շուտ և թթվում, վոր-
յուզի կեսը մնում է քաշած կաթի մեջ։ Ամենալավ դեպ-
քում տաշտի միջոցով քաշած կաթի մեջ մնում է վոչ պա-
կաս, քան յուղի մի յերրորդ մասը. իսկ յերբ կաթը յեր-
կաթե կամ թիթեղյա ամաններով դնում ենք սառցի մեջ,
այն վեպքում ել, թեև հաջողվում է ավելի շատ սեր ստա-
նալ, բայց գարճառ քաշած կաթի մեջ մնում է յերբեմն
1—2% յուղ, վոր նույնակա մեծ կորաստ ե կաթնա-
սիրոջ համար։

Այժմ տեսնենք, թե մեր տաշտերի շնորհիվ վորքան
ենք պատվում: Յենթաղբենք, թե քաշած կաթի մեջ մնում
է միայն յուղի մի քառորդ մասը, փորը կարելի յե մեր
պայմաններում ամենապակասը համարել: Յեթե մեկ կո-
վից տարեկան 60 փութ կաթ ենք ստանում, ուրեմն 15
փութ կաթի յուղը մնում է քաշած կաթի մեջ: Մեկ փութ
կաթից ստացվում է մեղանում, սովորաբար, $1\frac{1}{2}$ —2 փունտ
կարագ, իսկ 15 փութից կստացվի $22\frac{1}{2}$ —30 փունտ: Այդ-
քան յուղը մնում է կամ շոփ, կամ չիլ պանրի մեջ
և շատ եժան ծախվում: Յ կով ունեցող գյուղացին կոր-
ցնում է $22\frac{1}{2} \times 3 = 67\frac{1}{2}$ ֆունտ կարագ, փորը, հաշվելով
փութը 16 լուրի (նախապատերազմյան գներով) կանի 27
ըուբի 80 կոպ, կամ այժմյան գներով մոտ 47 ր. 25 կոպ.:
Սա արդեն մի մեծ կորուստ է գյուղացու համար: Պարզ ե
ուրեմն, վար կաթի յերեսը քաշելով մեծ քանակությամբ
յուղ ենք կորցնում:

Յերեսը քաշելու պակասություններից մեկն ել այն է,
վոր շատ ամաններ, բնդարձակ տեղ, մեծ սարք ու կարք

Եպահանջում: Բացի դրանից, բաշած կաթը թթվում և և
փոչ մի բանի պետք չի դալիս, բացի շոռից և ջիլ պանրից,
բայց սրանք ել բարձր տեսակի չեն լինում:

Կաթի յերեսը քաշելու ուրիշ ձեեր ել կան, բայց
նրանք բոլորը համեմատած սերզատի հետ անպետք են, այդ
պատճառով կարեոր չենք համարում կանգ տոնել նրանց
վրա, վորովհետեւ լավ կլինի մի անգամ ընդմիջա հրաժար-
վել յերես քաշելու ամեն տեսակ այլ ձեերից և արա-
ժան ստանալու համար գործածել միմիայն սերզատ:

2. ՍԵՐՋԱՏԸ (ՍԵՎԱՐԱՏԱՐԸ) ՅԵՎ. ՆՐԱ. ԳԱՐԾԱՄԱՒԹՅԱՆ
ՅԵԼԱՆԱԿԻ.

Սերգատ կամ սեպարատոր կոչվում է այն մեքենան, վորի միջոցով սերը բաժանում են կաթից։ Մեքենայի մեջ կաթը պատվում է չափազանց արագ և պարունակությունը արաժանանալու համար առաջ է առաջանալու համար։

Ա. Կաթից յուղը զատվելու պատճառը. — Յեթև վերցնենք յերեք թել և առաջինի ծայրին կապենք բամբակ, յեկրորդի ծայրին՝ փայտ և յերրորդի ծայրին՝ յերեկաթ ու սկսենք պտտել և ապա ամենառաջին պտտավեշ. լու փայրկյանին յերեքն ել միասին բաց թողնենք, այն գեպում կտեսնենք, վոր բամբակն ընկնում և մեզ շատ մոտ, փայտը մի քիչ հեռու, խոկ ամենից հեռու ընկնում և յերեկաթը: Ուրիշ խոսքով՝ վորքան ծանր և առարկան, այնքան հեռու յե ընկնում նա: Բոլոր առարկաները պտտավելուց հեռանում են պտտման կենարոնից, այսպես կոչված, կենարոնախույս (կենարոնից դուրս մղող) ուժի շնորհիվ և վօրքան ուժեղ և պտտվում առարկան, այնքան հեռու յե ընկնում և ընդհակառակն:

Յուղը կաթից բաժանվում է սերզատի միջոցով նույն կենտրոնախույս ուժի չնորհիվ:

Այս յերկութը լավ հասկանալու համար մի ամանի մեջ կաթ լցնենք, բերանն ամուր փակենք և ամանը մեծ արագությամբ պտտենք իր շուրջը: Պարզ է, փոք ամանի մեջ յեղած կաթը կապատվի նույնպես մեծ արագությամբ: Մենք պիտենք, փոք կաթը բաղկացած է մի քանի մասերից և փոք այդ մասերից ամենաթեթևը յուղի կաթիւնեցն են: Յերբ կաթը պտտվում է ամանի մեջ, մի բոպեյում միջին թփով անելով մոտավորապես 6000—7000 պտույտ, այն դեպքում կաթի ծանր մասերը հեռանում են

կենտրոնից, ընկնում են ամանի պատերի վրա, իսկ յուղի գնդիկները, իբրև ամենաթեթևները՝ հավաքվում են ամանի մեջ տեղը: Յեթե ամանի մեջ հատուկ խողովակով անընդհատ նոր կաթ հոսեր ու թափեր ամանի հատակի վրա և վոչ թե կաթի յերեսին, այն դեպ-

քում արագ պտտվելով կաթի յերկու մասերն ել կրաքանային վերև անյուղ մասը՝ պատերի մոտավ, իսկ յուղալին՝ մեջ տեղով - կենտրոնով:


Յեթե մենք փակ ամանի գլխին բանանք յերկու անցք, փորոնցից մեկն սկսվի պատի մոտավ, իսկ մյոււր՝ ամանի մեջ տեղից - կենտրոնից, այն դեպքում առաջնով կթափի անյուղ կաթը, իսկ յերկորդով՝ յուղալին, այսինքն արաժանը: Այս ե սերզատի աշխատանքի ամբողջ գաղտնիքը:

Բ. Սերզատի մասերը և կաթի անցք մասը հեր՝ Այժմ ծանոթանանք սերզատի գլխավոր

մասերի հետ և տեսնենք, թե ինչպես և կամ՞ն անցնում նրանց միջով և սերը բաժանվում կաթից: 31-րդ նկարի վրա ցույց է տրված Սերզատի հոչակավոր սերզատը:

Սերզատի գլխավոր մասը - թմբուկն է (առև նկ. 29), վորի մեջ սերը բաժանվում է կաթից: Թմբուկը կազմված է յերկու մասից՝ (նկ. 30) թմբուկի տակից (x), վորը նրա հիմքն է կազմում, և թմբուկի կափարիչոց (g): Թմբուկն ամուր փակելու համար նրա հատակին, կափարիչի և հատակի արանքում, նստեցնում են ուստինելու ողակ (v): Թմբուկի տակի կենտրոնից մի յերկար խողովակ է բարձրանում (նկ. 30 ներքեվոց վերև), վորի վրաներթով հաղցնում են խողովակի շապիկը (w), հետո ափսեները (t.s) և այսուհետեւ այդ ամենը ծածկում են կափարիչով բայց այսպես, փոք կափարիչը նստի ուստինի վրա: Կափարիչը հատակի հետ միացնելու և պնդացնելու համար գոյություն ունի կենտրոնական խողովակի պտուտակամայրը (p), վորը նստացնելով խողովակի պտուտակավոր ծայրին, պլատում են վերև սերքն, պնդացնում, կափարիչը, և այդպիսով ստացվում է փակ թմբուկ (նկ. 29):


Թմբուկը զրվում է իր բնի (նկ. 31 բ.) մեջ և նստեցնվում է բնի միջի իլիկի, կամ ինչպես ասում են, անվերջ պտուտակի վրա: Իլիկը կանգնած է դիմքի և պտուտակը:



Նկ. 29. Սերզատի թմբուկը.


Նկ. 30. Սերզատի թմբուկը բանկած զրությամբ սերքեից - վերև x - թմբուկի հատակը կենտրոնական խողովակի, սերքեին ուղղակի, անվագնելու կամ խողովակի շապիկը և միախօս, սերքանի ափսեները իրար վերևի ափսեն, գ - թմբուկի կափարիչը և յ - մայրապտուտակը:

տակածե մասով միացած և պառատակի առամբնավոր անիվին, (ա-իներտում) վորն իր հերթին առանցքի միջոցով միացած և դրաից պատող մեծ անիվի հետ (ան): Յերբ այդ անիվի կոթը (կ) պատում ենք, դրսի առամբնավոր մեծ անիվն իր հերթին պատում և իլիկի անիվը (ա-ի մեջ), իսկ այս անիվը իլիկին, վորի ծայրի վրա նստած և թմրուկը և վորը նույնպես պատվում ե իլիկի հետ միասին: Կաթն ընդունարանից (լ) ծորակի միջով թափվում և կանոնավորող թասի մեջ (թ) և այնահեղից անցնում թմրուկի կենտրոնական խողովակը: Կանոնավորող թասն ունի մի լողակ, վորն իր թեթեռության շնորհիվ լողում և կաթի մեջ և մերթ բարձրանում,



Նկ. 31. Ալֆա-Լավալի սերվոմու.

նիվը պատեհնում ենք 60 անգամ, թմրուկը մի բոլեյում պատվում և 6000 — 7000 անգամ: Կաթն իջնելով կենտրոնական խողովակով ու խողովակի շապկի անցքերով անցնում և թմրուկի հատակը, այդուղից ափաների ծակերի միջոցով լցվում ափաների արանքը և բաժանվում բարձակ շերտերի: Կենտրոնախույս ույժի շնորհիվ կաթի յուղահան յեղած մասը բարձրանում և թմրուկի արտաքին



Նկ. 32. «Լակտո» սերվոմի կտրվածքը.

Ալաքներով ցույց են տրվում սերվատի^ամասերը.

1. Կաթի^ամնացունարան: 2. Ծոճրակ, ընդունարանից կաթը հոսելու համար:
3. Լողակ, վոր կանոնավորում և կաթի հոսանքը: 4. Արաժանի պառատակը թմրուկի կափարիչի վրա: (Ալֆա-Լավալինը կողքիցն և լինում): 5. Կաթի հոսանքը կանոնավորող թասը (վորի վերեկ մասում լողակը բարձր ու ցած և անում): 6. Սերատար խողովակ: 7. Կաթնատար խողովակ: 8. Թմրուկի կափարիչը: 9. Թմրուկն ամրացնելու ողակը (Ալֆա-Լավալինը չունի): 10. Մէջին ափաները: 11. Թմրուկի հատակը: 12. Զապանակի բունք: 13. Բէկ մուֆտան: 14. Իլիկ կամ անվերջ պառատակ (վորի վրա նստած և թմրուկը և պատվում է): 15. Իլիկի առամբնավոր անիվը, յուղի մեջ նստած (պատում և իլիկին): 16. Իլիկի կրունկը: 17. Ռետինե ողակը: 18. Ըստունարանի պատվանդանը: 19. Մէծ, շարժող անիվը: 20. Անիվի ծածկոցը: 21. Անիվի առանցքը (անին): 22. Ըստունարանի պատվանդանի պառատակը: 23. Մէծ անիվի առանցքի մուֆտան: 24. Իլիկ պատող տառամագոր անիվի առանցքը: 25. Մէծ անիվի կոթը:

պատերի մոտով, իսկ յուղալին՝ կենարոնի մոտով: Թը մը ուշի զգի կողքին յերկու ծակ կա: Մեկը՝ ցած, մյուսը՝ բարձրի միջով դուրս և գալիս սերը, իսկ ցածրի միջով՝ կաթը: Բարձր ծակի մեջ մեկ պտուտակ կա, վորի մեջը՝ նույնպես ծակ և և վորի միջով դուրս և գալիս արաժանը: այդ պտուտակը կոչվում է արաժանի պտուտակ, վորովնեան գրա միջոցով են կանոնավորում արաժանի թանձրությունը: (Տես նկ. 29) Յերբ ուղում են, վոր արաժանը թանձր դուրս գա, պտուտակը գեպի ներս են պտուռմ, իսկ յեթե ուղում են ջրալի լինի՝ գեպի դուրս: Թմբուկից դուրս յեկած սերն ու կաթն ընդունելու և ամանների մեջ պահելու համար թմբուկի գլխին հաղցնում են յերկու խողովակ՝ կաթնատար (ե) և սերատար խողովակներ (ս), վորոնցից ցածինը դուրս և տանում կաթը, իսկ վերինը՝ արաժանը (նկ. 31):

Սերզատի կազմության և նրա մասերի դասավորության մասին պարզ դաշտավար կազմելու համար բերում ենք իր կազմվածքով Ալֆա Լավալին շատ նման «Լակտա» հայտնի սերզատի կտրվածքը բոլոր մասերով (տես նկ. 32):

Սերզատը լավ գործածելու համար անհրաժեշտ և ծանոթ լինել նրա բոլոր մասերի հետ և իմանալ թե յուրաքանչյուր մաս ինչ գեր և կատարում: Բացի այդ ամեն մի բանցնող պետք է կարողանա բոլոր մասերը քանզի և նորից հափաքել: Վերևում բերած սերզատի կտրվածքը (նկար 32) այդ տեսակետից, վորոշ չափով կարող է թեթեացնել աշխատանքը: Մի քանի մասերի դերը, ինքնըսանիքյան պարզ յերեւմ և այն աշխատանքից, վոր կատարում են դրանք և դրանց մասին համապատասխան աեղերում խոսել ենք: Սակայն կան մասեր, վորոնց գերն ու նշանակությունը պարզ չե առաջին հայացքից: Այս կարզի մասերի նշանակության ու գերի մասին և վոր կարեոր և յերկու խոսք ասել: Նախ յուղելու մասին:

Մեքենայի աշխատանքը հեշտացնելու համար անհրաժեշտ և իրար շփող բոլոր մասերը յուղել: Յուղելու կա-

րիք ունից անիվների առանցքները և մյուս շփող մասերը: Յուղելու համար մեքենայի համապատասխան տեղերում փոքրիկ անցուեր են թողնված: Յերբեմն հատուկ յուղաման են զնում հարմար տեղում (տես, նկար 33), վորակից յուղը կաթիլ-կաթիլ թափակում ու յուղում և մեքենայի համապատասխան մասերը: Մեծ մասմբ յուղն ածում են լիփկի անիվի բնի մեջ (տես նկ. 32) անիվը պտույտ գալով շաղ և տալիս յուղը բոլոր շփողների մասերի վրա:

Թմբուկի միջի թիթեղյա բարակ ափսեները նրա համար են, վոր կաթը բաժանվի բարակ շերտերի և բացի գրանից, կաթի շարժումը գեպի վեր յերկար տեի ու կաթը յերկար ժամանակ յենթակա լինի կենարունախույսութին, վորի շնորհիվ սերն ավելի մաքուր և բաժանվում կաթից: Վորքան ափսեները մոտ են դարսած իրար վրա, այնքան սերն ավելի մաքուր և բաժանվում կաթից:

Յերբ առաջին սնուամ հնարեցին սերզատ մեքենան, թմբուկի մեջ ափսեներ չեյին զնում և այդ պատճառով կաթը վատ եր յուղահան լինում: Ափսեների գործադրությունը խոշոր չափով նպաստեց սերզատների աշխատանքի հաջողությանը: Ափսեների շնորհիվ թե արագ և կատարվում աշխատանքը և թե մաքուր և յուղահան լինում կաթը:

Ալֆա-Լավալի հին սերզատների ափսեները համարակալած եյին լինում, այնպես վոր իրար վրա դարսելը մեծ ժամանակ եր պահանջում: Այժմ ափսեները շինվում են տուանց համարների և այդ պատճառով ամանների դարսելն անհամեմատ հեշտացել ե: Այժմ բոլորն ել աշխատում են ափսեներն առանց համարների շինել:



Նկ. 33. Յուղաման
(Ալֆա-Լավալու):

Կեսորոնական խողովակի վրա հազգրած շապիկն ընդունում է նույն խողովակից հոսող կաթը, իսկ մյուս կողմից իր տակի Յ նախակներով, փորոնք հատակի հետ միասին կազմում են խողովակներ, հավասար կերպով կաթը բաշխում է ափսեների մեջ: Բացի դրանցից սա իր արտաքին ակոսիկներով վեր և ուղղում սերի հոսանքը և միենայն ժամանակ ափսեների համար իբրև հենարան և ծառայում:

Քի մուֆտան նրա համար և, վոր իլիկին ուղղահայտ դիրքով և ամուր պահի: Մուֆտայի շուրջն ամրացրած և զապահակ, վորը մեզմացնում է իլիկի ցնցումները:

Գ. Սերդատների տեսակները.—Այսուղ նկարագրած «Ալֆա-Լավալ» և «Լակտա» սերգատները ամենայն իրավամբ համարվում են ամենալավերը: Ներկայումս զոյտքյուն ունին մոտ 150 տեսակ սերգատներ: Նրանք բոլորն ել իրենց եյտկան մասերով նման են այս յերկուսին և տարբերվում են սրանցից միայն իրենց մանրամասնություններով: Որինակ՝ կան սերգատներ, վորոնց ափսեների ձեն ու դիրքը տարբեր են, կամ թմբուկները չեն նստած բնի մեջ ուղղահայտ դիրքով, այլ կախ են ընկած իլիկի ծայրին և տարբեր ձեւ յեն: Ամենալավ թմբուկներ համարվում են նրանք, վորոնք կարծ են ու լայն: (ինչպես Ալֆա-Լավալինը): Տարբերություններ կան և ուրիշ յերկրորդական նշանակություն ունեցող մասերի միջև:


Սերգատների տեսակների նկարագրության վրա ավելորդ և կանգ առնել վորովինեան նախ դրանցից շատերն անպետք են և ապա ֆիբրմաներն ամեն տարի նոր փոփոխություններ են մոցնում ու այդպիսով կատարելազորձվում և մեքենայի կազմությունը, այնպես վոր այսորվանիարագրած սերգատը մի տարուց հետո արդեն կարող և նացած համարվել, բացի դրանից գործարանները գնողներին տալիս են սերգատի մանրամասն նկարագրություն-

ներն ու գործածության յեղանակը: Այսուղ կարեոր և միայն թվել այն սերգատների անունները, վորոնք իրենց աշխատանքով ամենից հայտնի յեն և մեր պայմաններում կարող են հաջողությամբ գործադրվել:

Այդ տեսակետից առաջին տեղը բռնում են, ինչպես արդեն առել ենք՝ «Ալֆա-Լավալի սերգատները (տես. նկ. 31), վոր պատրաստում և «Սեպարատոր» անունը կրող նվերական Ալցիններական Ընկերությունն Ստոքհոլմում: Այդ ընկերության բոլոր սերգատները (Վիոլա, Կոլիբրի, Դեղի, Ռեգինա) պատրաստվում են ամենալավիր և ամուր նյութերից: Կրանք զիմացկուն են, իսկ կառուցվածքը շատ պարզ և ու հասարակ: Թմբուկը շարժվում և չափազանց հեշտ ու մեզմ կերպով, բոլոր մասերը հեշտությամբ քանդվում են ու սարքվում: Լվանալին ու մաքուր պահելը դժվարությունների հետ չեն կապված: Իսկ վոր տմենազիստորն ե, այդ սերգատները կաթը չափազանց մաքուր են յուղահան անում: Կաթի մեջ մնում և վոչ ափելի, քան 0,1 ° յուզ, իսկ բարեհաջող պայմաններում յերբեմն և 0,05, ուրիշ խոսքով՝ կաթի մեջ մնում և 1000 մասից մի մասը, կամ կես մասը, մի բան, վոր պետք և համարել տեխնիկայի փասավոր հաղթություններից մեկը:

Այդ ընկերությունը պատրաստում է զանազան մեծության սերգատներ, այնպես վոր թե փոքր և թե խոշոր տնաեսությունները կարող են հավասարապես ոգտվել այդ սերգատների առավելություններից: Վիոլա № 3 մի ժամում զատում և 5 դույլ կաթ, Վիոլա № 4՝ 8 դույլ, Կոլիբրի տեսակները (բարձր և ցածր պատվանդաններով) 12—16 դույլ, Դեղին՝ 25—33 դույլ, Ռեգինան՝ 50 դույլ: Սրանք բոլորը ձեռքով պատվող սերգատներ են, բայց կան և այնպիսիները, վորոնք մի ժամում անց են կացնում մինչև 245 դույլ, բայց սրանք պահանջում են և ավելի մեծ ուժ, այսինքն ձիու, գոլորշու (շոգու), կամ ելեկարականության գործադրություն:

Մեր արտելային խոշոր գործարաններում, սովորաբար, գործ են ածում 50 գույլանոց սերպատներ, մանր գործարաններում՝ 25—30, նայած կաթի կամ պանրաշիճուկի քանակին: Հին գործարաններում Ալֆա-Լավալի սերպատները բավականին տարածված են, բայց նրանք համարյա բոլորն ել հին ձեր յեն և ցանկալի յե վոր փոխվեն, վորովհետև նորերն անհամեմատ ավելի յեն կատարելազործված: Անհրաժեշտ ե հին սիստեմի սերպատները փոխարինել նորերով: Բացի զրանից, անհրաժեշտ ե նաև ամեն իերակ տարածել մեզանում Ալֆա-Լավալի սերպատները:



Նկ. 34. «Լակտա» սերպատ

Զեռքով աշխատելու համար պատրաստվում են մի քանի համարներ, վորոնք մի ժամում անց են կացնում 10 դույլից մինչև 50 դույլ կաթ: Այս սերպատների փոքր տեսկաներից մոտ 35 հատ մտել ե Հայաստան դեռ 19—20

թ. թ., այնպէս վոր սրանք մեր մանր կաթնատնտեսներին անձանոթ չեն:

Իրենց ամբողջ կազմով և այլ հատկություններով: «Լակտա» սերպատները շատ նման են Ալֆա-Լավալի սերպատներին և սրանց նման պետքական ու արտադրող են:

«Միլկա» սերպատներն ավելի եժան են, վորովհետև պատրաստվում են համեմատաբար վատ նյութից և «Լակտա»-ին փոխարինել չեն կարող:

Ալֆա-Լավալի (նորերի) և «Լակտայի» առավելություններից մեկն ել այն և, վոր նրանց թմբուկներն ազատ նստած են իլիկի զլիին և կարողանում են ինքնուրույնաբար հավասարակառություն պահպանել նույնիսկ այն դեպքերում, յերբ մեքենան մի քիչ ծուռ և կանգնացրած (բալանսող սերպատներ): Նույն ձեր կառուցվածք ունի և «Միլկան»:


Վերջերս մեզանում տարածվել են «Բալտիկ» և «Դոմ» սիստեմի մանր սերպատները, վորոնք հարմար են մանր տնտեսությունների համար: Սրանք տարածվելին մեզանում այն ժամանակ, յերբ շուկայում ուրիշ սերպատներ չկային և մանր սերպատների պահանջը մեծ եր:

Լավ սերպատների չարքին են պատկանում նաև «Մելլո» (տես նկ. 35) «Գլոր», «Լանց» և այլ սերպատները, վորոնք, ինչպես և վերևումնկարագրվածներն, ունեն զանազան համարներ թե խոշոր և թե մանր տնտեսությունների համար:

«Մելլո» սերպատը տարրերվում է մյուսներից նրանով, վոր նրա թմբուկը կափ և ընկած և վոչ թե նստած իլիկի վրա:

Դ. Մերզատի նշանակությունը և առավելությունները.—1. Սերպատի միջոցով կաթն ավելի լավ է յուղահան լինում: Ամենավատ զեղքում այդպիսի կաթի մեջ մնում ե 0,1—0,2% յուղ այսինքն 1000 մատց 1 կամ 2 մատ, իսկ տաշտով քաշած կաթի մեջ վոչ թե

հազար մասից մեկը կամ յերկուսն ե մեռում, այլ դրանից տասն անգամ ավել, այսինքն հարյուր մասից 1 կամ 2 մաս: Եերգատը տաշտից առնվազն 10 անգամ կաթն ավելի մաքուր է գատում, ուրեմն և 10 անգամ ավելի ողուտ է տալիս:



Ակ. 35. «Մելոս» սերգատ.

կեղտը բաժանում է կաթից, կեղտը նստում է թմբուկի պատերի վրա, այդ պատճառով սերն ու քաշած կաթը չափազանց մաքուր էն ստացվում: Այդ կեղտի մեջ են անցնում և այս բակտերիաները, վորուք կաթից ծանրանուի պատճառատել պանիր, մածուն, կեֆիր և այլն, կամ հորթերին տալ առանց զնակալու նրանց: Տաշտով քաշած կաթը միշտ թրթվում է և նրանից մերանով պանիր չի ստացվում, իսկ վոր գլխավորն է, թթու կաթով հորթերին չի կարելի կերակրել:

3. Աշխատանքի ժամանակ սերգատն ամբողջ

կեղտը բաժանում է կաթից, կեղտը նստում է թմբուկի պատերի վրա, այդ պատճառով սերն ու քաշած կաթը չափազանց մաքուր էն ստացվում: Այդ կեղտի մեջ են անցնում և այս բակտերիաները, վորուք կաթից ծանր են:

2. Սերգատի միջոցով յուղի գատումը կատարվում է չափազանց արագ կերպով շատ կարճ ժամանակում: Այդ պատճառով հարավագործ է միշտ թարմ յուղահան արած կաթը ստանալ, վորից կարելի յե մերանուի պատճառատել պանիր, մածուն, կեֆիր և այլն, կամ հորթերին տալ առանց զնակալու նրանց: Տաշտով քաշած կաթը միշտ թրթվում է և նրանից մերանով պանիր չի ստացվում, իսկ վոր գլխավորն է, թթու կաթով հորթերին չի կարելի կերակրել:

3. Աշխատանքի ժամանակ սերգատն ամբողջ

Տաշտով քաշած կաթը, ընդհակառակն, չափազանց կեղտու և լինում, մանափանդ կեղտուափում և արաժանը, վորոնեակ նա կաթի յերեսին և գանվում: Այդ պատճառով սերգատով զատած կաթն ու արաժանը ավելի դիմացկուն են, շուտ չեն փշանում և նրանցից ավելի լավ մթերքներ են ստացվում, քան տաշտի միջոցով ստացած սերից ու քաշած կաթից:

Սերգատով զատած արաժանը, յուղը և կաթը նույն մաքրության պատճառով, ավելի առողջարար են, քան տաշտի միջոցով ստացածները և ավելի բարձր են զնահատվում:

4. Սերգատը տաշտերի նման ընդարձակ տեղ չի պահանջում, չի պահանջում նույն մեծ քանակությամբ ստույց և այլ հարմարություններ, վորոնք անհրաժեշտ են կաթը տաշտերի և թասերի մեջ պահելու ժամանակ:

Այս առավելությունները բավական են, վոր ամեն մեկը հարմարվի տաշտ գործածելուց և ձեռք բերի սերգատ մեքենա, մանափանդ ընկերական հիմունքներով:

Յե. Լավ սերգատ ե համար վում այն՝

1. Վորը հասարակ, պարզ և բոլորի համար հասկանալի կազմ ունի և հեշտությամբ լվացվում, մաքրվում է:

2. Վորը կաթը մաքուր է յուղահան անում, այսինքն՝ կաթի մեջ չափազանց քիչ յուղ և թողնում:

3. Վոր ամուր, շուտ չմաշվող և դիմացկուն մասեր ունի:

4. Վորի թմբուկը շարժվում է թեթև ու սահուն կերպով:

5. Վորի թմբուկը ինքնուրույնաբար կարողանում է հավասարակշիռ գիրք ընդունել (բալանսող սերգատները):

6. Վորի մեջ իրար շփվող մասերի քանակը և շփման աստիճանը հասցրված են մինիմումի:

7. Վորի մասերը հեշտ քանդվում և սարքվում են և բացի գրանից, հեշտությամբ լվացվում, մաքրվում են:

8. Վորի ավաեները համարակալած չեն և վոչ ել իրար
հետ կապված:

9. Վորի մասերը հեշտությամբ և անընդհատ յուղ-
փում են ու միենում ժամանակ մեծ քանակությամբ յուղ
չեն սպառում:

10. Վորի կաթի ընդունարանը ցածր է նստած և հեշ-
տացնում ե կաթ ածելը:

11. Վորն իր գնի և մեծության համապատասխան
արտադրողականություն ունի:

Այս բոլոր պահանջներին միանգամայն բավարարում
են վերը մասնանշում Արֆա-Լավալի և «Լակտա» սերզատ
ները: Սերզատի ընտրության ժամանակ անհրաժեշտ է այս
պայմանների վրա լուրջ ուշադրություն դարձնել:

Զ. Ինչ պայմաններում ե սերգատի միջո-
ցով կաթը լավ յուղահան լինում. — Կաթը յուղա-
հան անելու վրա ազդում են հետեւյալ պայմանները:

1. Կաթի ջերմության աստիճանը
2. Թմբուկի պատվելու արագությունը
3. Հոսող կաթի քանակը:

1. Վորքան կաթը տաք է, այնքան ավելի մաքուր և
նրանից զատվում արածանը: Բայց շատ տաք կաթ սեր-
զատով անցկացնելը լավ չի ազդում յուղի վրա, կարագը
թույլ է ստացվում, ծեծվում է և ճարպանում: Այդպատ-
ճառով կաթը սերզատով անց են կացնում սովորաբար
30—35° Ց. (24—28° Ռեոմյուրի). այս աստիճաններում
կաթը լավ է յուղահան լինում: Յեթե կաթի տաքության
աստիճանը ցածր է, անհրաժեշտ է կաթը տաքացնել: Ամենից
լավ այն կլիներ, յեթե կաթը կթելուց անմիջա-
պես անցկացվեր սերզատով, յերբ դեռ կաթի ջերմության
աստիճանը չի իջել, վորովիետե նոր կթած կաթի ջերմու-
թյունը սերզատի համար ամենալավն է: Սառը կաթը լավ
չի յուղահան լինում: Երա մեջ ավելի հեշտությամբ են ջոկ-
վում մեծ գնդիկները, իսկ փոքրերը՝ դժվարությամբ:

Իսկ տաք կաթի մեջ յերկուսն ել հեշտությամբ են ջոկվում:
Յերբ տաքության աստիճանը Յելսիուսի 30°-ից (24°Ռ.)
պակաս ե լինում, յուղահանության չափը պակասում է
գդալի կերպով:

2. Վորքան արագ է պատվում թմբուկը, այնքան
մաքուր ե զատվում յուղը: Մեծ սերզատներն ավելի
զանդաղ են պատվում: Հետևապես և ավելի պակաս չա-
փով են յուղահան անում կաթը: Յուրաքանչյուր սերզա-
տի թմբուկն ունի իր պատյափառ նորմալ արագությունը.
սովորաբար այդ արագությունը մի բովելում հասնում է
6000—7000 պատույափի: Անիվի կոթի վրա միշտ գրված է
լինում, թե քանի անգամ պետք է պատել կոթը մեկ բովե-
յում: Անիվի կոթը 60 անգամ պատելիք մի բովելում
թմբուկը պատվում է 6000 անգամ: Ամեն անգամ կոթը
պետք է մի բովելում պատել այնքան անգամ, վորքան
ցույց է տրված կոթի վրա: Առաջին անգամ հարկավոր է
արագությունը կանոնավորել ժամացույցով, թմբուկի ձայ-
նին ընտելանալ և այնուհետև հեշտ և նույն արագությամբ
պատել: Շատ արագ պատելը վահնգափոր է, սերզատի
մասերը կարող են փշանալ իսկ դանդաղ պատելը կպական-
ցնի յուղահանության աստիճանը, ուստի միշտ անհրա-
ժեշտ է զեկավարվել սերզատի վրա ցույց դրված արա-
գության թվով, վոչ պետք է պակսեցնել վոչ ել ավելա-
ցնել ցույց տված արագությունը:

Խոշոր սերզատների համար, վորոնք շարժվում են
գոլորշու կամ երեկորականության ուժով, գոյություն ու-
նեն զանազան ձևի և սիստեմի արագացույցեր:

3. Յուրաքանչյուր սերզատ իր աշխատանքը կանո-
նավոր կատարելու համար պահանջում է վորոշ քանակու-
թյամբ կաթ, վորոշ ժամանակամիջոցում: Յերբ տվյալ սերյ
զատի համար վորոշված չափից կաթի հոսանքն ավելա-
ցնում է, յուղահանությունը պակասում է, քանի վոր կաթի

ուժեղ հոսանքի ճնշման շնորհիվ կաթն արագությամբ և անցնում թմբուկի միջով և կարճ ժամանակ և զանգում կենորոնախույս ուժի ազդեցության տակ, հետեւապես և քիչ և յուղահան լինում: Պակաս հոսանքն, ընդհակառակն, բորձրացնում և յուղահանության աստիճանը, այսինքն՝ վրբանքիչ կաթ և հոսում մի ժամկա ընթացքում թմբուկի մեջ, այնքան ավելի լավ և ջոկվում յուղը կաթից, սակայն վրչ այն չափով, վոր ձևանառ լիներ զգալիորեն պակսեցնել կաթի սովորական հոսանքը, քանի վոր մեքենան կաթի պակաս հոսանքի գեղքում իդուր աշխատում և, մաշվում և բացի զրանից՝ իդուր ժամանակ և կորչում: Հենց այդ պատճառով ել ամենալավը՝ յուրաքանչյուր սերպատի համար կաթի վորոշած քանակն և: Կաթի այդ քանակը կանոնավորելու համար գոյություն ունի լողակը (տես նկ. 32), վորը կաթի հոսանքը պահում և յուրաքանչյուր սերպատի համար մատավորապես վորոշված սահմաններում, ինարկե, նկատի առնելով թմբուկի պառայտների սովորական արագությունը:

Կաթի մեծ հոսանքը ջրիկ և դարձնում արաժանը և ընդհակառակն՝ թույլ հոսանքը թանձրացնում և նրան:

Ե. Սերգատը բանեցնելու յեղանակը.—Յեթե սերպատը նոր և գնած անհրաժեշտ և նրա բոլոր մասերը զգուշությամբ հանել արկղից և հափառել համաձայն սերպատին կցած հրահանգների:

Նախ հարկավոր և սերպատի բոլոր մասերը, այն և թմբուկը, ափսեները, կաթնատար և սերպատը խողովակները լվանալ սողացի ջրով, վողողել տաք ջրով և ցամաքեցնել մաքուր շրբով: Մյուս մասերը, ինչպես են պատվանդանը, թմբուկի բունը և այն հարկավոր և մաքրել վորոշուց: Այնուհետև հարթաչափի (վատերպատի) ոգնությամբ մեքենան հարկավոր և մի հարթ և ուղիղ տեղ ամրացնել: Սերպատը, նայած հարմարության և մեքենայի

մեծության՝ ամրացնում են հատակին կամ զրա համար շինած հատուկ սեղանին: Մեծ սերպատներն հատակին ամրացնելու համար մի վորեւ տեղում անցը են բաց անում և այստեղ, գետնի մեջ, խորը, հասաւ ոյտն են անկում: Սյունը կողքերից պետք է ամուր նեցուկներ ունենա, վորպեսզի կանգուն և անշարժ մնա: Սյունի յերեսին մեխում են $1\frac{1}{2}$ —2 վերշոկ հաստություն ունեցող պինդ տախտակի վորին և ամրացնում են սերպատը, անպայման հարթաչափի ոգնությամբ, վորպեսզի սյունի զիլա տախտակը հորիզոնական գիրք ունենա, և սերպատը ուղղահայց լինի: Աննշան թեքությունն իսկ կարող և մեքենային վնասերը մասերը վիշտառ են, շուտ մաշվում, թմբուկը դժվարությամբ և շարժվում և սերը լավ չի դատվում:

Յերբ սերպատն ամրացված և, մասերը բվացած են, հավաքված, կարելի յե սկսել աշխատանքը: Սակայն թրմրուկը շարժելուց առաջ անհրաժեշտ և շիման մեջ զանգող բոլոր մասերը յուղել սերպատին կցած հրահանգների կամ խորհուրդների համաձայն: Աշխատանքի ընթացքում ել պետք և նսկել վոր բոլոր մասերը յուղին: Յուղելու անցքերի մեջ ջուր և կեզա չոլիտի մանեն, անցքերը պետք և ծածկած պահել:

Սերպատը յուղելու համար հարկավոր և գործադրել հատկապես զրա համար պատրաստված յուղը: Ուրիշ յուղելն անպետք են և կարող են վշացնել սերպատի քսիող մասերը: Մասնագետներից շատերը խորհուրդ են տալիս քսիող մասերն առաջին անգամ սպիտակ նավթով քսել և ապա յուղել «սերպատի» յուղով:

Կաթը սերպատով անցկացնելուց առաջ հարկավոր և ընդունարանի սերքերի անցքը փակելիչով կամ ծորակով փակել, և հետո մեջը կաթ լցնել, վորը պետք և ունենա 30—35° տաքություն Յելսիուսի ջերմաչափով, կոմ

24—28⁰ աստիճանն Ռեոմյուրի: Ամենալավը՝ Յելսիուսի
30—32⁰ կամ Ռեոմյուրի 24—25⁰ և: Նոր կթված կաթի
տաքությունն ամենահարժարն է: Յեթե կաթը սառն է,
պետք է տաքացնել, իսկ յեթե շատ է տաք, պետք է հո-
վացնել մինչեւ վեր ցուց տված աստիճանները և հետո
ածել ընդունարանի մեջ: Ընդունարանի ծորակը կամ փա-
կիչը դեռ չբացած՝ սկսում են պտտել մեծ անխվր, սկզբում
չափազանց զանգաղ և հետո հետզետե արագացնելով մինչեւ
վոր կոթի պտույտների թիվը մի ըրպեյում հասնի անխվի
կոթի վրա գրած թվին: Այդ արագությունը կամաց-կա-
մաց պետք է առաջ բերել 2—3 ըուպեյում և վոչ շուտ:
Ամեն մի սերգատ իր արագության չափն ունի և այդ չա-
փից չպետք է շեղվել: Այդ արագությանը հասնելուն պես
պետք է ծորակը բանալ, վոր կաթը հոսի թմբուկի մեջ:
Չպետք է մոռանալ կաթնատար և սերեատը խողովակների
տակ ամաններ գնել սերի և քաշած կաթի համար:

Սերգատով ամեն անզամ անընդհատ կարելի յե աշխա-
տել վոչ ավել, քան մեկ ու կես ժամ և ահա թե ինչու:
կաթի միջի կեղար, վորն ամենամանը քամիչի միջոցով
հույնիսկ անցնում է և բակտերիաների մի մտար, (վորոնք
կաթից ծանր են) թմբուկի պտտելուց, կպչում են նրա
պատերին: Այդ կեղար կաթի մասերի հետ միասին կադ-
մում և սերգատի լորձունքը: Յերբ սերգատը $\frac{1}{2}$ ժամից
յերկար և աշխատում, այդ կեղար շատությունից նորից
սկսում և խառնվել կաթի հետ և խանգարում է թմբուկի
աշխատանքը: Այդ պատճառով յուրաքանչյուր մեկ ու
կես ժամից հետո հարկավոր և դադարեցնել աշխատանքը,
մաքրել լվանալ թմբուկի մասերը և նորից սկսել աշխատանքը:
Վորքանկեղատու և կաթը, այնքան պիտի շուտ պետք և
դադարեցնել աշխատանքն ու լվանալ մեքենան:

Սրանից պարզ է, վոր սերգատ գնելիս պետք և այն-
պիսին ընտրել, վոր անտեսության մեջ յեղած ամբողջ

կաթը կամ պանրի շինուկը կարողանա անցկացնել $\frac{1}{2}$
ժամում: Սերգատի միջոցով անցկացնելու համար կա-
թը մեկ ու կես ժամից ավել տաք պահեն ել լավ չե,
փորովհետեւ նաև կարող է փչանալ:

Ամբողջ աշխատանքի ժամանակ կաթի տաքությունը
պետք է պահել նույն աստիճանում, իսկ պատճան արա-
գությունը՝ անփոփոխ:

Սերի թանձրությունը կանոնավորելու
համար պետք է վարդել այնպես, ինչպես
ցուց և արված XIX դիմի, 2-րդ բաժնի «ը»
կետում: Յեթե ուզում ենք սմետանա պատ-
րաստել, անհրաժեշտ է արագանն ավելի
թանձր դուրս բերել, իսկ կարագ հարելու
համար կարելի յե պատրաստել և ջրիկ ա-
րաժան: Առաջին դեպքում հարկավոր և
այնպես կանոնավորել սերի հոսանքը, վոր
ամեն մի 8—9 ֆունտ կաթից ստացվի 1
ֆունտ արաժան, իսկ յերկորդ դեպքում
ամեն մի 6—7 ֆունտ կաթից՝ 1 ֆունտ
արաժան, ուրիշ խոսքով 100 ֆունտ կաթից
առաջին դեպքում պետք է ստացվի մոտա-
վորապես 12—13 ֆունտ սեր, իսկ յերկ-
րորդ դեպքում՝ 15—16:

Կաթը վերջանալուն պես պետք է գա-
զարեցնել պատերը և թողնել, վոր թմբուկն նկ. 39. Ափա-
ները գարսած
իրեն-իրեն կանգնի, յերբեք չպետք և ուժով
կանգնեցնել թմբուկը, փորովհետեւ զրա-
չից իլիկի պտտուածակը և անխվիների ատամները կարող
են փչանալ: Յերբ արաժանն այլն չի թափվում, պետք
և քաշած կաթ ածել թմբուկի մեջ, փորպեսի մնացած
արաժանը լվացվի և ամբողջովին դուրս գա թմբուկից:
Այս քաշած կաթի տաքությունը լավ է, վոր 2⁰ Յ. բարձր



լինի, քան սերգատուի անցկացրածինը: Այսամանը դուրս բերելու համար պետք է թմբուկի մեջ ածել այնքան քաշած կաթ, վոր բռնի թմբուկի կեսը: Թմբուկը կանգնելուց և արաժանի ամբողջովին դուրս գալուց հետո պետք է խսկույն սերգատը քանդել և բոլոր մասնը լվանալ ինչպես մաքուրաք ջրով, զործածելով խոզանից շինած խոշանակներ, մաքուր շորով ցամաքեցնել և պահել չոր տեղում, վոր չժամանուին:

Ափսեների լվանալը հեշտացնելու համար գործ են ածում նկ. ՅԵ-ՌՈՒ ցույց տված յերկաթե հենարանը, վորը բաղկացած է ծայրերում իրար կալցրած յերեք հատ յերկաթե ձողերից և ծառայում են ափսեները վրան նստեցնելու համար: Ափսեները թմբուկի կենտրոնական խողովակից հանում և ուղղակի հաղցնում են այս ձողերի վրա, առանց խախտելու ափսեների կարգը, լվանում են, թողնում գրանց վրա և կարիք յեղած դեպքում նույնպես առանց ափսեների կարգը խախտելու հաղցնում են սերգատի կենտրոնական խողովակի վրա:

Ամեն անգամ աշխատանքից առաջ պետք է լվանալ սերգատի բոլոր մասերը, ցամաքեցնել և ապա զործածել: Պատվանդանն իր բոլոր մասերով պետք է ամեն անգամ շորով մաքրել:

Տարեկան առնվազն յերկու անգամ անհրաժեշտ և քանդել ամբողջ սերգատը, կարգի բերել և մաքրել բոլոր մասերը:

ՅԵԹԵ սերգատի աշխատանքները գաղարում են յերկար ժամանակամատ, այն դեպքում սերգատը մաքուր պահելու համար լավ է նրա բոլոր մասերին վաղելին քաել, վորպեսզի չժամանուին ու այդպես թողնել մինչև աշխատանքի վերսկրելը:

XV. ԿԱՐԱԴՅԱՆ ԵՎ ՆՐԱ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԶԵՎԵՐԸ

1. ՔՆԴՀԱՆՈՒԻՐ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մեր գյուղացու պատրաստած կարագը մաքուր չե, յերկար չի գիմանում, շուտ և կծվում ու փշանում: Այդ և պատճառը, վոր մեղ մոտ կարագի գործածությունն իրեն այդպիսին՝ չափազանց սահմանափակ է, հացով համարյա չեն ուտում, այլ հալում են և կերակուրի համար դործ ածում, վորովհետեւ միայն հալած գրությամբ կարելի յեր գյուղական յուղը յերկար ժամանակ պահել առանց փշանալու:

Այլ և քաղաքակիրթ յերկուներում: Այսաեղ յուղ հարելը և հալած յուղ զործածելին ընդունված չե, հացով ուտելու և կերակուր պատրաստելու համար այնտեղ գլխավորապես կարագ են գործ ածում: Այդ համագումանքն ատիպել և կարագ պատրաստելու համար այնպիսի միջոցներ հնարել, վոր կարագն առանց հալելու յերկար ժամանակ դիմանա: Այդպիսի կարագը հալած յուղից միշտ թանկ և զնահատվում, այդ պատճառով ել ամելի ձեռնուու յելինում յուղը ծախել կարագի ձևով, քան հալած գրությամբ: Մեղ մոտ և միայն, վոր հալած յուղը մեր գյուղական կարագից թանգ արժե և գա հասկանալի յե, վորովհետեւ մեր գյուղական կարագը հալելուց շատ և պակասում և անպեսք և իրեն կարագ զործածելու համար: Լավ պատրաստած կարագից ամելի շատ հալած յուղ և դուրս գալիս, համեն ու հոտն անհամեմատ ամելի լավ և լինում և ամելի յերկար և դիմանում, քան կեղաստ կարագից պատրաստած յուղը: Այս ամենին պետք և ամելացնել նաև այն, վոր յեվրոպական յեզանակով միենույն հավաքուց ամելի շատ կարագ և ստացվում, քան մեր գյուղական ձեռվ: Այս ամենից միանգամայն պարզ է, թե վորքան մեծ նշանակություն ունի լավ կարագ պատրաստելը և

վորքան շահագետ ե դա դյուզացիների համար: Հենց այդ պատճառով ել հարկագոր ե ծանոթանալ լավ կարագ պատրաստելու ձևերի հետ:

2. ԿԱՐԱԳ ԳՈՅԱՆԱԼՈՒ ԵՅՈՒԹՅՈՒՆԸ

Կաթի մեջ յուղի գնդիկները դանվում են հեղուկ (հալված) գրությամբ (կարգա և գլուխը): Յերբ ինոցու մեջ արաժանը կամ մածունը հարում ենք, յուղի կաթիլները շարժումից ցնցվում են, պնդանում և կարագի ձև ընդունում, կորցնելով իրենց միջի տաքության մի մասը: Բայց այդ տաքությունը մնում է հավաքսի մեջ և բարձրացնում է նոր տաքությունը: Այդ է զլխափոր պատճառը, վոր ինոցին հարելիս հավաքսը տաքանում է:

Հավաքսը տաքանում է նաև այն պատճառով, վոր նրա մասերն իրար են շփվում:

Յուղի կաթիլները հարելուց վոչ միայն պնդանում են, կարագի ձև ստանում, այլ և շարժումից իրար են քավում, կպչում և այդպիսով մեծ գնդիկներ կազմում: Յերբ հազարագոր գնդիկներ միանում են իրար, այդ գեղքում կազմվում են աչքով տեսանելի մասը հատիկներ, վորոնք մեծանալով դառնում են կորեկի չափ: Այս գեղքում տառւմ են, վոր հավաքսը հարցել ե, և կարագը հատիկներ և կազմել:

Շատ հարելուց հատիկներն իրար կալչելով մեծանում են, վոսպի, սիսեռի չափ դառնում և վերջապես դառնում են խոշոր գնդեր: Լավ կարագ ստանալու համար չպետք է թույլ տալ վոր կարագի հատիկները կորեկի հատիկներից մեծանան:

3. ԻՆՉ ԵՅՈՒԹԵՐԻՑ ԵՆ ՅՈՒՂ ՊԱՏՐԱՍՏՈՒՄ

Ա. Մածնի հավաքս.— Ամենաընդունված նյութը, վորից յուղ են պատրաստում մեզանում, այդ մա-

ծունդ ե, վոր յեթե որո՞րի վրա հավաքում են, մի վորեւ ամանի մեջ, կոչվում է հավաքս: Հավաքս ե կոչվում և հարելու համար հավաքած արաժանը: Ավելի լավ ե հավաքս անվանել կարագ ստանալու համար զործածվող բոլոր նյութերը: Մեր ժողովուրդը յուղի խոշորագույն առկուր պատրաստում է մածնի հավաքսից:

Շատ կթան ունեցողը հնարավորություն ունի միենույն որը կամ յերկու որը մեկ անգամ ինոցի հարել մածնից: Շատերը քիչ կաթ ունենալու պատճառով մածունը հավաքում՝ պահում են կողերում կամ ուրիշ ամաններում, մինչև վոր հարելու համար հարկագոր քանակությամբ մածուն հավաքի: Մածնի հավաքոր պահում են նույնպես տիերի և կավե ամանների մեջ: Տկերի մեջ պահում են քրգերը, թուրքերը՝ և տեղանեղ ել հայերը: Հավաքսը տիերում պահելը հատուկ է քոչվորներին, կուլտուրապես հետամնաց տարբերին: Կավե ամանները գործադրում են այն շրջաններում, վորտեղ անտառ չկա կամ փայտեղներ թանկ ե: Փայտե կողերը տարածված են անտառաշատ կամ անտառին մոտ զանովող շրջաններում:

Տկերում պահված մածունը մորթու համ ու նոր և ստանում, հոտում, անպետքանում ե: Դրա կարագը վշտում, զգվելի համ է ունենում:

Կավե և փայտե ամաններում մածունը համեմատաբար լավ ե պահվում, բայց յերկար մնալով չափազանց թթվում ե, իսկ հավաքսի յերեսը հաճախ բորբոքնում է: Յերբ հավաքսը յերկար և մնում, նրա մեջ ընկնում են զանազան բակտերիաներ, և շատ գեղքերում հոտեցնում հավաքսը: Բորբոքնելու և հոտելու առաջն առնելու համար շատ տեղերում հավաքսին աղ են խառնում:

Բավարար հատկությամբ յուղ ստացվում է այն մածնից, վորը յերկար չի պահվում: Վորքան յերկար և պահվում հավաքսը, այնքան վատ կարագ ե ստացվում նրանից:

Մածունը նույն կաթն է, միայն թթված պիճակում: Աւրեմ յուղի կաթիները կամ գնդիկները մածնի մեջ ել շատ նոսր են տարածված, մեկը մյուսից հեռու, ինչպես և կաթի մեջ: Հարելու ժամանակ նրանք իրար ուշ են հանդիպում և ուշ կաշում, մանավանդ մանր գնդիկները, վորոնց մի մասը հաճախ մնում է թանի մեջ՝ ցրված և այդպիսով կարագ քիչ և ստացվում:

Յուղի կաթիները ցնցումներից ավելի հեշտ են իրար մատենում, յերբ կաթը թթված է, բայց գեռ չի կարգել, չի կորդացել: Կարգած կաթի կորդ մատերն իրենց մեջ ամուր պահում են յուղի կաթիները և հեշտությամբ բաց չեն թողնում: Հարելու ժամանակ կորդ մածնի մատերը լրիվ չեն ջարդվում, զրանց մի մասը մնում է թանի մեջ մանր համբկներով ու իր մեջ պահում փորոշ չափով յուղի մանր կաթիներ (գնդիկներ): Մեր դյուկացիք այդ բայց գիտեն և շատերը հարելուց առաջ մածունը ձեռներով տրաբում են, վար կորդ հավաքնը մանրանա, ջրանա: Բայց փորքան ել ձեռքով տրաբենք, անհնար և կորդի մատերը բոլորովին քանդել ու այնքան մանրացնել, վար նրանք այլևս իրենց մեջ յուղի փոքրիկ մասեր, գնդիկներ շկարողանան պահել: Յեկ այդ պատճառով ել յուղի մի մասը կարող և մնալ թանի մեջ:

Մածնի հավաքսից յուղ ստանալու համար հարկավոր ե ինոցին յերկար հարել և իրոք, մածնի հավաքսից յուղն սպելի ուշ և ստացվում, քան արաժանից:

Կորդ մածնի մանր մատերը խառնվում, անցնում են կարագի մեջ և դժվարությամբ են ջոկվում նրանից: Սրանից հետեւում ե, վար մածնից ձեռնառ չե յուղ պատրաստել: Յուղ պատրաստելու նպատակով կաթը չպետք է մածուն գարճներ, այլ պետք է սեղանով կաթը յերկար մածունը լուսակացնել և այդպիսով մածնի հավաքսը կարողանում է յերկար մածն առանց հոտելու կամ կծվելու: Այսինչ, արաժանի հավաքսը սպացվում է հում կաթից, փորի մեջ կանաչի հավաքսը ստացվում է հում կաթից, փորի մեջ կանաչի հավաքսը ստացվում է հում կաթից և ողնում: Արաժանի հավաքսը կողի մեջ յերկար մածնով բարձրանում է վերե, իսկ տակը մնում է անյուղ ջուրը (շիճուկը): Կողի հատակի մոտ անցք են շինում և խցանով փակում: Փատմանակ առ ժամանակ խցանը հանում են, վար անյուղ մասը դուրս գտ միջից, արաժանը նստի ու նոր տեղ բացվի կողի մեջ: Շատ տեղերում արաժանը հավաքում են ամիսներով, փորպեսի մեկ անգամից հարեն:

Շատերն աղ չեն անում, մանավաճանդ յեթե արաժանը յերկար չեն պահում: Այս գեպքում ել արաժանը շատ հեշտ կծվում է: Յերկար պահելու գեպքում աղին ել չի ոգնում: Արաժանը շատ հաճախ կծվում, դառնանում և ի վատ հոտ և ստանում: Յերբեմն արաժանը խառնում են մածնի հավաքսի հետ և այս գեպքում արաժանը համեմածնի սպատակով, վարպեսի մեկ անգամից հարեն:

Շատերն աղ չեն անում, մանավաճանդ յեթե արաժանը յերկար չեն պահում: Այս գեպքում ել արաժանը շատ հեշտ կծվում է: Յերկար պահելու գեպքում աղին ել չի ոգնում: Արաժանը շատ հաճախ կծվում, դառնանում և ի վատ հոտ և ստանում: Յերբեմն արաժանը խառնում են մածնի հավաքսի հետ և այս գեպքում արաժանը համեմ-

մատարար յերկուր և դիմանում, բայց հետո դարձյալ փշանում է:

Սրանից պարզ է, վոր հավաքս պահելու այս ձեռքը միանգամայն վասակար են զյուղացու համար: Կողի տակի ջրալի մասը հեռացնելով, զյուղացին մեծ քանակությամբ յուղ է կորցնում, վորովհետեւ այդ ջրալի մասում շատ յուղ է մնում: Մնացած հավաքսն ել կամ հոտում է, կամ կծկում, կամ չափաղանց թթվում: Սրանից ստացած կարաղն ել մեծ մասամբ լուզը չի լինում և յուղը քիչ է դուրս գալիս:

Արաժանի հավաքսն ուրիշ կողմերով ել ե արարելովում մածնի հավաքսից:

Նա շատ ավելի յուղալի յէ, քան մածնինը: Այդ պատճառով ել արաժանի հավաքսն ավելի շուտ և հարվում: Կարելի յէ առել, վոր արաժանի հավաքսից համարյա յերկու անգամ ամելի արագ և յուղ ստացվում, քան մածնի, վորովհետեւ արաժանի մեջ յուղի կաթիները կամ գնդիկները շատ մոտ են զտնվում իրար և մի քիչ հարելուց, հեշտությամբ կոչում են և կարագ կազմում: Իսկ ինչ վերաբերում է հատկապես կաթի յերեսից քաշած արժանի յուղային կաթիներին, պետք ե առել վոր սրանց մեջ խոչըներն ավելի շատ են լինում, և այդ պատճառով ավելի շուտ են միանում իրար հետ ինոցի հարելու ժամանակ:

Մածնի հավաքսը միշտ ել լավ թթված ու կորդացած և լինում, իսկ արաժանի հավաքսը կարելի յէ թթվացնել վորչափ ցանկանում ենք:

Արաժանի հավաքսից ստացած կարաղն ավելի մաքուր և լվացվում, քան մածնինը:

Դ. Մածնի և թթված արաժանի խռոր հավաքսը՝ վերեւ առածներից արդեն պարզ է, վոր յեթե այդ յերկու տեսակ հավաքսները խառնենք ու հարենք՝ յուղը հավաքար կերպով չի ստացվի, յուղի մի մասը շուտ

կոտացվի, իսկ մյուսը՝ ուշ: Արաժանի հավաքսը, վոր մեծ մասամբ բաղկացած է յուղի խոշոր գնդիկներից՝ շուտ կարվի, իսկ մածնինը՝ ուշ: Այսպես վոր յուղի դուրս դալը միաժամանակ չի կատարվի: Յուղի մի մասը շուտ դուրս դալով կծեծվի ու խոշոր գնդեր կկազմի, իսկ մյուս մասը կարիք կունենա դեռ հարվելու և այդպիսով հավաքար հավաքսից կարագ չի ստացվի:

Արաժանի և մածնի հավաքսները հարելու համար պահանջվում են տաքության արրեր աստիճաններ:

Պարզ է, ուրեմն, վոր պետք և մածնի հավաքսը թթու կամ քաղցր արաժանի հավաքսից առանձին հարել:

Մյուս կողմից պարզ է նաև, վոր մեր գյուղերում հավաքս պահելու ընդունված ձեռքն ոգտավիտ չեն և դրանից պետք է ձեռք քաշել:

Վորտեղ կա սերզատ մեքենա ու հնարավոր և մանր տափարատերերին միացնել արտելների շուրջը, այստեղ վոչ կարիք կլինի կարտպը մածուն մեքելով պատրաստել, վոչ ել կաթի յերեսը քաշելով յերկար սպասել, վոր հավաքսը շատանա, չափաղանց թթվի ու փշանա:

Պետք է թթվաշ արաժանը սարբերել թթվածից, առաջնից միշտ հաջողությամբ կարելի յէ լավ վորակի կարագ սատանար յերկրորդից-դժվար: Այդ պատճառով պետք է արաժանի շատ թթվելու առաջն առնել:

Դ. Քաղցր արաժանը՝ Առանձին պետք է հարել նույնպես քաղցր արաժանը՝ չպետք ե խառնել վոչ թթված արաժանի, վոչ ել մածնի հետ: Քաղցր արաժանը մի քիչ այլ կերպ է հարվում, քան թթված արաժանն ու մածունը, և նրա կարաղն ավելի բարձր է գնահատվում: Քաղցր արաժանից յուղն ավելի ուշ և ստացվում, քան թթվաշից և ավելի շուտ, շատ թթվածից: Այդ պատճառով, յեթե քաղցր արաժանը խառնենք թթվաշ կամ թթված յեթե քաղցր արաժանը խառնենք թթվածից կամ թթված

արաժանի հետ, հավաքսի մի մասը կմնա առանց հարվելու: Հարվելու համար քաղցրն ավելի քիչ տաքություն եղած է, քան թթվաշն ու թթվածը:

Քաղցր արաժանն ստացվում է միայն սերզատի միջոցով: Փուած կաթից չափազանց գժվար և քաղցր սեր ստանալ: Յեթե նույնիսկ կաթնամնները պահենք սառուցի մեջ, դարձյալ կաթը փորոշ չափով կարող է թթվել:

Սերզատով ստացված արաժանը, սովորաբար, անմիջապես չեն հարում, այլ սպասում են մի քանի ժամ, վոր հասնի: Պահում են ջերմության 7—80-ում աստիճանում Յելսուսի ջերմաչափով 2—12 ժամ: Յեթե սերզատից գուրու գալուց, անմիջապես արաժան հարենք, ապա այդպիսի արաժանը նախ ուշ կհարպի և հետո քիչ կարագ կստացվի: Յերբ արաժանը մի քանի ժամ պահվում է, այն դեպքում նրանից ստացված կարագը համեղ և դիմացկուն է լինում:

4. ԱՐԱԺԱՆԻ ՆԵՐԿԵԼԸ

Շատերը սիրում են, վոր կարագի գույնը դեղին լինի: Բայց կարագը դեղին և լինում կանաչ արոտի ժամանակ, դարնանն ու ամսուր: Աշնան և մանավանդ ձմեռվա կարագի գույնը սպիտակ և լինում: Սպառողները սպիտակ կարագը չեն սիրում և նրան լավ դին չեն տալիս: Այդ պատճառով աշխատում են աշնան ու ձմեռվա սպիտակ կարագին արհեստականորեն դեղին գույն տալ:

Դեղին գույնով ներկելու համար հարկավոր և գործադրել այնպիսի ներկեր, վորոնք վնասակար չեն առողջության համար և չեն փոխում կարագի համն ու հոտը:

Ամենալավ և, կարելի յե տաել, միակ ներկը, վոր այժմ գործածության մեջ ե, զա «աննատո» կամ «որլեան» կոչված ներկն է: Այս ներկը պատրաստում են հատուկ գործարաններում և ծախում են հեղուկ գրությամբ: Քաղաքից, զափրանից և այլ նյութերից պատրաստած

ներկերը անպետք են: Նրանք փշացնում են կարագի համն ու հոտը: «Աննատո»-ից բացի վոչ մի ներկ չափետք ե գործածել: Ներկում են վոչ թե կարագը, այլ արաժանը, վորովինետե կարագի բոլոր մասերը չեն ներկվում և բացի գրանից կարագը խառնելուց ծեծվում ու ճարպանում ե, իսկ արաժանը համաշափ և ներկվում: Արաժանի մեջ ներկը գցում են չափով, վորպեսզի տնտեսության ամբողջ կարագի գույնը միատեսակ լինի: Զմեռն ավելի յեն գցում, իսկ աշնանը պակաս, նայած տեղական կարագի բնական գույնին և սպառողի պահանջնին: Յեթե կարագի գույնը շատ բաց ե, սպիտակ, պետք ե ներկը շատ ածել և ընդհակառակն: Ներկի քանակը համեմատում են կաթի քանակի և վոչ թե արաժանի քանակի հետ: Ներկը չափելու համար լավ ե ունենալ սանտիմետրների բաժանված մի ապակե չափ: Թե վորքան ներկ և հարկավոր ածել մի փութ կաթից ստացված արաժանի մեջ, կախված է տեղում պատրաստվող ամառվա կարագի բնական գույնից: Ներկը պետք ե այնքան վերցնել, վոր կարագն այդ գույնն ունենա: Մի յերկու անգամ փորձելուց հետո կարելի յե վորոշել ներկի չափը: Ամենալավ գույնը համարվում է աշնանացան ցորենի ծղոտի գույնը: Շատ տեղերում մեկ փութ կաթից ստացված արաժանին խառնում են 6—7 խորանարդ սանտիմետր «աննատո»:

Վոչ մուգ ներկելն է լավ, վոչ ել թույլ, ավելի լավ ե գույնը քիչ թույլ լինի, քան չափազանց մուգ:

Պետք ե նկատել, վոր ներկելը մի անհրաժեշտ չարիք ե և վորտեղ ներկելու լուրջ հիմք կամ կարիք չկա, ամեն կերպ պետք ե խուսափել ներկելուց: Յեթե կարագի գույնը արգելք չի հանդիսանում ծախելու համար, բոլորովին չպետք ե ներկել:

5. ԻՆՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ ԵՆ ԱԶԴՈՒՄ ԿԱՐԱԳ ԳՈՅԱՆԱԼՈՒ
ՎՐԱ

Խնոցի հարելիս կարագ գոյնալու վրա ազդում են հետեւալ պայմանները՝

1. Հավաքսի ջերմության աստիճանը,
2. Հավաքսի տեսակը,
3. Խնոցու տեսակը և հավաքսի քանակը։

Հավաքսի ջերմության աստիճանը խոշոր ազդեցություն ունի կարագի գոյնալու վրա։ Շատ տաք և շատ սառը հավաքսը լավ չի հարփում։ Թեպետ տաքության բարձր աստիճանի դեպքում կարագն արագ և գուրս գալիս, և յուղը մաքուր և զատվում, բայց կարագն ստացվում և ճարպակալած, փափուկ և թանոտ, թանը շատ դժվարությամբ և քաշվում։

Չափազանց սառը հավաքսն ընդհակառակն, ուշ և հարփում և յուղը քիչ և ստացվում։ Ստացված կարագը կոշտ և լինում և լավ չի մշակվում։

Խնչպիսի տաքություն պետք և ունենա հավաքսը, վոր լավ հարփի։ Դա կախված է՝

(ա) Բնակարանի տաքությունից, հավաքսի տեսակից, կերից, տարփա յեղանակից, հավաքսի յուղալիության աստիճանից կամ թանձրությունից։

Բնակարանի ջերմությունն ազդում և հավաքսի ջերմության վրա։ Ցեթե շրջապատը հավաքսից տաք է, հավաքսը հետզհետե տաքանում և և ընդհակառակն։

Հարփելու ժամանակ հավաքսը սովորաբար 1—2⁰ Ց. տաքանում է, ուստի հավաքսը տաքացնելու ժամանակ այդ պետք և ի նկատի առնել և ամառը խնոցու մեջ ածելուց առաջ հավաքսի ջերմությունը սովորականից պետք և մի քիչ պահան վերցնել (1—2⁰ Ց.), իսկ ձմեռ՝ տվելի։

Ամառվա և գարնան արոտից փափուկ կարագ և ստացվում, ձմեռվա կերից՝ պինդ, ուրեմն այդ հանգամանքը նույնպես թելագրում ե ամառը հավաքսի տաքության աստիճանը մի քիչ ցածր պահել, ձմեռ՝ բարձր։

Փորձը ցույց ե տալիս, վոր հավաքսի տարբեր տեսակները կանոնավոր հարփելու համար պահանջում են տաքության տարբեր աստիճաններ։ Որինակ՝ պետք և ընդունել միջին թվով։

Քաղցր արաժանի համար 10—12⁰ Ցելիուսի թթվաշ՝ „, „, 13—14⁰ „,
իսկ թթված կաթի կամ մածնի համար 17—18⁰ „,

Խնոցու տեսակներից ել և կախված հավաքսի տաքության աստիճանը։ Ամենացածր աստիճան պահանջում են լեֆելի հորիզոնական, Հոլտինյան ձիու կամ գողորշու խնոցիները, միջակ տաքություն պահանջում են Հոլշտինյան ձեռքի, լեֆելի ուղղահայց, անգլիական «վիկտորիա», ամերիկական «Ֆավորիտ» խնոցիները, իսկ ամենից շատ տաքություն պահանջում են ճոճվող խնոցիները։ (Մեր տեղական փայտե խնոցին ճոճվողների տեսակից ե)։

Թթվաշ արաժանից ավելի շուտ և կարագ ստացվում, քան քաղցրից, մածնից ավելի ուշ և ստացվում, քան քաղցր և թթու արաժաններից։

Արաժանի թթվությունը պետք և չափավոր լինի, վորովհետև թթվության բարձր աստիճանը դանդաղեցնում և կարագի արագ գոյանալը և բացի գրանից կարագը պահանակ և ստացվում։ Թթվաշ արաժանը յերբեք չպետք և կորդանա, այլ պետք և միայն թանձը լինի, բայց հեշտությամբ հոսի։

Վորքան յուղալի յե հավաքսը, ուրեմն և թանձը, այնքան արագ և հարփում, վորովհետև յուղալի հավաքսի մեջ յուղի գնդիկներն իրար շատ մոտ լինելով շուտ կպչում

Են և հեշտությամբ հարվում: Յուղալի հավաքսից յուղն ավելի լրիվ ե դուրս գալիս և թանի մեջ քիչ յուղ և մում: Սակայն այստեղ ել ծայրահեղ թանձրությունն աննպաստ ե ազդում: Յեթե թանձրությունը փորոշ սահմանից անցնում ե, կարագը լավ չի գոյանում, փորովհետեւ մեծ գնդիկներն արագ են հարվում, իսկ փոքրերը դանդաղ և այդպիսով, յուղի մի մասը մնում ե թանի մեջ առանց հարվելու կամ յերկար հարելուց յուղը ծեծվում է: Փորձը ցույց ե տվել, վոր $17-18^{\circ}/_0$ յուղ պարունակող արաժանն ամենից լավ և հարվում: Գործնականաւմ բավականանում այն թանձրությունով յերբ մի մաս արաժանն ստացվում ե 6—7 մաս կաթից: Մրանցից պարզ ե, թե վորքան անհրաժեշտ ե կանոնավորել սերի թանձրությունը սերզատի միջոցով: Թանձրության համեմատ պետք ե կանոնավորել և տաքությունը: Թանձր արաժանը պետք ե ավելի սառը լինի, քան ջրալին:

Թե ինչպիսի խնոցու մեջ ե ավելի լավ կարագ գոյանում, գեռես ստուգված չե, բայց խնոցու յուրաքանչյուր տեսակն ունի իր լցնելու չափը: Որ. «Վիկտորիա», «Տրիումֆ», «Ֆավորիտ» և նման խնոցիները պետք ե լցնել իրենց պարունակության $\frac{1}{3}$ մասը: Ավել լցնելու դեպքում հավաքող գանդաղ ե հարվում, կարագ քիչ ե ստացվում և հավաքող պահանջում ե տաքության ավելի բարձր աստիճան: Խնոցին գործածելիս պետք ե միշտ աչքի առաջ ունենալ տվյալ խնոցու լցնելու չափը:

Խնոցու շարժման արագությունը նույնպես ազդում է կարագ գոյանալու վրա: Ընդհանրապես խնոցու արագ շարժվելուց հավաքու շուտ ե հարվում, դանդաղ շարժմանը ուշ: Այդ ել մեծ չափով կախված ե խնոցու տեսակից: Կան խնոցիներ, վորոնք յերբ արագ են պտտվում, հավաքու ուշ ե հարվում: Որինակ՝ «Վիկտորիա» խնոցին և նմանները շատ արագ չի կարելի պտտել, փորովհետեւ

արագ պտտելիս հավաքու կպշում և պատերին ու ինքը նույնպես խնոցու հետ պտտվում և այդ պատճառով հավաքու չի թակվում, վոր շուտ հարվի:

6. ԽՆՈՑԻՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ

Մեր գյուղական տնտեսություններում խնոցի պտտրաստում են կավից ու փայտից: Շատ տեղերում քոչվորները գործ են ածում և տկարուներ վոչխարի մորթուց: Հասկանալի յե, վոր տկարուները կեղտու են և անպետք, այնպես վոր ամեն կերպ պետք ե խուսափել դրանցից:

Անտառագուրկ շրջաններում պատրաստված կավի խնոցիներն անհարմար են նրանով, վոր հեշտ կոտրվում են, փոխադրության համար անհարմար են, շուտ սառչում ու տաքանում են և գժվարությամբ են լվացվում ու մաքրվում:

Խնոցու համար ամենալավ նյութը փայտն է: Նա տաքության վատ հաղորդիչ ե, ուշ տաքանում, ուշ ել սառչում ե, իսկ այս հատկությունը շատ լավ է կարագ գոյանալու համար: Բայց մեր փայտե խնոցին մի շարք պակասություններ ունի, վորոնցից գլխավորը—բերանի փոքրությունն ե, վորի պատճառով անկարելի յե խնոցին կանոնավոր լվանալ և մաքուր պահել: Բացի զրանից մեր փայտե խնոցին վատ և գանդաղ ե հարում, թանի մեջ յուղ շատ ե մնում: Այդ պատճառով պետք ե անպետք համարել և մեր տեղական փայտե խնոցին:

Ծնդհանրապես լավ խնոցին պետք ե բավարարի հետեւյալ պահանջները՝

ա. Նա պետք ե շինված լինի փայտից և վոչ կավից կամ մետաղից: Մետաղյա խնոցին նրանով ե վատ, վոր շուտ տաքանում ու սառչում ե և ժանդութելիս համ ե տալիս, յուղը քսվում ե պատերին ու ճարպանում: Փայտե խնոցու պատերը պետք ե լինեն լավ հղկած, վոր շունե-

նան խորթ ու բորդ տեղեր, ձեղքեր և այլն: Խնոցին հարկավոր ե շինել կաղնու փայտից: Խնոցու ներսի անկյունները պիտի լինեն կոլոր, վորպեսզի հնարավոր լինի լավ մաքրել: Կարագ հանելու անցքը պետք ե լայն լինի կարագը հեշտությամբ հանելու և մանավանդ խնոցին հիմնովին լվանալու և ոդափոխելու համար: Վատ ոդափոխվող խնոցուց անդուրեկան հոտ ե գալիս:

բ. Լավ խնոցին պետք ե պարզ կազմվածք ունենա, ամուր լինի, յերկար գիմանա, հեշտությամբ շարժվի ու քիչ աշխատանք պահանջի.

գ. Նա պետք ե ամուր փակվի: Ներսում չպետք ե ունենա յերկաթե և այլ մետաղյա, մանավանդ չկլայեկած մասեր, վորոնք ժանդոտելով վատ են ազդում կարագի համի վրա.

դ. Լավ խնոցին պետք ե արաժանի հավաքսը հարի 35—45 րոպեյում և կարագը լրիվ դուրս բերի:


յե. Խնոցին պետք ե համեմատաբար եժան լինի:

զ. Խնոցու միջի սարքը, թակիչները յեթե կան, պետք ե հեշտությամբ հանվեն, լվացվեն ու նորից հեշտությամբ դրվեն տեղը.

ե. Խնոցին պետք ե ունենա ապակյա փոքրիկ պատուհան հարելու ժամանակ խնոցու ներսը դիտելու համար:


Զկա մի խնոցի, վորը լիովին բավարարի այս բոլոր պահանջները, բայց կան այնպիսիները, վորոնք միանգամայն բավարարում են ամենագլխավոր և եական պահանջները:

Այդ տեսակետից բավականին հաջող պետք ե համարել «Վիկտորիա» խնոցին (տես նկ. 37), վորի մեջ արաժանի հավաքսը հարգում ե 30—45 րոպեյում և վորը մի բուպեյում պետք ե պատել 50—60 անգամ: Պետք ե լցնել այդ խնոցու ^{1/3} մասը: Այս խնոցու կազմը պարզ ե և հասարակ: Նա մի



նկ. 37. «Վիկտորիա» խնոցին. «Վիկտորիա»-ի նման են շինված և «Տրիումֆ» ու Ամերիկական «Թավորիտ» խնոցիված և «Լեֆելդի» հորիզոնական դիրքով՝ խնոցին (տես նկ. 38) ունի իր պակաս կողմերը, վորոնցից ամենամեծն այն ե, վոր յուղ հանելու անցքը նեղ ե, կարագը հանելու կամ հավաքսն ածելու և խնոցին լվանալու համար անհարմար ե:

Մեծ յուղագործարանների համար լավ են նույնպես դանիական կամ Հոլշտինյան խնոցիները (տես նկ. 39): Նրանք չեն պատվում, այլ կանգնած են, իսկ պատվողը միջի ըրջանակն ե, վորը հավաքսի մեջ պատվում ե ու իր թակիչներով հարում: (Նկ. 39 ցույց ե տալիս Հոլշտինյան ձեռքի խնոցին):



նկ. 38. Լեֆելդի հորիզոնական խնոցին.

7. ԿԱՐՍԻ ՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ՅԵՂԱՆԱԿԻ

Յերբ հարելու համար հավաքսն արդեն պատրաստ է, սառցնում կամ տաքացնում են հավաքսը ու հասցնում ջերմության անհրաժեշտ աստիճանին, այն ե՛ քաղցր արաժանի համար մոտ 10—12°-ի, թթվաշ արաժանի՝ 13—14°-ի և մածնի համար՝ 17—18°-ի, նայած տարվա, ժամանակին, կաթի հատկության և այն (տես ԽV գլուխ):

Այդ աստիճաններն ավելի լավ ե փորոշել փորձով: Տաքության աստիճանը փորոշելու համար պետք ե հիշել վոր նորմալ ջերմության ժամանակ արաժանից կարավն ստացվում ե սովորաբար 35—45 րոպեյում, մածնից ավելի ուշ: Յեզ յեթե հավաքսը դրանից շուտ ե հարվել, նշանակում ե տաքությունը բարձր ե յեղել: Հաջորդ անգամ հարելիս պետք ե ջերմությունը պակասեցնել, իսկ յեթե ուշ ե հարվել՝ ավելացնել: Այդ ձեռվ մի քանի փորձերից հետո կարելի յե գանել տվյալ տնտեսության հավաքսի տաքության հարմար աստիճանը: Իհարկե, տաքության բարձրացնելն ու իջեցնելը պետք ե կատարել ընդունված սահմաններում: Առանձին գեպքերում հավաքսի նորմալ տաքությունը կարող ե վերեռում բերած աստիճաններից բարձր կամ ցածր լինել:

Նախքան հավաքսը խնոցու մեջ ածելը, հարկավոր ե խնոցին պատրաստել հարելու համար:

Յեթե խնոցին նոր ե և բոլորովին գործածված չե, նրանով հարել չի կարելի, այլ հարկավոր ե նախ տաք սողանով լվանալ, վորպեսզի փայտի համն ու հոտը դուրս գա: Դրա համար խնոցին լցնում են սառը ջրով ու թողնում 2—3 որ ու հետո ջուրը թափում: Դրանից հետո 2 դույլ տաք ջրի մեջ լուծում են 1 ֆունտ սողա, ածում են խնոցու մեջ, պինդ փակում, մի քանի անգամ պատրաստում խնոցին ու այդպես թողնում մի ամբողջ որ: Հետեւ կամ 2—3 անգամ մաքուր տաք

ջոռվ լվանում, ապա ողողում են մաքուր սառը ջրով, վորից հետո կարելի յե խնոցին գործածել: Լավ կլինի սողաջրից հետո տաք ջուրը թողնել խնոցու մեջ մինչև պաղելը:

Գործածության մեջ յեղած խնոցին հարկավոր ե ամեն անգամ հարելուց առաջ տաք, յեռացրած ջրով լավ լվանալ և հետո վողողել սառցրած մաքուր ջրով: Այս ձեռվով լվանալու իմաստը հետեւալին ե: Տաք ջրի ազգեցության տակ խնոցու փայտի միջի ծակոտիները լայնանում են և լցվում են ջրով, դրանից անմիջապես հետո սառցրած ջրով հանկարծակի լվանալիս խնոցու պատերը սառչում են, սառչում են նույնպես պատերի ծակոտիների մեջ գտնված ջրի կաթիները: Նրանք չեն գոլորշիանում, մնում են փայտի մեջ և թույլ չեն տալիս, վոր հարելիս յուզը կպչի խնոցու պատերին, ու ճարպանա: Յեթե կարագը պատերին ե կպչում, դա նշանակում ե, վոր խնոցին լավ չի լվացած: Վոչ միայն խնոցին, այլ և այն բոլոր առարկաները, վորոնք շփում ունեն կարագի հետ, պետք ե գործածելուց առաջ նույնպես թրջիկն տաք ջրում և ապա սառը ջրում: Այդ առարկաներն են՝ խնոցու մեջ յեղած խառնող կամ ծեծող փայտերն ու տախտակները, կարագ հունցելու կամ արորելու մեքենան, արորելու սեղանն իր թակիչով, կաղապարները, թիակները, դանակները, քամելու շորը, պերգամենտի թուղթը և այն: Այստեղ բերած փայտերն գործիքները պատրաստում ե համարի փայտից:



Նկ. 39. Հուշտինյան խնոցին.

լվացած խնոցու մեջ ածում են հավաքսը, խնոցու բերանը փակում և սկսում հարել: Ինչպես վերեռում առաջինք, յուրաքանչյուր խնոցի ունի իր հարելու արագությունը:

«Վիկտորիա», «Տրիումֆ», «Թափորիա» և Լեֆելդի խնոցիները հարելու համար միայն նրանց $\frac{1}{3}$ մասն են լցնում, ձոճվողներինը՝ $\frac{1}{2}$: Դրանից ավելի ածելու կարիք չկա, վորովհետև հավաքսը դժվար է հարվում, կարագն ուշ և ստացվում և յուղը լրիվ չի դուրս դալիս, այլ մի մասը մնում է թանի մեջ:

Հարելու սկզբից մի բոպե անց բաց են անում խնոցու գաղի ծորակը, վոր դոյացած գաղը դուրս գա: Թթու արաժանն ու մածունը ավելի շատ գաղ են առաջնում, քան քաղցր արաժանը: Ծորակը պետք է այնուհետև բանալ մի յերկու անգամ ևս, մանավանդ թթու հավաքս հարելու ժամանակ, մինչև վոր դոյացած ամբողջ գաղը դուրս գա: Յերբ խնոցու մեջ շատ գաղ է հավաքվում, խնոցին կարող է տրաքել:

Բացի զրանից մեծ քանակությամբ դոյացած գաղը ճնշում է գործ դնում հավաքսի վրա, թույլ չի տալիս, վոր հեշտ շարժվի և այդպիսով խանգարում է կանոնավոր հարվելուն:

Խնոցին պետք է շարժել սկզբից մինչև վերջը միալար ձեռվ, ընդունված արագությանմբ, առանց արագացնելու կամ դանդաղեցնելու:

Հարելու նորմալ պայմաններում 15—20 բոպեյից հետո խնոցու պատերին և դիտողության պատուհանին կպչող թանձր հավաքսը հատիկավոր տեսք է ստանում. այդ ցույց է տալիս, վոր կարագ դոյանալն արդեն սկսվել է, իսկ յեթե զրա փոխարեն հավաքսը փրփրում է, բայց յերկար ժամանակ հատիկավոր տեսք չի ստանում, կնշանակի հարվելն ուշանում է, ուրեմն և հավաքսը ստոն է:


Այդ գեպքում տաքությունը կանոնավորելու համար անհրաժեշտ է տաք ջուր կամ տաք քաշած կաթ ածել խնոցու մեջ, վորակեսպի կարագը ժամանակին զոյանա: Ժամանակից շուտ հարվելը նույնպես ցանկալի չե, ուստի յերբ նկատվում է, վոր հատիկները սովորականից շուտ են զոյանում, սովորաբար խնոցու մեջ աղբյուրի սառը ջուր կամ սառցրած քաշած կաթ են ածում, և կտմ մաքուր սառուցյի կտորներ են պցում: Գետերից և ընդհանրապես զրաից հավաքած սառուցը կեղտուտ է, ուստի և անպետք ե խնոցու մեջ զցելու համար: Պետք է գործածել միմիայն աղբյուրի մաքուր ջրից արհեստական ձեռվ պատրաստած սառուցյը: Այդպիսի սառուց լինում է միայն մեծ քաղաքներում և մեզ համար գործնական նշանակություն չունի, և յեթե այդպիսին չկա, ավելի լավ է բոլորովին սառուց գործ չածել: Ամեն անգամ, թե սառցնելու և թե տաքացնելու գեպքում, այնքան են ջուր կամ քաշած կաթ ավելացնում, վոր հավաքսի տաքությունն իջնի կամ բարձրանա մոտ 2—3 սատինան ծելսիուսի:

Վորքան մոտենում է հարելու ժամը, այնքան շուտ-շուտ ե հարկավոր նայել, վոր կարագը հանկարծ չգոյանա, չծեծվի ու չջարդվի: Ջարդված կարագը քսվում է ու ճարպանում:


Դիտողության ապակուն նայողը կարող է ճշտությամբ վորոշել կարագ դոյանալու ընթացքը: Սկզբում ապակին պատած է լինում թանձր հեղուկով, վորը հեշտությամբ չի հոսում ապակու վրայից: Հետզհետե թանի շերար ապակու վրա ջրիկանաւմ է և հարվելուն մոտենալիս ապակին մաքրվում է թանից, թանն այլևս չի կաշում ապակուն, վորի վրա յերեռում են միայն մանր հատիկներ (տես նկ. 40 և 41):

Հատիկները գոյանալու հետ միաժամանակ փոխվում ե և հավաքսի ձայնը: Հավաքսն սկսում է խշալ, այդ

ցուց ե տալիս, վոր յուղ գոյանալը շատ մոտ ե: Յերբ հատիկներն սկսում են գոյանալ և ձախը փոխվում ե, պետք ե խնոցու շարժումը դանդաղեցնել, ապա հարկավոր ե խնոցին բաց անել և նայել, յեթե կարագի հատիկները խաշխաշի հատիկների չափ են դարձել, հարկավոր ե սառցով պաղեցրած ջուր կամ քաշած կաթ ածելու պա-



Նկ. 40. Յուղի գնդիկները
հարկելոց ճ ըսպե առաջ.



Նկ. 41. Յուղի գնդիկները հարկելու վայրկյանը մոռանենալիս.

տերը նույնպես ջուրի մաքրել: Ջուրն այնքան են ածում, վոր տաքությունն իջնի 2—3 աստիճանով (3): Այնուհետև նորից փակում են խնողին և սկսում հարել ու շուտ-շուտ նայում, վոր կարագի հատիկները կորեկի մեծությունից չանցնեն: Կարագի հատիկների ամենացանկալի մեծությունը կորեկի հատիկների մեծությունն ե:

Լավ հարած կարագի հատիկները կորը են, իսկ ջարդված կարագինը՝ ձգածե—յերկարավուն:

Կարագի հատիկները կորեկի չափ դառնալուն պես հարկավոր ե դադարեցնել հարելը ու կարագը հանել: Յերկար հարելուց կարագը ծեծվում ե, հատիկները մեծանում են, մեծ գնդեր դառնում: Բացի ճարպանալուց, այդպիսի կարագը շատ վատ ե լվացվում, թան շատ ե մնում մեջը և շուտ փշանում: Այնպես վոր թույլ չպիտի տալ, վոր կարագի հատիկները սիսեռի չափ դառնան կամ սպելի:

8. ԿԱՐԱԳԻ ՀԱՆԵԼՈՒ ՑԵՎ ԼՎԱՆԱԼՈՒ ԶԵՎԸ

Մեզ մոտ սովորություն կա կարագը խնոցուց ձեռքով հանել, խմորի գնդերի մեծությամբ գնդեր պատրաստել և իրար վրա դարսել: Սա ամենավատ ձեն ե: Սրանից կարագը կեղտոտվում ե, ձեռների տաքությունից մի մասը հալվում ե, ճարպանում և լպրտում: Յուղը լավ չի լվացվում: Այս ձեր պետք ե միանգամ ընդմիշտ թողնել: Յեկը ընդհանրապես պետք ե իբրև որենք ընդունել, վոր կարագը վոչ մի դեպքում չպետք ե ձեռքով մշակել: Լավ կարագ ստացվում ե միայն այն դեպքում, յերբ կարագին ձեռք չի դիպչում:

Յերբ կարագի հատիկները կորեկի չափ են դառել՝ հարկավոր ե խնոցու հատակի անցքը բաց անել, վորպեսզի ամբողջ թանը դուրս գա: Տակը պետք ե մաղ կամ քամիչ պահել, վորպեսզի թանի հետ դուրս յեկած հատիկները բռնվեն: Թանը դուրս գալուց հետո հարկավոր ե մաքուր սառը ջուր ածել այնքան, վոր հավասար լինի ամբողջ հավաքսի կեսին: Չը տաքությունը թանի տաքությունից մոտ 2 աստիճան պետք ե պակաս լինի: Շատ սառը ջուրն ել լավ չե, վորովհետև նա միանգամից ուժեղ կերպով սառցնելով հատիկների արտաքին մասը չի կարողանում միենալուն ժամանակ հավասար չափով սառցնել և հատիկների միջուկն այդ պատճառով ել կարագը միատեսակ հատկությամբ չի ստացվում: Շատ սառը ջրից յուղը կոշտանում ե, պնդանում, լավ չի կպչում և մշակելու ժամանակ ճարպանում ե: Ջուրը պետք ե լինի կակող, մաքուր: Գետերի և լճերի ջուրը բոլորովին չպետք ե գործածել: Յեթե հարագոր ե, չպետք ե գործածելնաև այն պիտի աղբյուրների և հորերի ջրերը, վորոնք մեծ շափով աղեր և կիր են պարունակում: Այդպիսի ջրերից կարագը սապոնի համ և ստանում:

Զուրը խնոցու մեջ ածելուց հետո հարկավոր ե խնոցու բերանը փակել և 3—4 անգամ պտտել վորի լնթացքում ջուրը մտնում ե հատիկների արանքը, մաքուր լվանում ու դուրս բերում թանը: Այս առաջին ջուրը թափելուց հետո հարկավոր ե նորից ջուր ածել, մինչև վոր ջուրը խնոցուց դուրս գա, թանոտ չինի:

Կարագի հատիկներն այսպես լվանալուց հետո հարկավոր ե խնոցու բերանը բաց անել և հատիկները մաղի մեջ ընդունելով (նկ. 42) թափել սեղանի վրա կարագը հունցելու կամ քամելու նպատակով:

Կարագը կարելի յե լվանալ և խնոցուց դուրս: Դրա համար կարագը խնոցուց թափում են մաղի մեջ և ապա ածում ջրով լիքն ամանի մեջ: Կարագը մաքրվում է, վորից հետո մաղով հանում են և թափում սեղանի վրա հունցելու համար:

Թեպետ ջրով լվանալուց կարագը քամելու համար. վորոշ չափով կորցնում ե իր հոտի մի մասը (հոտավետ յուղերը լուծվում են ջրի մեջ ու դուրս գնում), բայց և այսպես լվանալուց կարագը մաքրվում և ավելի դիմացկուն դառնում:

9. ԿԱՐԱԳԻ ՑԱՄԱՔԵՑՆԵԼԻ

Լվանալուց անմիջապես հետո հարկավոր ե կարագը հունցել, վորպեսզի կարագի մեջ մացած ջուրը և թանը դուրս գան: Դրա համար կան զանազան ձեի ու մեծության փայտե գործիքներ, վորոնց միջոցով և հարկավոր ե հունցել կարագը ցամաքեցնելու համար:


Մանր տնտեսություններում կարելի յե դործածել հատկապես դրա համար պատրաստված կարագաքամ սեղանը (տես նկ. 43): Դրա պատրաստելը շատ հեշտ է,

շատ եժան և նստում և կարելի յե պատրաստել ցանկացած մեծության: Այդ սեղանի հետեւ վորմերը առաջին վոտներից կարճ են շինվում, վորպեսզի կարագը տրորելիս թանը հոսի հետեւ կողմը: Սեղանի յեզրերով ակոսներ են անցկացրած, վորոնցով ջուրն ու թանը թափվում են: Սեղանն ունի մի թակիչ, վորի ներքեւի մասի վրա ամբողջ յերկարությամբ 2—3 ակոսներ են դուրս բերած: Այդ թակիչը հեշտությամբ բարձրանում և իջնում է, այլև շարժվում է աջ ու ձախ կողմը: Թակիչը չի կարելի յերկաթով (մեխով) ամբացնել սեղանին, վորովհետեւ յերկաթի ժամդը կարող է կեղտութել կարագը:

Այդպիսի սեղանների վրա, նայած նրանց մեծության, միանդամեց կարելի յե հունցել 5—20 ֆունտ կարագ:

Գործածելուց առաջ սեղանն իր բոլոր մասերով, կարագի դանակներն ու թիակը պետք ե լվանալ նախ տաք և անմիջապես հետո սառը ջրով:


Փայտե յեռանկյունի դանակով կամ թիակով (տես նկ. 44) վերցնում են կարագը և դնում կարագաքամ սեղանի վրա: Մի ձեռքին բռնած թակիչով կարագը տրորում են, իսկ մյուս ձեռքին բռնած փայտե դանակով կարագը նորից հավաքում են ու ծալում խողովակի ձեռվ, վորպեսզի նորից տրորեն: Այդպես պետք է տրորել այսքան, վոր թանի կամ ջրի մեծ մասը քամդի կարագից: Շատ սառը



կամ շատ սաք կարագը դժվարությամբ ե քամփում: Առաջին դեպքում կարագը ճարպանում ե ու փշրվում, յերկրորդ դեպքում՝ անհնար ե կանոնավոր քամել և շատ տրուբելուց ճարպանում ե, այդ պատճառով շատ սառը կարագը հարկավոր ե թողնել վորոշ ժամանակ, վոր տաքանա, իսկ շատ տաքը և փափուկը՝ պետք ե սառցնել և ապա արորել: Լավ մշակված կարագի կտրվածքի մեջ ջրի կաթիներ չպետք ե յերեան: Բայց շատ արորել ել պետք չե, վորովհետեւ շատ արորելուց յուղը կորցնում ե իր բնական փայլը և ճարպի համ ե ստանում: Այդ համն ավելի զգալի յե դառնում մի քանի որից հետո և հիշեցնում ե խոզի յուղի համը: Շատ քամած կամ տրուրած կարագը կտրելիս ճարպանում ե և կպչում ե դանակին: Ավելի լավ ե յուղը մի քիչ ջուր ունենա, քան բոլորովին ցամաքի: Կտրվածքի վրա աչքով հաղիվ նշմարելի ջրի կաթիները նշան են, վոր կարագը լավ ե տրորված և այլես չպետք ե տրորել: Տրորելու և քամելու չափը ձեռք ե բերվում վորձով:

Վորպեսզի շատ արորելու կարիք չլինի, լավ ե գուրս յեկած ջուրը ցամաքեցնել թանզիվով: Հարկավոր ե թանզիվը թաթախել սառը ջրի մեջ, մզել և դնել տրորած կարագի վրա, վոր ջուրը ծծի:


Կարագը արորելուց հետո, դանակով ու թիակով լցնում են կաղապարների մեջ, վորոնք դրված են լինում լավ



Նկ. 44. Փայտե դանակը և թիակները.



խոզի յուղի համը: Շատ քամած կամ տրուրած կարագը կտրելիս ճարպանում ե և կպչում ե դանակին: Ավելի լավ ե յուղը մի քիչ ջուր ունենա, քան բոլորովին ցամաքի: Կտրվածքի մեջ լիցկելիս պետք ե հետեւել, վոր կարագի մեջ դատարկ տարածություններ չմնան:




Նղկած տախտակի վրա: Կաղապարները լինում են ^{1/2} ֆունտից մինչև 20 ֆունտանոցներ (տես նկ. 45): Խցկանով (դաստա) կարագը խցկում են (Տես նկ. 46) կաղապարների մեջ մինչև բերանը և կարագի յերեսը հարթում են փայտե քանոնով, կաղապարի յեղբերին հավասար, ապա տաք և սառը ջրով լվացած պերգամենտը դնում են կարագի վրա, իսկ պերգամենտի վրա՝ մի ուրիշ տախտակ ե շուռ են տալիս այսպես, վորպեսզի այդ տախտակը տակն ընկնի, տակինը վեր բարձրանա: Հետո վերսկի տախտակը վերցնում են, բաց են անում կաղապարը և կարագը փաթթաթում պերգամենտի թերթում, նախապես ուղղելով կողքերը և դնում մի սառը տեղ պահելու համար կամ դարսում են արկղներում մի վորեւ տեղ ու կարագի կաղապարը. նկ. 45. կարագի կաղապար. նկ. 46. կարագի խցկան:

Կաղապարների մեջ լիցկելիս պետք ե հետեւել, վոր կարագի մեջ դատարկ տարածություններ չմնան: Նկարագրած սեղանի փոխարեն մեծ տնտեսություններում կարագ հունցելու համար գործ են ածում կարագ հունցող հատուկ մեքենաներ (տես նկ. 47): Սրանք ան, հրաժեշտ և կարեւոր մեքենաներ են ու պետք ե լինեն արտելային կաթնատնտեսության ամեն մի գործարանում: Վյո կոլոր սեղանները շատ հարմար են, վորովհետեւնրանցով աշխատանքն արագ ե կատարվում և կարագ հավասարաչափ ե քամփում:

8

Պատվանդանի վրա ամրացրած են կոլոր սեղանն ու կոնաձև ակոսավոր փայտե թակիչը, վորոնք կոթի և առամնավոր անիվի միջոցով պտտվում են։ Սեղանի վրա պահած կարուղն ընկնում է այդ յերկուսի արանքը և քամպում։ Այդպիսի սեղանները լավ են աշխատում այն ժամանակը յերբ սեղանը և թակիչը հավասար արագությամբ են պտըտվում։ Իսկ յեթե դրանցից մեկն ու մեկն ավելի արագ են պտտվում, այն գեղքում կարագ քսվում են սեղանի ամբողջական գործույթը։ Այդ իսկ պատճառով կարագաքան գործիքները պետք է դնել լավ գործարաններից։ Հայտնի յեն գանիւական, շվեդական և «Պերֆեկտ» կարագաքամ մեքենաները։ Վերջինս տարբերվում է առաջիններից նրանով, որ սրա կենտրոնը ցածր է, իսկ կողերը բարձր, քամած թանը հոսում է զեպի կենտրոն։ «Պերֆեկտ» հունցող մեքենայի պակասությունն այն է, որ պտտելիս կենտրոնախոյս ուժը չի թողնում թանն ազատ հոսի գեպի կենտրոնը և այդ պատճառով ստիպված են լինում գաղարեցնել աշխատանքը, որ հեղուկը հոսի գեպի կենտրոնը։

Կարագ քամելու համար գործ են ածում և կենտրոնախոյս կարագաքամ գործիքներ (տես նկ. 48)։ Դա մի գործիք է կրկնակի պատերով, վորոնցից միջինը ծակոտիներով է։ Կարագը խնոցուց հանում են, ածում քա-




Նկ. 47. Կարագ հունցող կոլոր սեղան։

Այդպիսի սեղանները լավ են աշխատում այն ժամանակակից յերբ սեղանը և թակիչը հավասար արագությամբ են պտըտվում։ Իսկ յեթե դրանցից մեկն ու մեկն ավելի արագ են պտտվում, այն գեղքում կարագ կարագ ստանալու համար այս գործիքները շատ հարմար են, բայց աղ անելու համար անհարմար, վորովիետն կարագը շատ և ցամաքում և աղը նրա մեջ չի հալվում։ Լավ պատրաստած կարագը պարունակում է միջին թվով $12-14^{\circ}/_0$ ջուր։

Մինչև այժմ նկարագրած ձեռվ պատրաստած կարագը կոչվում է քաղցր արաժանի անալի կարագ, վորը շատ յերկար ժամանակ թարմ դրությամբ դժվար է պահել։ 3—4 շաբաթից հետո նա կարող է փշանալ՝ կծվել, նայած պատրաստելու և պահելու ձեին։ Այդ պատճառով ել այս ձեռվ պատրաստում են այն գեղքերում, յերբ կարագը յերկար կարիք չի լինում պահել և շուտ սպառվում է։ Կծվելու առաջն առնելու համար հում արաժանի քաղցր կարագը շարունակ պետք է պահել սառը տեղ, կամ ուղղակի սառուցի մեջ։

Կաթնատնտեսության զարգացման զուգընթաց մեզ մոտ աճելու յենակ կարագի քանակը, մի հանգամանք, որ հարկադրելու յեմ մտածել կարագի դիմացկուն տե-



Նկ. 48. Կարագ քամեղ կենտրոնախոր մեքենա։

սակներ պատրաստելու մասին, վորպեսզի հնարավոր լինի առանց փշանալու յերկար ժամանակ պահել կարագը և շուկա հանել ցանկացած ժամանակին։ Որինակ՝ հաճախ անհրաժեշտ ե լինում գարնան և ամրան կարագը պահել ամբողջ ամառը և շուկա հանել աշնանը։

Այդ հանգամանքը նկատի առնելով, անհրաժեշտ ենք համարում հաջորդ (XVI) գլխում նկարագրել դիմացկուն կարագ պատրաստելու մի յերկու ձև։

10. ԻՆՉՊԵՍ ԻՄԱՆԱԼ, ԹԵ ՔԱՆԻ ՖՈՒՆՏ ԿԱՐԻՑ Ե
ՍՅԱՑՎՈՒՄ ՄԵԿ ՖՈՒՆՏ ԿԱՐԱԳԸ, ՅԵՐԲ ՀԱՅՑՆԻ ՅԵ
ԿԱՐԻՑ ՅՈՒՂԻ ՏՈԿՈՍԸ

Յերբեմն կարեոր ե լինում իմանալ, թն վորքան կաթ ե հարկավոր մեկ ֆունտ կարագ ստանալու համար։ Պարզ ե, վոր վորքան յուղալի յե կաթը, այնքան ել քիչ կաթ կպահանջվի։

Մեկ ֆունտ կարագը 21—22 ֆունտ կաթից կարելի յե սովորական համարել, թեպետ հաճախ պատահում են և յուղալի կաթեր, վորոնց 18—19 ֆունտը մեկ ֆունտ կարագ ե տալիս։ Յուղի ստացումը կախված ե բազմամաթիվ պայմաններից, վորոնց մասին մենք արդեն իր տեղում խոսել ենք։ Մեզ հայտնի յե մի հազվագյուտ դեպք, յերբ մեկ փութ կաթից մեր յերկրի կաթնագործարաններից մեկում դեկտեմբեր ամսին ստանալիս են յեղել 3 ֆունտ կարագ, վորի մի ֆունտը այդպիսով ստացվելիս ե յեղել 13—14 ֆունտ կաթից (հավանական ե մողամեր կովերի կաթից)։

Ամեն անգամ դժվար ե հաշվել թե քանի ֆունտ կաթից ե մի ֆունտ կարագ ստացվում։ Այդ հաշվիվ հեշտացնելու համար մշակել են հատուկ աղյուսակ, վորի ոգնությամբ հնարավոր ե լինում իմանալ, թե մեկ ֆունտ կարագը վորքան կաթից ե ստացվում։

Այս դեպքում, իհարկե, անհրաժեշտ ե, վոր ամեն անգամ վորոշվի կաթի յուղի տոկոսը։ Գրքիս վերջում թերած Ն 2 աղյուսակի առաջին սյունյակը ցույց ե տալիս յուղի տոկոսը, իսկ յերկրորդը՝ կաթի այն քանակը, վորից մեկ ֆունտ կարագ ե ստացվում յուղի համապատասխան տոկոսի ժամանակ։

Որինակ՝ աղյուսակի առաջին սյունյակի առաջին տողում ցույց ե տրված $2^0/0$, իսկ նույն գծի վրա ֆունտերի սյունյակում՝ $46,5$. Այդ կաշանակի, վոր յեթե կաթի յուղալիությունը $2^0/0$ -է, այդ դեպքում մեկ ֆունտ կարագն ստացվում ե $46^{1/2}$ ֆունտ կաթից։

XVI. ԿԱՐԱԳԻ ՄՅՈՒՄ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. ԱՂ ԱՐԱԾ ՔԱՂՅՐ ԿԱՐԱԳ

Լվացած կարագը թափում են հունցող սենդանի վրա և մի յերկու անգամ նախորդ գլխում նկարագրած ձևով թակիչով տրորում, բայց այնպես, վոր կարագը շատ չքացածաքի, այլ դեռ բավականաշափ ջուր ունենա իր մեջ։ Կարագը թակիչով տափակացնելուց հետո աղ են ածում վրան, կողքերը ծալում և նորից մի քանի անգամ տրորում։ Զմեռը մեկ փութ կարագին անում են $1^{1/2}$ ֆունտ աղ, իսկ ամառը $1^{1/4}$ — $1^{3/4}$ ֆունտ։ Զմեռը կարագը շուտ ե սպառվում, իսկ ամառը յերկար պահելու կարիք ե լինում, այդ պատճառով ել ամառը աղ շատ են անում։ Աղը պետք ե լինի մասր աղած, բայց վոչ փոշիացած, նա պետք ե մաքուր լինի և դառն աղեր չպիտի պարունակի իր մեջ։ Աղը պետք ե չոր լինի և շուտ հալվելու հատկություն ունենա։ Աղի հատիկները հալվում են կարագի մեջ և առաջացնում դատարկություններ, վորոնց մեջ հավաքվում են թանն ու կարագի ջուրը։ Հունցելու ժամանակ դուրս տված ջուրն ամբողջովին քամվում ե։ Խոշոր հա-

տիկներով ազը լավ չի հալվում, իսկ փոշիացածը ջուր Մ հանում:

Աղ անելու ժամանակ կարագը 3—4 անգամ տրորում են և թողնում մի քանի ժամ, վոր աղն ամբողջովին ծծվի ու տարածվի կարագի մեջ, վորից հետո նորից տրորում են, ցամաքեցնում ու պահում սառը տեղ:

Սիրիրից աղ արած կարագն ուղարկում են սովորաբար տակառներով և վոչ թե արկղներով, ինչպես անալի կարագը, թեպետ ոտ յեր իհարկե, կարելի յե արկղներով ուղարկել:

Վերցնում են հաճարի ծառի տախտակից շինած 3 փթանոց տակառներ և կարագը լցնում մեջը: Բայց այդ պետք ե անել միայն այն ժամանակ, յերբ արդեն տակառով մին կարագ ե հավաքված: Տակառի մեջ ածելուց առաջ յերկար պահած կարագը պետք ե մաս-մաս նորից հունցել, վոր ամբողջը խառնվի ու միատեսակ դառնա: Յեթե կարագը շատ ե սառած, պետք ե մի գիշեր թողնել տաք սենյակում կամ կաթնարանում, վոր փափկի և հետո տրորել ու փայտե խցկանով խցկել տակառի մեջ:

Խցկելուց առաջ տակառը լվանում են յեռացրած տաք ջրով և ապա վողողում սառը ջրով, իսկ պատերին ու հատակին աղ շաղ տալիս: Շատերը լվանալուց հետո տակառի մեջ աղաջուր են անում և մի քանի ժամ պահում, աղաջուրը թափում են և հատակն ու պատերը թաց աղ քում: Այնուհետեւ տակառի հատակն ու պատերը ծածկում են աղաջրում թրջած պերգամենտի թղթով: Լավ ե գործածել մի ամբողջ թերթ, վոր տակառի ներսը ծածկի: Պերգամենտի թուղթը պետք ե թույլ կերպով փոել տակառի ներսը, վոր կարագը խցկել ու ժամանակ չպատռվի: Կարագը վերցնում են գունդ-գունդ (5—6 ֆունտ ամեն մեկը) և տրորում են փայտե խցկանով տակառի մեջ, կարագն այնպես պետք ե խցկել վոր արանքներ

շման պատերի ու կարագի մեջ: Տակառները լցնում են մինչև բերանը, աղ անում և ծածկում պերգամենտի թղթով ու փակում:

Կարագով լիքը տակառները հաճախ շուռ ևն տալիս և տակառի վրա նկատած բորբոսը մաքրում:

Այս ձեռվ պատրաստած կարագն աննշան աղի յե և շատ տեղերում ե գործ ածվում, իբրև քաղցր կարագ (արտասահման):

2. ՓԱՄԻԶՑԱՆ ԿԱՐԱԳ

Փարիզյան կարագը սովորական կարագից տարբերվում է նրանով, վոր փարիզյան կարագ պատրաստելու համար գործ են ածում վոչ թե հում, այլ յեփած կամ ծելսիումի 85—95° տաքության հասցրած արածանից: Արածանն այդ սատիճանի տաքության մեջ պահում են 5—10 րոպե և իսկույն պաղեցնում սառուցով ու 10—12 ժամ այդ դրությամբ թողնում, վոր համնի և ապա հարում են սովորական ձեռվ: Տաքացնելու և պաղեցնելու ժամանակ արածանը պետք ե անընդհատ խառնել ներքելից վերև, վոր հավասարաչափ տաքանա կամ պաղի: Պետք ե հիշել, վոր արագ տաքացնելու ժամանակ կարագն ավելի հոտավետ և ստացվում, իսկ դանդաղ տաքացնելուց կարագն իր համը կորցնում է: Այդ պատճառով ել արագ տաքացնելու համար պետք ե արածանը դնել արդեն յեռող ջրի մեջ: Տաք արածանը չպետք ե պինդ ծածկել, վորովհետև նա դրանից ձարպի համ և ստանում: Թեպետ սովորական կարագի համեմատությամբ փարիզյան կարագը քիչ և ստացվում, բայց ավելի թանկ և ծախվում, իհարկե, այն շուկաներում, վորաեղ դրա պահանջը կա:

Կարագը ջրով չեն լվանում, վորպեսզի հոտը ու համը չկորչի: Կվանում են յեռացրած և պաղեցրած քաշած կաթով: Յեթե կաթ չկա, կարելի յե գործածել և ջուր, բայց

ջուրն անպայման յեռացրած ու պաղեցրած պիտի լինի. այս գեպքում կարագը չպիտի լվանալ, այլ կարագաքամ մերենայով կամ սեղանի վրա մի քանի անգամ կարագը պտտելուց հետո կարելի յե մի յերկու անգամ կարագի վրա ջուր շաղ տալ ու նորից արորել, վորպեսզի թանը մաքրի: Այս կարագը յերկար կարելի յե պահել, վորով-հետև տաքացրած լինելու պատճառով նրա մեջ բոլոր բակ-տերիաները կոտորված են լինում:

Ավելի յերկար պահելու համար փարիզյան կարագին յերբեմն աղ ել են անում և սա անհամեմատ ավելի լավ ե, քան հում արաժանից պատրաստած ու աղ արած սովորական կարագը:

3. ԹԹՎԱՇ ԱՐԱԺԱՆԻ ԿԱՄ ԵՔՍՊՈՐՏԻ ԿԱՐԱԳ

Բուսաստանում (*Սիրիում*) և արտասահմանում թթվաշ արաժանից պատրաստում են այսպես կոչված արտահանության կամ եքսպորտի կառագ, վորը դիմացկուն և և առանց փչանալու կարող և յերկար պահվել: Այդ կարագը սովորաբար պատրաստում են արտասահման ուղարկելու համար, պատրաստելու ձեռ հետեւյալն ե.—

Արաժանը տաքացնում են մինչև $80-90^{\circ}$ ջելս. նախորդ գլխում ցույց տված ձեռով և պահում են տաքության այդ աստիճանում $5-10$ րոպե: Յերբեմն տաքությունը հասցնում են յեռման կետին, ապա իսկույն հովացնում¹⁾: Այդ արաժանն ածում են փայտե մաքուր ամանի մեջ և մերում են թթված կաթով կամ դրա համար պատրաստված կաթնաթթվուտային բակտերիաների հատուկ մերանով, այսինքն՝ այդ բակտերիաների մաքուր կուլտուրայով: Կաթնաթթվուտային (կաթի թթու առաջացնող) բակտերիաները բազմանալով, չեն թողնում, վոր վնասակար բակ-

¹⁾ Մեր լեռնային քշաններում լրի յեռման կետը գտնվում է 8ելտիուսի 100° -ից մի քանի աստիճան ցածր: Խ. Յեր:

տերիաները բազմանան ու փչացնեն կարագը: Թթուն նույնպես լավ ե պահում կարագը: Յերբ արաժանը թանձրանում, թթվաշ և դառնում, ածում են խնոցին ու հարում սովորական կարգով:

Ինչպես գիտենք՝ մածնի մերանով մերած կաթը դիմացկուն և ավելի լավ համ ու հոտ ունի, քան սովորական թթու կաթի մերանով մերած կաթը: Այնպես վոր, փոխանակ թթված կաթից պատրաստված մերանով մերելու, կարելի յե հաջողությամբ գործադրել և մածնի մերանը, վորը ինքն ըստ ինքյան մի խումբ ոգտակար կաթնաթթվուտային բակտերիաների գործունեության արդյունք և և հասարակ թթված կաթից անհամեմատ լավ է: Իհարկե, ցանկալի կլիներ, յեթե ունենայինք մածնի բակտերիաների մաքուր կուլտուրա և նրանով մերելյինք: Բայց յերբ չկա, լավ կլինի արաժանը մերել մածնով, քան թթու կաթով: Պետք և վարվել այսպես.—

Արաժան մերելու համար նախ պետք և մածնի մերան պատրաստել: Դրա համար վերցնում են սերզատով անցկացրած $5-6$ ֆունտ թարմ կաթ, տաքացնում են մինչև $80-90^{\circ}$ և պաղեցնում մինչև $37-38^{\circ}$ ծելսի-ուսի ու մածնով մերում սովորական ձեռով և զնում սենյակի մեջ մերվելու համար: Սենյակի տաքությունը պետք է լինի $18-22^{\circ}$ ջ.: Յեթե սենյակը ցուրտ է, լավ կլինի կաթն ամանով դնել տաք ջրի մեջ, վորի ջերմությունը պիտի լինի $35-36^{\circ}$ ծելսիուսի կամ լավ և շորով փաթաթել: (*Մածնի ամենալավ մերվելու ջերմության աստիճանը՝ ծելսիուսի 36° -նե:* Յերբ կաթը մերվում է ու մածուն դառնում ($4-6$ ժամից հետո) զնում են սառը ջրի մեջ, վոր սառչի: Արաժանը մերելու համար այս մածնի յերեսը քաշում են, իսկ տակիցը վերցնում են մերան ու դրանով մերում արաժանը, վորը նախապես պետք և տաքացրած լինի նախորդ գլխում ցույց տված ձեռով

մինչև 80—90^o Ց. և հովացրած մինչև 36—37^o Ց.: Մերելուց առաջ մերանը պետք է յեռացրած, բայց գոլ քաշած կաթով բաց անել, ապա ածել արաժանի մեջ ու լավ խառնել, վոր արաժանը հավասար թթվի: Պետք է պահել 8ելս. 36^o ջերմություն: Այս աստիճանում արաժանը հասնում է 2—3 ժամում, իսկ ցածր աստիճանում՝ ավելի ուշ: Արաժանի հասնելու տևողությունը, բացի տաքությունից, կախված է նաև մերանի քանակից ու վորակից: Մեկ փութ արաժանին կարելի յե վերցնել 1 ֆունտ մերան ջերմության նույն աստիճանով: Վորքան մերանը շատ լինի, այնուան ել շուտ կմերվի և ընդհակառակն: Սկզբում յուրաքանչյուր 15—20 րոպեյից հետո հարկավոր ե արաժանը խառնել, վոր հավասար թթվի և յուղալի մասերը յերես չբարձրանան:

Արաժանը չպետք է կորդանա, կարվի, այլ պետք է միայն մի քիչ թանձրանա, բայց այնպես, վոր շերեփի վրայով ալիքներով հեշտությամբ հոսի և վոչ թե կտորկտոր թափվի: Յեթե արաժանը ժամանակից շուտ է թթվել, պետք է սառը տեղ դնել, վոր չկտրվի: Լավ է թթվությունը պակաս լինի, քան չափից ավելի:

Մածնի համն ու հոտն ամբողջովին անցնում է արաժանին, և կարագը լինում է դիմացկուն, անուշահոտ: Արաժանը թանձրանալուն և թթվաշ համ ստանալուն պես պետք է խկույն սառցնել ու հարել: Սառցնելիս, ինչպես և տաքացնելիս պիտի խառնել արաժանը:

Խնոցի հարելը և կարագի քամելը կատարվում ե սովորական ձևով, միայն նախքան հարելը հավաքար պիտի տաքացնել մինչև 13—14^o Ց.:

4. ՊԱՆՐԱՇԻՃՈՒԿԻ ԿԱՐԱԳ

Պանիր պատրաստելու ժամանակ շիճուկի մեջ վորոյ չափով յուղ է մնում: Վորքան կաթը յուղալի յե, այնքան,

ել շատ ե լինում շիճուկի մեջ մնացած յուղը: Գոմշի և վոչխարի պանրի շիճուկների յուղն ավելի յե, քան կովի շիճուկինը: Պարզ ե, վոր հարկավոր է շիճուկի յուղն ոգտագործել: Որպ համար պանիրը հանելուց անմիջապես հետո անհրաժեշտ է պանրի շիճուկն անցկացնել սերզատ մեքենայով և ստացած արաժանը հարել կարագ ստանալու համար: Պանրի շիճուկի յուղալիության վրա ազդում է և պանիր պատրաստելու յեղանակը: Որինակ՝ շվեյցարական պանրի շիճուկն ավելի յուղալի յե, քան չանախ կոչված կամ մի վորևե ուրիշ պանրինը, վիրովինետև շվեյցարական պանիրը շատ է մնում կրակի վրա, շատ է ցամաքում, և շատ ել յուղ է տալիս շիճուկին: Լավ կարագ ստանալու համար անհրաժեշտ է պանիրը ջոկելուց անմիջապես հետո շիճուկը քամիչով քամել, վոր պանրի կտորները չընկնեն սերզատների մեջ և իսկույն անցկացնել սերզատով: Շիճուկը շատ հովացած չպետք է լինի: Տաքության աստիճանը հարկավոր է հասցնել մինչև 31—32^o Ց.: Արաժանի թանձրությունը պիտի այնպես կանոնավորել, վոր մեկ փունտ արաժանն ստացվի 10—12 ֆունտ շիճուկից: Անհրաժեշտ է ստացած արաժանն անմիջապես սառցնել (անընդհատ խառնելով մինչև 7—10^o Ց. կամ 6—8^o Ռեռմյուրի և տաքության այդ աստիճանում պահել 10—12 ժամ), վոր արաժանը համնի հարելու համար: Մնացած խնամքը ճիշտ նույն ե, ինչ վոր պահանջվում է քաղցր կարագ պատրաստելու ժամանակ: Շիճուկի կարագը կարելի յե և աղ անել: Ավելի լավ է արաժանը պաստյորիգացիայի յենթարկել կամ թթվեցնել նախորդ գլխում յուղ տված ձևով և ապա հարել: Այս ձևով պատրաստած շիճուկի կարագն իր համով ու հոտով համարյա վոչ մի բանով չի տարբերվում արաժանի կարագից:

XVII. ԶԱՆԱՋԱՆ ԿԱԹԱԱՄԹԵՐՔՆԵՐ

1. ԹԹՈՒ ԱԲԱԺԱՆ (ՍՄԵՏԱՆԱ)

Թթու արաժան պատրաստում են վոչ միայն յուղ հարելու նպատակով, այլ և իբրև արաժան գործածելու համար: Քաղաքներում թթու արաժանի (սմետանայի) պահանջը շատ մեծ է լինում, այնպես վոր հաճախ ձեռնտույթ լինում կարագի փոխարեն սմետանա պատրաստել:

Վորովինետե սմենալավ թթու արաժանը (սմետանա) ստացվում է թանձր արաժանից, այդ պատճառով սերզատի մեջ սերի հոսանքը պետք է այնպես կանոնավորել, վոր 8—9 ֆունտ կաթից ստացվի 1 ֆունտ արաժան, իսկ յեթե կաթը յուղալի չե, այն դեպքում կարելի յե նույնիսկ այնպես կանոնավորել, վոր 10—11 ֆունտից ստացվի 1 ֆունտ: Զրալի արաժանից պատրաստված սմետանան դիմացկուն չե, բացի դրանից հատիկավոր ե լինում և կարծես շոռ լինի խառնած հետր: Այս տեսակ սմետանան շուտ թթվում, կտրվում և շիճուկ ե դուրս տալիս, իսկ թանձր սմետանան յերկար ե դիմանում:

Թթու արաժանը (սմետանան) պատրաստում են թե հում և թե յեփած արաժանից: Ամենալավ սմետանան ստացվում է յեփած արաժանից: Արա պատրաստելու յեղանակը հետեւյալն ե.

Արաժանն արագ կերպով տաքացնում են մինչև 80—90° ջ. և տաքության այդ աստիճանում (ջրի մեջ) պահում 5—10 րոպե: Տաքացնելիս արաժանը պետք է լավ խառնել: Այսուհետեւ հովացնում են մինչև 36—37° ջ. և մածնով մերում: Մերանի քանակը պետք է համապատասխանի արաժանի քանակին, այն հաշվով, վոր 4—6 ժամում արաժանը կանոնավոր թթվի: Մերանը չպետք է վերցնել մածնի մերգածքի վերին շերտից, այլ միջին մասից, վորովինետե վերին շերտի վրա ողից ընկած ոտար

բակտերիաներ կան, վորոնք արաժանը կարող են փշացնել: Մածնի կամ արաժանի յերեսը քաշելու համար գործ են ածում հատուկ շերեփներ (տես նկ. 49): Մերանը գցելուց առաջ պետք է յեռացրած դոլ կաթով լավ բաց անել, վոր կորդ մասեր չմնան: Մերանը գցելուց անմիջապես հետո արաժանը լավ պիտի խառնել, վոր մերանը հավասար չափով տարածվի: Սենյակը պետք է տաք լինի, հակառակ դեպքում արաժանն ուշ կթթվի: Արաժանը շատ թթվեցնելու համար պետք է մերանը շատ վերցնել: Մեկ փութ արաժանի համար սովորաբար վերցնելու մեջ մածնի յերեսը գնում են 2 փունտ լավ մերան: Սկզբում պետք է արաժանը յերբեմն խառնել, վորպեսզի տաքությունը հավասար մնա, արաժանը հավասարաշափ թթվի ու սերը չբարձրանա վերև և տակը ջրիկ մասը մնա: Պետք է գանդաղ խառնել ներքեմից վերև: Հենց վոր արաժանն սկսի թթվել, իսկույն պետք է դադարեցնել խառնելը և սպասել, վոր համնի: Համնելու նշանները սրանք են՝ արաժանն, այնքան պիտի թանձրանա, վոր ափսեյի վրայից չհոսի և դյուրալի համ ու հոտ ստանա:

Իբրև կանոն, միշտ պետք է հիշել, վոր ավելի լավ և թթվությունը պակաս լինի, քան չափից ավելի:

Չպետք է թույլ տալ, վոր արաժանը կորդանա, վոչ ել ջրալի մնա: Անհրաժեշտ է լավ հետեւել, վոր արաժանի համնելու ժամը չանցնի: Մածնով մերելու ժամանակ, բարձր ջերմության պատճառով արաժանը կարող է չառարագ թթվել և շիճուկ բռնել, ինչպես մածնուր: Դրա համար անհրաժեշտ է ուշադիր լինել և շթողնել, վոր մերվելուց անցնի: Հենց վոր արաժանն սկսեց մերգել ու թանձրանալ, իսկույն պետք է զնել սառը ջրի մեջ, վոր սառչի: Թթված արաժանը պետք է սառցնել մինչև 9—10° ջ.: Սառը տեղում նա համնում է, լավ մակարդ-

վում և շիճուկ չի կտրում: Տաք տեղում, ընդհակառակն, շատ և թթվում ու շիճուկ տալիս:

Սմետանա կարելի յե պատրաստել և հում սերից ու մերել վոչ թէ մածնով, այլ թթված կամ հում արաժանով: Այդ գեղքում արաժանի ջերմությունը կարող ե ցածր լինել և մերգելը կարող ե տեել մինչև 10—15 ժամ: Բայց այս ձեռվ ստացած սմետանան նախ իր համով ու հոտով մածնի մերգածքից թույլ ե և ապա յերկար չի դիմանում:

Արաժանը մետաղյա ամաների մեջ չպետք ե թթվեցնել, վորովհետեւ նրանց մեջ արաժանը վատ համ ե ստանում: Ամենալավը փայտե կիսատակառներն են կամ փայտե դույլերը:

Լավ սմետանան ունենում ե 40—44⁰/₀ յուղ: Հաճախ պատրաստում են նաև 20—22⁰/₀ յուղ ունեցող սմետանա:

40⁰/₀-ից պակաս յուղ ունեցող սմետանան լավը չի համարվում և զինն ել պակաս ե: Սմետանա պատրաստելիս պետք ե իմանալ յուղի տոկոսը, վորի համար անհրաժեշտ ե կաթնազործարաններում ունենալ Գերբերի ապագարատը (կարդա «կաթի հետազոտությունը») և այլ պապարատը (կարդա «կաթի հետազոտությունը») և այլ պարագաներ կաթի և սերի մեջ յուղի տոկոսը վորոշելու համար:

Սմետանան հեռու տեղ ուղարկելու համար լավ խառնում են ու ածում տակառի մեջ: Բայց նախքան տակառի մեջ ածելը, պետք ե սմետանայի յերեսից մի բարակ շերտ վերցնել, վորպեսզի ողից ընկած բակտերիաները չփշացնեն սմետանան: Տակառը պետք ե լվանալ նախ տաք և ապա սառը ջրով: Տակառի պատերին աղ են անում բարակ շերտով, այնուհետև սմետանան լցնում են տակառի մեջ, յերեսը ծածկում պերգամենտի թղթով և խուփն ամրացնում:

Շատ թանձր սմետանա ստանալու համար պետք ե թթու արաժանը քամել տոպրակներով: Ավելորդ շիճուկը տոպրակից դուրս ե վնում և ստացվում ե քամած սմետանա՝ քամած մածնի նման: Սակայն տոպրակները հավասարաչափ չեն քամում արաժանը. տոպրակին կլած մասերը լավ են քամում, միջնը՝ վատ: Այդ պատճառով քամելուց հետո պետք ե նորից կանոնավոր խառնել, վոր արաժանի միապաղադ զանգված ստացվի:

Քամած սմետանան յերկար ե դիմանում, քիչ տեղ և բռնում, հեղտ և փոխադրվում և ավելի թանգ ե ծախում:

Խիստ սառնամանիքների ժամանակ սմետանան ուրիշ տեղ ուղարկելիս պետք ե տակառները խոտով փաթաթել, վոր սմետանան չսառչի:

2. Մ Ա Ծ Ա Ի Ե.

Մեզ մոտ մածունը սովորաբար այսպես են պատրաստում: Կաթը յեռացնում են ու թողնում, վոր հովանու: Յերբ կաթի մեջ մատը կարելի յե լինում պահել, բայց կաթը գեռ գոլացած չի լինում, մերանը գցում են նրա մեջ, խառնում են թեթև կերպով և ամանը փաթաթում շորով, վոր մի քանի ժամ կաթը տաք մնա, շուտ չսառչի: Յերբ կաթը մակարդվում ե, շորը վերցնում են: Լավ մածունն ստացվում է միայն 24 ժամից հետո: Դրանից շուտ մածունը լավ չի հանում, իր խսկական համն ու հոտը և կորդությունը չի ստանում.

Գիտնականներն ուսումնասիրել են մածնի բնույթը: Պարզվել ե, վոր լավ մածուն ստանալու համար անհրաժեշտ ե, վոր նշա մեջ աշխատեն Յ տեսակ բակտերիաներ և յեթե սրանցից մեկն ու մեկը չի լինում, այն գեղքում մածունը պակասավոր կողմեր ե ունենում, մածնի նման չի լինում: Միաժամանակ արդ յերեք տեսակի բակտե-

բիաներն ել պիտի լինեն և միասին գործեն, վորպեսզի
կարագի մածուն ստացվի: Այս բակտերիաների գործու-
նեռթյան համար ամենալավ տաքությունը համարվում է
ջեղիուսի 36°-ը: Բազմաթիվ փորձերով այդ ապացույցել է
Դյուգգելին Շվեյցարիայում: Նկ. 9-ում ցույց են տված մա-
ծունի, կեֆիրի, յուգուրդի և կումիսի առանձնացրած բակտե-
րիաները: Տաքության 36°-ից ցածր աստիճանում միայն մա-
ծունը թույլ է լինում, իսկ 36°-ից բարձր՝ շուտ մերվում է և
շիճուկ կտրում մեծ քանակությամբ: Բայց տաքությունը
36°-ի վրա պետք է պահել մինչեւ մածունը մերվի,
իսկ այդ կատարվում է մոտավորապես 4 ժամվա ընթացքում:
Այնուհետև անհրաժեշտ է մերված, բայց դեռ գոր, խակ
մածունը դնել սառը տեղ (սառցի կամ սառը ջրի մեջ,
փորտեղ նա կամաց-կամոց կհասնի և վորոշ ժամանակից
հետո կդառնա միանգամայն հասած մածունը:

Մածունը չափազանց կարեոր և առողջարար մթերք է:

Ամենակորդ մածունն ստացվում է դոմշի կաթից, հե-
տո կովի, այսուհետև վօշխարի և այծի:

Փոխանակ կաթը յեռացնելու, ավելի լավ և տաքա-
ցնել մինչև 80—90° Ց., հովացնել և ապա մերել:

3. Կ Ե Ֆ Ի Ր.

Կեֆիրը պատրաստում են կովի կաթից: Կարելի յե-
տործածել թե հում թե յեփած կաթ: Յեփած կաթից պատ-
րաստված կեֆիրն ավելի առողջարար է: Կեֆիրի համար
սովորաբար գործադրում են քաշած կաթը: Անարատ կաթի
մեջ սերի կտորներ են գոյանում և խմելու ժամանակ շա-
տերին դուր չի գալիս: Կեֆիրը շատ լավ միջոց է յու-
ղահան արված կաթը ձեռնտու կերպով ոգտագործելու
համար:

Կեֆիրը չափազանց առողջարար խմելիք է հիվանդ-
ների, թույլ կազմվածք ունեցողների և, մասավանդ, ստա-

մոքսաղիքային հիվանդություններով տառապողների հա-
մար:

Կեֆիր պատրաստելու համար հարկավոր է ձեռք բե-
րել կեֆիրի սունկերը, վոր վաճառվում են դեղատներում:
Կեֆիր պատրաստելուց առաջ անհրաժեշտ է չորացրած
սունկը կենդանացնել. այդ հաղատակով սունկերը զցում
են մի բաժակ գոր ջրի մեջ ու պահում այդպես 5—6 ժամ:
Հետո ջուրը թափում են և սունկերի վրա կաթ ածում:
Կոթը փոխում են մի քանի անգամ, յուրաքանչյուր 3—4
ժամից հետո: Կախն այնքան պետք է փոխել, վոր սունկի
վատ հոտն անցնի: 48 ժամից հետո սունկերը համարվում
են պատրաստ կեֆիրի մերան պատրաստելու համար: Մե-
րան պատրաստելու համար պետք է այդպես մշակված
սունկերից մի քիչ ածել կաթի մեջ և շուտ-շուտ խառնել:
Դրանից հետո սունկերն սկսում են բարձրանալ կաթի յե-
րեսը ու սպիտակ գույն և առաձգական հատկություն են
ստանում: 12 ժամից հետո սունկերը կաթի յերեսին բա-
գականին հաստ շերտ են կապում և կաթը թանձրանում
է: Այդ նշան է, վոր մերանը պատրաստ է:

Այդպես պատրաստած մերանը քամում են, սունկերը
միջից հանում, իսկ կաթը ածում շիշերի մեջ բայց այն-
պես, վոր շիշ $\frac{1}{3}$ մասից ավելի չկիսի: Այնուհետև շիշերը
լցնում են թարմ կաթով, բերանները փակում, խառնում և
դնում են սառը տեղ, դրանից հետո յել մի քանի անգամ
խառնում են կաթը: 24 ժամից հետո կեֆիրն արդեն
պատրաստ է լինում գործածության համար: 48 ժամից
հետո կեֆիրը վորակապես լինում է միջակ, իսկ 3 որից
հետո՝ հնացած:

Նկարագրած ձեռվ կարելի յե սունկերից նոր մերան
պատրաստել, բայց ավելի հեշտ և իբրև մերան գործածել
կեֆիրն այնպես ինչպես մերում ենք մածունը:

Կեֆիրի սունկերը հարկավոր է ջրով լվանալ, լավ չո-

ըացնել արևի տակ և պահել պինդ փակած շնի մեջ։
Այդ գրությամբ սունկերը կարող են մնալ որ քանի
տարի։

4. Շ Ո Ռ.

Տաշտի մեջ յերեսը քաշած կաթն այնքան թթված է
լինում, վոր նրանից հնարավոր ե լինում միայն չի պա-
հանիր կամ շոռ պատրաստել։ Սերզատով անցկացրած կաթը,
ընդհակառակն, քաղցր ե լինում և նրանից շոռ պատ-
րաստելու համար հարկավոր ե նախապես կաթը թթվե-
ցնել։

Շոռի համար սովորաբար գործ են ածում քաշած
կաթը. անարատ կաթից ձեռնտու չե շոռ պատրաստել։
Լավ շոռը ստացվում ե թարմ և մաքուր կաթից, այնպես
վոր շոռն ավելի ձեռնտու յե սերզատով անցկացրած կա-
թից սլատրաստել, քան յերեսը տաշտում քաշածից։

Սերզատով անցկացրած կաթը ածում են ամանների
մեջ ու թողնում, վոր ինքն իրեն թթվի կամ տա-
քացնում և թթվեցնում են արհեստական կերպով. այ-
սինքն մերում են, վորպեսզի շուտ թթվի և լավ ար-
դյունք ստացվի։ Ամենալավ ձեւ թթված կաթով մերեն ե։
Շոռը դրանից լավ համ ու հոտ ե ստանում և շուտ չի
փչանում։ Այս ձեռվ շոռ պատրաստելու համար կաթը տա-
քացնում են մինչև 35—36° Ցելսիուսի, ո.ծում են նա-
խապես տաք ջրով լավ լվացած փայտե տակառի կամ
կավե ամանի մեջ ու մերում։ Փայտե տակառը լավ ե
ներսից յուղաներկով պատած լինի, վորպեսզի կաթի
թթվությունը պատերի մեջ չծծ լի ու տակառը չկեղտոտվի,
չանապետքանա։ Մեկ փոթ կաթի մեջ ածում են 3 փունտ
թթված կաթի մերան ու լավ խառնում։ Ավելի լավ ե
գործածել թարմ մերան և այդ գեղքում ել պետք ե աշ-
խատել վոր կաթի ջերմությունը Ցելսիուսի 35—36° լինի։

Սենյակը պետք ե Ցելսիուսի 20—22° տաշություն ունե-
նա, այդպիսի պայմաններում կաթը մերվում ե 4—6
ժամվա ընթացքում։ Իսկ սառը տեղում ուշ ե թթվում։
Կաթն այնքան կորդ պիտի մերվի, վոր մերվածքը մա-
տին չկազմի և մատի տեղը պարզ շիճուկ դուրս գցի։ Սա-
կայն մերվածքը չպիտի շատ թթվի, վորովհետև շատ
թթվածից լավ շոռ չի ստացվում։ Մերվածքից շոռ ստա-
նալու համար պետք ե մերվածքը տաքոցնել, վորպեսզի
միջի շիճուկը դուրս գա և շոռը քամվի։ Շոռի համար
պատրաստված մերվածքը տաքացնում են կամ հատուկ
վառարաններում կամ ջրով։ Մանր սմստեսություններում
սովորաբար ջրով են տաքացնում։ Տաքացնելու համար
մերվածքը կտրում են բարակ շերտերով և գարսում մե-
տաղյա կլայեկած ունկնավոր ամանների մեջ։ Շոռը պետք
ե հանվի ու դարսվի շերտերով, քանի վոր այդ ձեռվ շի-
ճուկն ավելի լավ ե քամվում և շոռը լավ ե ստացվում։
Ունկնավոր ամանը շուտով դնում են տաք ջրի մեջ, վորի
տաքությունը պետք ե լինի 60—75° Ցելսիուսի։ Շոռն
այդպիսի ջրում յեփվում ու քամվում ե 1¹—2² ժամում։ Ջրի
տաքությունը սրանից բարձր չպիտի լինի, հակառակ դեպ-
քում շոռը կարող ե շատ չորանալ, իսկ դրանից ցած
աստիճանում ուշ կքամվի և շատ լիթթվի։

Յերբ շիճուկը դուրս ե զցում և շոռը պատերից պոկ-
վում ե ու հավաքվում մեջ տեղը, բայց դեռ չի բարձրա-
ցած յերես և մատների արանքում շոշափելիս այլևս լալ-
ծուն հատկությունը չի նկատվում, շոռը բարակ շերտերով
հանում են ունկնավոր ամանից քամելու հպմար և փոռում
մի վորեւ թասի մեջ, վորի ծակոտիներ ունեցող հատա-
կում նախապես փռած ե լինում մի ցանցառ շորի կտոր։
Շոռի շիճուկն այդտեղ դուրս ե գալիս ու թափվում, իսկ
շոռը հավաքում են ու փաթթում շորի կտորի մեջ,
վոր լավ քամվի։ Այդուես թողնում են մի հով տեղում
մոտ 12 ժամ, վոր շոռը լավ ցամաքի ու նստի։ Տամա-

քած շուն այնուհետև դարսում են արկղների կամ տակառների մեջ և ուղարկում վաճառքի թարմ գրությամբ:

Յերկար պահելու համար լավ ե շուն աղ անել: Դրա համար կանոնավոր ցամաքած շոռը փոռմ են տաշտի մեջ ու այնտեղ փշում, մանրացնում ձեռքով և աղ անում: Շատ յերկար պահելու համար մեկ փութ շորի համար գործադրում են $\frac{1}{4}$ —1 ֆունտ աղ: Այն անելուց հետո շոռը պիտի լավ խառնել, վոր աղը հավասար տարածվի: Տաշտի մեջ աղ արած շոռը, պահում են 12 ժամ տաք սենյակում, վոր աղը լավ հալվի ու կարգին ծծվի շոռի մեջ: Այսուհետև պատրաստի շոռը թափում են տակառների մեջ, խցկում ու փակում խուփով: Տակառի պատերը հարկավոր ե աղաջրով լվանալ: Այս ձեռվ պատրաստված շուն առանց փշանալու կարող ե տակառների մեջ շատ յերկար մնալ:

Շատ լավ շոռ ե սաացվում և մածնից: Դրա համար պետք ե յուղանան արած կաթը տաքացնել մինչև 80—90° Ց. և սովորական ձեռվ մածուն մերել, այսուհետև վարդիլ ճիշտ այնպիս, ինչպես նկարազրկած ե վերեւում:

5. Զ Ի Լ Պ Ա Ն Ի Բ.

Սերգատով անցկացրած կաթը տաքացնում են մինչև 35—36° Ց. և թողնում վոր թթվի: Թթվելությունը հասած է համարվում, յերբ կաթը ծելսիուսի 70—80° տաքացնելուց կտրվում է: Փորձելու համար հարկավոր ե գդալով մի քիչ վերցնել և պահել տաք ջրի մեջ: Յեթե գդալի պատերի վրա կաթն արդեն սկսում է կտրվել ուրեմն թթվությունը համարվում է հասած: Թույլ չպիտի տալ, վոր կաթը շատ թթվի, պնդանա, վորովինետև պինդ մերկած կաթից ջիլ պանիր չի ստացվում, այլ ստացվում է շոռ: Հասած կաթն ունկնավոր ամանով գնում են տաք ջրի մեջ և անրնդատ խառնում ձեռքերով, աշխատելով

մերկած մասերը պոկել ամանի պատերից և ամբողջը հավաքել մի տեղ: Կաթը ջրի մեջ դնելուց առաջ, լավ ե մի քիչ պանրի մերան գցել մեջը՝ ավելի լավ մերելու համար:

Մերկած մասերը, ինչպես ասացինք, պետք ե պատերից պոկել և մեջ տեղ հավաքելով՝ ճմուկ ձեռքերով, լավ տրորել վոր շիճուկի միջից դուրս գա: Միևնույն ժամանակ պանրանյութին պետք ե յերկար ձև տալ ճմուկու ընթացքում Այդ ամբողջ աշխատանքը պետք ե կատարել պանիրը շիճուկի մեջ պահելով: Յերբ արդեն պանրամասերը միանում և հաստ պարան են կազմում, այն դեպքում հանում են: Վորքան շատ է շիճուկի մեջ պանիրը տրորվում, այնքան ավելի բարակ են ստացվում պանրի թելերը բայց պանիրը չոր ե դուրս գալիս:

Պատրաստի պանիրը հանում են յերկար թոկի նման, և դնում սեղանի վրա, վոր պաղի, ապա, փաթաթում են կծկի ձևով ու դնում աղաջրի մեջ, վոր պահվի:

6. Թ Ա Ն.

Կարագ գոյանալուց հետո ինոցուց դուրս թողած առաջին հեղուկը կոչվում է թան: Թանը կարող ե լինել քաղցր և թթու, նայած թե ինչ հավաքսից ե պատրաստած: Մածնից և թթու արաժանից ստացվում է թթու թան, քաղցր արաժանից՝ քաղցր:

Քաղցր թանն առանց վտանգի կարելի յե տալ հորթերին, խոճկորներին և այլն: Նրա կերարժեքն նոյնքան ե, վորքան քաղցր քաշած կաթինը: Թանի գործադրության ամենալավ ձեռ կենդանիներին կերակրելն է: Թթու թանն ել կարելի յե տալ կենդանիներին, բայց վոչ մատղիամներին, այլ մեծերին, վորովինետև փոքրերի մեջ թթու թանը փորլուծ կարող ե առաջացնել:

Թանից կարելի ե պատրաստել շոռ սովորական ձևով (տես «Շոռը»): Բայց սովորաբար թթութանից պատրաստում են քամած թան կամ չորաթան: Քամած թանը պատրաստում են այսպես: Թանը մի ամանի մեջ անընդհատ և գանդաղ խառնելով տաքացնում են, մինչև փոք շաղվելուն մոտենա, բայց չկտրվի: Այսուհետեւ ածում են տոպղակի մեջ ու քամում, դնելով տոպղակի վրա մի փորեւ ծանրություն: Յերբ թանը բոլորովին ջրաքամ ե լինում, թեթև աղ են անում և մի փորեւ ամանում պահում գործածելու համար: Գերադասելի յեն փայտեւ և կափե ամաները:

Յերբ այդպես պատրաստված թանից գնդեր են պատրաստում և չորացնում արեկի տակ, այն դեպքում կոչվում ե չորաթան:

Թե քամած թանը և թե չորաթանը մեր ժողովրդի սիրած կերակուրներից են:

XVIII. ԿԱԹԻ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆԸ.

1. ԻՆՉՈՒ ՀԱՄԱՐ ԵՆ ԿԱԹԸ ՀԵՏԱԶՈՏՈՒՄ.

Հաճախ անհրաժեշտ ե լինում իմանալ՝ տվյալ կաթը լավը ե, թե արատավոր: Այդ կարելի յե լինում ստուգել կաթը հետազոտելու միջոցով: Կաթի հետազոտության միջոցով իմանում ենք նաև կաթի յուղալի կամ ջրալի մենելը կամ կաթին ջուր ե խառնված, թե վոչ: Ով կաթնա մթերք ե պատրաստում, պետք ե համոզված լինի, փոք իր կաթին անարատ ե և թարմ, փորովհետեւ լավ կաթնամթերքներն ստացվում են միմիայն թարմ և անարատ կաթից:

Կաթի հետազոտությունն ամենից շատ հարկավոր ե կաթնատեսական արտելներին, ընկերություններին, փորոնք հարյուրավոր կրվատերերից կաթ են ստանում և ամբողջ կաթը միասին մշակում: Յուրաքանչյուր խոշոր պանրագործարանում որական յերբեմն 100—200 փութ կաթ

են մշակում և մի փութ արատավոր կաթ բավական ե վոր ամբողջ կաթը փշացնի: Առանձնապես մեծ զգուշություն պետք ե շվեյցարական պանիր պատրաստելու ժամանակ, վորովհետեւ վատ կաթից պանիրն ուռչում ե ու ճաքում:

Բացի դրանից, կաթնատնտեսական աքտելներին ձեռնուու չե գանազան տեսակ կաթերին միւնույն զինը տալու վորքան յուղալի յե կաթը, այնքան ել շատ յուղ ու պանիր ե ստացվում նրանից, ուրեմն յուղալի կաթը ջրալի կաթից ձեռնուու յե: Այդ պատճառով կաթնատնտեսական արտելը միշտ պետք ե տեղյակ լինի, թե ամեն մի ընկերություն ինչ տեսակ կաթ ե ստանում, ջրալի, թե ընկերություն յուղալի: Կաթնատնտեսական արտելների անբարեխիղձ յուղալի, կաթնատնտեսական արտելների անբարեխիղձ ընկերներից վոմանք, յերբեմն կաթին ջուր են խառնում, ընկերներից ինչպես ասացինք՝ այս ամենի առաջ կարելի յե առնել միայն հետազոտելով կամ քննելով ընկերների բերած կաթը:

Կաթի հետազոտությունը, այդպիսով, նպատակ ունի վորոշելու՝ կեղծված ե կաթը, թե վոչ, (յերեսը քաշած, ջուր խառնած և այլն), յուղալի յե, թե ջրալի, թթված ջուր խառնած և այլն), յուղալի յե, թե ջրալի, թե վոչ, հիվանդ կենդանիներից ե, թե առողջ և այլն:

Բացի դրանից, զանազան կաթնամթերքներ պատրաստելու և կաթը խնամելու կամ պահելու նպատակով, ինչպես արդեն գիտենք այս գրքից, համարյա միշտ հարկավոր ե լինում փորոշել կաթի, ջրի և արաժանի տաքությունը, այնպես վոր ջերմության չափելը նույնպես մտնում ե կաթի հետազոտության մեջ:

2. ՏԱՐԱՒԹՅԱՆ ՉԱՓԵԼԸ.

Տաքությունը չափում են ջերմաչափով (տես նկ. 50): Սովորաբար գործ են ածում Ռեոմյուրի (Ռ.) և Ցելսիուսի (Ց.) ջերմաչափերը: Ցելսիուսն ել ապահով խողովակներ են յերկու ծայրերից փակ: Խողովակի ներքին լայն ծայրի մեջ մնդիկ է ածված: Տաքությունից սնդիկը լայնանում ե բարձրանում խողովակի միջով, իսկ ցրտից նա սեղմվում, իջնում է: Ցելս այդ յերկու ջերմաչափերն ել դնում են յեռացող ջրի մեջ, ապա նրանց մնդիկները խողովակներում բարձրանում ե կանգնում են միենալուն բարձրության վրա կամ միենալուն կետում: Իսկ յելք ջերմաչափերը դնում են սառչող ջրի մեջ, ապա մնդիկներն իջնում ե կանգնում են դարձյալ միենալուն կետում: Ցելսիան և սառուցման կետերի միջև յեղած տարածությունը Ցելսիուսն իր ջերմաչափը պատրաստելիս բաժանել ե 100 մասի, իսկ Ռեոմյուրը 80-ի: Ամեն մի մասը կոչվում ե ջերմության աստիճան: Ջրի սառուցման կետը յերկուսն ել նշանակել են 0-ով, իսկ յեռան նկ. 50. Զերտապահ Ցելսիուսը՝ Ցելսիուսը նշանակել ե 100, Ռեոմյուսի յուրը՝ 80-ով: Պարզ ե, վոր Ցելսիուսի աստիճանները Ռեոմյուրի աստիճանների աստիճանը համեմատել իրար հետ մեծ մասամբ Ռեոմյուրի ջերմաչափը, իսկ արտասահմանում գործ են ածում սովորաբար Ցելսիուսի ջերմաչափը: Վերջինս ավելի հարմար ե: Ցանկալի յեր մեզ մոտ ել Ցելսիուսի ջերմաչափը գործածիք: Ցելսիուսի 0 աստիճանը հավասար ե Ռեոմյուրի 0 աստիճանին, Ցելսիուսի 100 աստիճանը՝ Ռեոմյուրի 80 աստիճանին, Ցելսիուսի 5 աստիճանը՝ Ռեոմյուրի 4-ին և այլն: Վորպեսզի հեշտ լինի այդ յերկու ջերմաչափերի աստիճանները համեմատել իրար հետ և մեկի տեղ մյուսը գոր-

ծածել, կամ մեկը մյուսի վերածել, գրքի վերջում բերում ենք համեմատական աղյուսակ:

Ցելսե ձեռքի տակ պատրաստի աղյուսակ չկա ապա տմեն անգամ կարելի յե մեկի աստիճանը մյուսի աստիճանով արտահայտել հետեւալ կերպով: Ցելք հարկավոր ե Ցելսիուսի աստիճանները վերածել Ռեոմյուրի աստիճաններին պետք ե Ցելսիուսի աստիճանները բազմապատկել 4-ով և արտադրյալը (ստացած թիվը) բաժանել 5-ի վրա: Իսկ յելք Ռեոմյուրի աստիճաններն ենք ուզում վերածել Ցելսիուսի աստիճաններին, պետք ե Ռեոմյուրի աստիճանները բազմապատկել 5-ով և բաժանել 4-ի վրա:

Կաթնատնտեսները սովորաբար գործ են ածում այնպիսի ջերմաչափեր, վորոնք ամուր նստեցրած են փայտե բնի մեջ: Այդպիսի ջերմաչափերը թեև կոտրվելուց ավելի պահով են, բայց աննպատակահարմար են նրանով, վոր նրանց փայտե բունը ծծում ե կաթն իր պատերի մեջ, կեղտոտվում ե և հաճախ կաթի փշանալու պատճառ դառնում: Ուրեմն լավ ե գործածել այնպիսի ջերմաչափեր, վորոնք փայտե բուն չունեն, միայն հարկավոր ե նրանց հետ զգույշ վարպետ: Շատ հարմար են լողացող ջերմաչափերը, վորոնք պատրաստվում են հատկապես կաթի ջերմությունը չափելու համար (Նկար 51):

3. ԿԱԹԻ ՑԵԼՍԻՈՒՄ ԿԵՇԻ ՎՈՐՈՇԵԼԸ (ԿԱՄ ԻՆՉՎԵՍ ԻՄԱՆԱԼ ԿԱԹԻ ՑԵԼՍԻ ՔԱՇԱԾ Ե, ԿԱՄ ԿԱԹԻՆ ԶՈՒՐ Ե ԽԱՌՆՎԱԾ ԹԵ ՎՈԶ).


Մենք արդեն գիտենք, թե կաթն ինչից ե բաղկացած: Գիտենք նաև, վոր կաթի բոլոր մասերից ամենաթեթևը յուզն ե: Ցելսե կաթի մասերի ծանրությունն առանձին-առանձին համեմատենք ջրի հետ, կտեսնենք, վոր նրանք բոլորն ել ջրից ծանր են և միայն յուզն ե, վոր ջրից թեթև ե: Վորովետե կաթի մեջ կան թե ջրից ծանր

և թե թեթև մասեր ու բացի դրանից ծանրելը մի քիչ
ավելի յեն թեթևներից, ուստի կախն ել մաքուր (թոր-
յալ) ջրից մի չիչ ծանր ե։ Սյստես որինակ՝ մեկ
փուր (2,4 ֆունտ) կշռում ե ուղիղ մեկ քիլոգրամ,
այսինքն՝ 1000 գրամմ, իսկ մեկ լիտր անարատ
կաթը, միջին թվով կշռում ե մեկ քիլոգրամմ և
32 գրամմ, այսինքն 1032 գրամմ, կամ 1,032
բեր։ Յեթե կաթի յերեսը քաշենք, կաթի մեջ
կման միայն ծանր մասելը և կաթը կծանրա-
նա։ Իսկ յեթե կաթին ջուր խառնենք, այդ դեպ-
քում կաթը լիթեթևանա, վորովհետեւ ջուրը կա-
թից թեթև ե։


Կաթի քաշը ջրի քաշի հետ համեմատելիս
պետք ե միշտ յերկուսի համար ել միևնույն ծա-
վալը վերցնել։ Պարզ ե, վոր մի դույլ ջուրը
միշտ ել ծանր կլինի մի բաժակ կաթից։ Հենց
այդ պատճառով, յեթե ուղում ենք իմանալ
կախն ե ծանր, թե ջուրը, պետք ե յերկուսի
համար ել միևնույն չափը վերցնենք ու այդ չա-
փով լիքը կաթի և ջրի ծանրությունը համեմա-
կաթի չեր-
տենք իրար հետ։ Այս թիվը, վոր դույց ե տալիս, թե
քանի անգամ կաթը ծանր ե կամ թեթև միե-
նույն ծավալ (չափ) ունեցող ջրից, կոչվում ե կա-
թի տեսակարար կշիռ։ Սյստես են վորոշում նաև
բոլոր հեղուկների տեսակարար կշիռ։ Վերեսում բե-
րած մեր որինակից յերկում ե, վոր մեկ լիտր ջուրը
կշռում ե 1000 գրամմ, իսկ մեկ լիտր կաթը 1032 գրամմ։
Յեթե ջրի քաշն ընդունենք հավասար մեկի, ապա կաթինը
կհավասարվի 1,032-ի։ Այս ցույց ե տալիս, վոր կաթը
1,032 անգամ ջրից ծանր ե, կամ կաթի տեսակարար
կշիռը հավասար ե 1,032։ Յերբեմն կաթի տեսակար
կշիռը լինում ե այս թվից բարձր կամ ցածր։ Անարատ

կաթի տեսակարար կշիռը տատանվում ե 1,028-ի և 1,034
միջև և սովորաբար այս սահմաններից դուրս չի գալիս։ Բայց
յերբ կաթի յերեսը քաշում են, տեսակարար կշիռը մե-
ծանում ե (վորովհետեւ թեթև մասը, այն ե՝ յուղը, կա-
թի միջից դուրս ե գալիս), դառնում ե որինակ՝ 1,035,
1,036 և այլն։ Կաթի տեսակարար կշիռն ավելանում ե
նաև այն ժամանակը, յերբ անարատ կաթին ավելացնում
են քաշած կաթ։ (Ծանր մասերը շատանում են)։ Բայց
ջուր խառնելուց կաթի տեսակարար կշիռը փոքրանում ե
(ջուրը թեթև ե) և մոտենում ե ջրի տեսակարար կշիռն
(ջրի տեսակարար կշիռը հավասար ե մեկի)։

Ահա այդ հիման վրա հսարել են մի գործիք, վորի
միջոցով կարողանում են ճիշտ վորոշել կաթի տեսակա-
րար կշիռը, իսկ տեսակարար կշիռը վորոշելու միջոցով իմա-
նում են անարատ ե կաթը, թե յերեսը քաշած կամ ջուր
ե խառնած։ Այս գործիքը կոչվում ե արեոմետր
(Տես նկ. 52)։ Արեոմետրի մի քանի տեսակները կան,
բայց ամենատարածվածը կվեվենի արե-
ոմետրն ե. դա մի ապակյա բարակ
խողովակ ե, վորի ներքեմի մասը գնդածն
ե և լցված ե սնդիկով։ Խողովակի բարակ
մասի ներսը գտնվող թուղթն աստիճան-
ների յերաժամկետ պատճեն է առաջարկված, վորոնք ցույց են
տալիս կաթի տեսակարար կշիռը։ Սա-
կայն թղթի վրա տեսակարար կշիռի թվե-
րը լրիվ չեն նշանակված, այլ միայն նրա
հարցուր և հազար յերորդական մա-
սերը, այսինքն աջ կողմից յերկու թվե-
րը, վորովհետեւ միմիայն նրանք են փո-
փոխական, իսկ առաջին յերկու թվերը
միշտ ել մնումեն անփոփոխ։ Որինակ՝
փոխական գրելու 1,028 կամ 1,034
գրված ե միայն 28 և 34։ Արեոմետրն
նկ. 52. Արեոմետր
կվեվենի



ունի և ջերմաչափ, վորը գտնվում է խողովակի վերևի ծայրում։ Տաք կաթի տեսակարար կշիռը վորը ե, սառը կաթինը՝ մեծ։ Կաթի տեսակարար կշիռը պայման ավելի են վորոշել Ցելսիուսի ջերմաչափով 15° տաքության ժամանակ։ Դրա համար տեսակարար կշիռը վորոշելիս հարկավոր ե տաքացնել կամ սառցնել կաթը, հասցնել Ցելս. 15°-ին։ Բայց փոխանակ սառցնելու կամ տաքացնելու, ավելի լավե ողտվել № 1 աղյուսակից։ (Եջ 143 և 144) Այդ աղյուսակով հեշտությամբ կարելի յե գտնել ջերմության 15°-ի հասցրած կաթի տեսակարար կշիռը։ Որինակ, յենթագրենք կաթի ջերմության աստիճանը Ցելսիուսի ջերմաչափով 17°-ե, իսկ արեօմետրը ցույց ե տալիս 31,0։ Աղյուսակի համապատասխան հորիզոնական տողի ձախ ու աջ ծայրերին գտնում ենք այդ 31,0 թիվը։ Այսուհետեւ գտնում ենք այն սյունակը, վորի վերեռում գտնվում է ջերմության 17° և իջնում ենք ցած, մինչեւ հանդիպում ենք հորիզոնական այն գծին, վորի յերկու ծայրերին նշանակված ե արեօմետրի 31 թիվը։ Այդ յերկու գծերի հանդիպման կետում նշանակված է 31.4, վորը և ցույց ե տալիս, 15°-ի հասցրած տվյալ կաթի իսկական տեսակարար կշիռը և վորը հարվասար ե 1,0314։

Կաթի տեսակարար կշիռը վորոշելու համար կաթն ածում են ապակյա գլանակի մեջ, (Տես նկ. 52), բայց այնպես, վոր կաթի յերեսին փրփուր չդոյանա, վորովհետու փրփուրը թույլ չի տալիս արեօմետրի աստիճանները կարդալ. վորաբեսզի փրփուր չառաջանա, պետք ե կաթն այնպես ածել, վոր զլանակի պատերով հոսի։ Ցերը զլանակի յերկու յերրորդ մասը լցվում ե, արեօմետրը կամաց իշեցնում են և թողնում հանդիսատ, վոր կաթի մեջ կանգնի։ Ցելե կաթը յուղալի յե լինում, ուրեմն և թեթև, արեօմետրը շատ ե իջնում և ցույց ե տալիս փոքր տեսակարար կշիռ, իսկ յերբ կաթի յերեսը քաշած ե լինում, ուրեմն կաթը ծանր ե, արեօմետրը բարձրանում ե և

ցույց ե տալիս մեծ տեսակարար կշիռ։ Այդ ե պատճառը, վոր արեօմետրի վրա մեծ թվերը գտնվում են ներքեր, իսկ փոքր թվերը՝ վերև։ Յերբ արեօմետրն ուղղահայած կիրք ե ընդունում և կանգնում ե, նայում են թե արեօմետրի վոր աստիճանն ե կաթի մակերեսույթին կպած։ Այդ գծի վրա նշանակված թիվը ցույց ե տալիս կաթի տեսակարար կշիռը, վորը սակայն պետք ե ուղղել աղյուսակի ողնությամբ, վերեռում բերած ձեռվ, յեթե կաթի աստիճանը Ցելսիուսի 15 աստիճանից բարձր ե կամ ցածր։ Նոր կթած կաթը միշտ փոքր տեսակարար կշիռ ե ունենում, այդ պատճառով պետք ե կաթը պահել 3—4 ժամ սառուցի մեջ և ապա վորոշել տեսակարար կշիռը։ Տեսակարար կշիռը վորոշելու համար կաթի նմուշը վերցնելուց առաջ անհրաժեշտ ե կամաց, բայց լավ իւանել կաթը, վորովհետև յերկար ժամանակ անշարժ մնացած կաթի յերեսի մասը թեթև ե լինում, քան տակինը։

Շատ անգամ տեսակարար կշիռը վորոշելով անհնարին ե լինում ստուգել կաթի անարատ լինելը։ Այդ պատճառում ե այն գեպքերում, յերբ կաթի յերեսը քաշում են և քաշած կաթին չուր խառնում։ Ցերեսը քաշելուց կաթի տեսակարար կշիռը մեծանում ե, բայց չուր խառնելուց փոքրանում։ Այդպիսի գեպքերում կարող ե պատճել, վոր տեսակարար կշիռը մնա անփոփոխ և անհնար լինի պարզել կեղծիքը։

Այսպիսով տեսակարար կշիռի ողնությամբ միշտ հնարավոր չի լինում կեղծիքը բռնել և կարող ե սխալ արդյունք ստացվել։ Այդպիսի գեպքերում ամենաստույդ միջոցը՝ կաթի յուղի տոկոսը վորոշեն ե։ (Տես ներքեւ)։

Բացի կվեզենի արեօմետրից կան և ուրիշները, վորոնցից առանձնապես իր պարզությամբ աչքի ե ընկնում Ավ. Քալանթարի արեօմետրը։

Քալանթարի արեօմետրը ջերմաչափ չունի, դրա փոխարեն ունի ուղղիչ, վորը գտնվում ե արեօմետրի խորակի ուղղիչին ուղղական աշքի մեջ և արեօմետրը բարձրանում ե և

դովակի ցած մասում, իսկ արեօմետրի աստիճանները զբանվում են վերևի բարակ խողովակի մեջ։ Ուղղիչի մնդիկը ցույց չի աալիս ջերմության չափը, այլ այն թիվը, վորը պետք ե հանել արեօմետրի ցույց տված թվից կամ ավելացնել այդ թվին վորպեսզի ստացվի Ցելսիուսի 15^o-ին հասցրած կաթի իսկական տեսակարար կշիռ։ Այդ ուղղիչը բաժանված է յերկու հավասար մասի և մեջ տեղավ անցկացրած ե մի կարմիր գիծ։ Ջերմության 15^o-ում Յ. մնդիկը կանգնում է կարմիր գծի վրա, իսկ 15-ից ավել կամ պակաս լինելու դեպքում, մնդիկը կամ բարձրանում է կարմիր գծից, կամ իշնում։ Ցեվ այս դեպքում, նայած ցածրացել ե, թե բարձրացել, մնդիկի ցույց տված թվերը կամ հանում են արեօմետրի թվերից, կամ գումարում նրանց։ Ցեթե գծից բարձրանում ե, գումարում են, իսկ իշնելու դեպքում՝ հանում։

Որինակ. դիցուք արեօմետրը ցույց է տալիս 31,5, իսկ ուղղիչը կարմիր գծի վերև ցույց է տալիս 0,6։ Այդ դեպքում 31,5-ին պետք է ավելացնել 0,6, կստանանք 32,1 ($31,5 + 0,6 = 32,1$)։ 32,1 ցույց է տալիս իսկական տեսակարար կշիռը։ Իսկ յեթե ուղղիչի տված թիվը կարմիր գծից ցածր ե, այն դեպքում հարկավոր է այդ թիվը հանել արեօմետրի ցույց տված թվից՝ որինակ՝ $31,5 - 0,6 = 30,9 = 1,309$

Այս արեօմետրով աշխատելիս վոչ մի աղյուսակի կարիք չի լինում։

ԱՆՑՈՒՍԱԿԱ ՆՈ 1.

Կաթի տեսակարար կշիռը Ցելսիուսի 15^o-ին բերելու համար։

	Զերմության աստիճանները Ցել. ջերմաչափով:				
	10	11	12	13	14
20	19.3	19.4	19.5	19.6	19.8
20,5	19.8	19.9	20.0	20.1	20.3
21	20.3	20.4	20.5	20.6	20.8
21,5	20.8	20.9	21.0	21.1	21.3
22	21.3	21.4	21.5	21.6	21.8
22,5	21.8	21.9	22.0	22.1	22.3
23	22.3	22.4	22.5	22.6	22.8
23,5	22.8	22.9	23.0	23.1	23.3
24	23.3	23.4	23.5	23.6	23.8
24,5	23.8	23.9	24.0	24.1	24.3
25	24.2	24.3	24.5	24.6	24.8
25,5	24.7	24.8	25.0	25.1	25.3
26	25.2	25.3	25.5	25.6	25.8
26,5	25.7	25.8	26.0	26.1	26.3
27	26.2	26.3	26.5	26.6	26.8
27,5	26.7	26.8	26.9	27.1	27.3
28	27.1	27.2	27.4	27.6	27.8
28,5	27.6	27.7	27.9	28.1	28.3
29	28.1	28.2	28.4	28.6	28.8
29,5	28.6	28.7	28.9	29.1	29.3
30	29.0	29.2	29.4	29.6	29.8
30,5	29.5	29.7	29.9	30.1	30.3
31	30.0	30.2	30.4	30.6	30.8
31,5	30.5	30.7	30.9	31.1	31.3
32	31.0	31.2	31.4	31.6	31.8
32,5	31.5	31.7	31.9	32.1	32.3
33	32.0	32.2	32.4	32.6	32.8
33,5	32.4	32.6	32.9	33.1	33.3
34	32.9	33.1	33.4	33.5	33.8
34,5	33.4	33.6	33.8	34.0	34.2
35	33.8	34.0	34.2	34.4	34.7

ԱՂՅՈՒՍԱԿ №1. (Շարունակություն)

Կաթի տեսակաբար կշիռը Ցելսիուսի 15°-ին բերելու համար:


	Զերմության աստիճանները Ցել. ջերմաչափով:					
	15	16	17	18	19	20
20	20	20.1	20.3	20.5	20.7	20.9
20,5	20.5	20.6	20.8	21.0	21.2	21.4
21	21	21.2	21.4	21.6	21.8	22.0
21,5	21.5	21.7	21.9	22.1	22.3	22.5
22	22	22.2	22.9	22.6	22.8	23.0
22,5	22.5	22.7	22.	23.1	23.3	23.5
23	23	23.2	23.4	23.6	23.8	24.0
23,5	23.5	23.7	23.9	24.1	24.3	24.5
24	24	24.2	24.4	24.6	24.8	25.0
24,5	24.5	24.7	24.9	25.1	25.3	25.5
25	25	25.2	25.4	25.6	25.8	26.0
25,5	25.5	25.7	25.9	26.1	26.3	26.5
26	26	26.2	26.4	26.6	26.9	27.1
26,5	26.5	26.7	26.9	27.1	27.4	27.6
27	27	27.2	27.4	27.6	27.9	28.2
27,5	27.5	27.7	27.9	28.1	28.5	28.7
28	28	28.2	28.4	28.6	28.9	29.2
28,5	28.5	28.7	28.9	29.1	29.4	29.7
29	29	29.2	29.4	29.6	29.9	30.2
29,5	29.5	29.7	29.9	30.1	30.4	30.7
30	30	30.2	30.4	30.6	30.9	31.2
30,5	30.5	30.7	30.9	31.2	31.4	31.7
31	31	31.2	31.4	31.7	32.0	32.3
31,5	31.5	31.7	31.9	32.2	32.5	32.7
32	32	32.2	32.4	32.7	33.0	33.3
32,5	32.5	32.7	32.9	33.2	33.5	33.8
33	33	33.2	33.4	33.7	34.0	34.3
33,5	33.5	33.7	33.9	34.2	34.5	34.8
34	34	34.2	34.4	34.7	35.0	35.3
34,5	34.5	34.7	34.9	35.2	35.5	35.8
35	35	35.2	35.4	35.7	36.0	36.3

4. ԻՆՉՊԵՄ ԵՆ ՎՈՐՈՇՈՒՄ ԱՆԱՐԱՏ ԿԱԹԻ ՅՈՒՂԻ ՏԱԿՈՍԸ:

Ա. ԹԹՎՈՒՏԱՅԻՆ ՄԵԹՈԴ.

Կաթի յուղի տոկոսը վորոշելու համար անհրաժեշտ է անենալ հետեւյալ գործիքները և պարագաները:

1. Գերբերի կենարոնախույս գործիքը (Տես նկար 53, 54): Այդ գործիքները լինում են զանազան մեծության և, նայած



գրանց մեծությանը, կարելի յելնում դրանցով հետազոտել միաժամանակ 2, 4, 8, 16, 24 և այլ քանակի կաթի նմուշները: Նկար 53-ի վրա ցույց ե

տված յերկու նմուշանոց գերբերի ապարատար բաց դրությամբ, իսկ 54-ի վրա ցույց

ե տված 8 նմուշանոց ապարա-

րատ փակ դրությամբ: Կաթ-

ի առկոսը վորոշելու համար բա-

նատնատեսական արտելների

պահպանության մեջ գործում է:


2. Բուտիրումետրներ կամ յուղաչափեր (Տես նկ.

55 և 56):

3. Ջրի վաննա (Տես նկ. 57), բուտիրումետրները տա-

քայնելու համար:

4. Պատվանդան (ստատիվ) բուտիրումները
թափահարելու համար (Տես նկար 58) և սովո-
րական պատվանդան (Տես նկ. 59) բու-
տիրումները վրան
նստեցնելու համար:



Նկ. 54. Գերբերի ութ նույշանց կենարո-
ւախույս գործիք վանկ զբությամբ:

արանց՝ ամիլյան ալկոհոլի համար:

6. Զերմաշափ. — Ցելսիուսի աստիճաններով:

Բացի դրանից անհրաժեշտ է ունենալ՝

1. Ծծմբաթթու, վորի տեսակարար կշիռը պիտի լինի
1,820—1,825; Ծծմբաթթուն կազեխնը (պանրանյութ) լու-
ծում, և յուղը կաթից բաժանում է: Այդ պատճառով սրա-
նից թույլը լրիվ չել լուծի պանրանյութը, իսկ սրանից ուժեղը
կայրի յուղի մի մասը: Այնպես վոր պետք է գործածել
1,820—1,825 տեսակարար կշիռ ունեցող ծծմբաթթու:

2. Քիմիապես մաքուր ամիլյան ալկոհոլ, վորի տե-
սակարար կշիռը պետք է լինի 0,815: Ամիլյան ալկոհոլը
նորանում է յուղի ջոկվելուն: Այս յերկու բեակարիվներն
ել կարելի յէ ձեռք բերել գեղատներում:

Հետազոտության յէզանակը. — Բոլորովին մա-
քուր և ցամաք բուտիրումները նստեցնում են պատ-

վանդանի վրա այնպես, վոր բերաններն ուղղած լինեն գեղի
վեր: Պիպետով (ծծելով) կամ հատուկ ավտոմատի միջոցով
(Տես նկ. 61). շափում են 10

խոր. սահմանմատը ծծմբաթ-

թու և ածում բուտիրումներ-

ների մեջ, բայց այնպես, վոր

բուտիրումների բերանը թրթ-

ով չթթվի: Թթուն ածելիս,

պիպետից յերբեք չպետք է

փշել, այլ պիտի թողնել վոր

պիպետի ծալքի կաթիլը մնա

պիպետին կպած և չնկնի

բուտիրումների մեջ: Կաթի

պիպետով հարկավոր և շա-

փել 11 խորան, սահմանմ. կաթի

և զգուշությամբ մացնել բու-

տիրումների մեջ ու բաց թող-

նել պատերի վրա այնպես,

վոր կաթի կամաց հսկի պա-

տերի վրայով և նստի թթվի

վրա, բայց չխառնվի նրա հետ:

Կաթի նույնպես չի կարելի

փշել: Այսուհետեւ պետք ուն-

պիպետով կամ ավտոմատով
(Տես նկ. 61) շափել մեկ

խորանարդ սահմ. սահման

ալկոհոլ և ածել կաթի վրա,

բայց այնպես վոր պիպետի

ծալքը կաթին չկպչի:

Միշտ պետք է ածել թթվ-

գուար հետո կաթը և ապա

ամիլյան ալկոհոլը: Այս կարգը

յերբեք չպետք է խախտել, հակառակ զեպում կարող է պայ-

թյուն տուաջանալ: Դրանից հետո բուտիրումների բերանը



Օ՛Ն. Գերբեր Համար Լեզու
Flatbottomcomptometer

Նկ. 55 և 56. Բուտիրումներներ,
(ուղղաչափիք):

պինդ փակում են ռետինե խցանով, և բութ մասով խցանը սեղմելով (վոր խցանը դուրս չգա) բուտիրոմետրն այնքան են թափահարում, վոր կաթն ամբողջովին լուծվի և միատեսակ դարշնագույն հեղուկ դառնա: Թափահարելու ժամանակ




Նկ. 57. Զբի գանձան բուտիրոմետրները ապաքնար:




Նկ. 58. Պատվանդան բուտիրոմետրները թափահարելու համար:

բուտիրոմետրը շատ է տաքանում, այնպես վոր լավ է շորի կարով բռնել, կամ դործածել գրա համար համուկ պատվանդան (Տես Նկ. 58):




Նկ. 59. Պատվանդան բուտիրոմետրների համար:

Պատրաստի բուտիրոմետրները դնում են ջուր ածած վաճնայի մեջ. Ջուրը նախապես տաքացնում են մինչև 60—65 աստիճան Յելսիուսի ջերմաչափով: Վաճնայի մեջ բուտիրոմետրները մնում են 3—4 րոպե, վորից հետո հանում են, ցամաքացնում և խկույն դնում կենտրոնախույյի (Գերբերի ապաքատի) մեջ, հատկապես բուտիրոմետրների համար շինած մետաղյա բներում: Բուտիրոմետրների բարակ ծայրը պետք է ուղղված լինի դեպի կենտրոնը, իսկ հասար՝ դեպի դուրս: Հավասարակշռություն պահելու համար պետք է ապաքարատի վրա բուտիրոմետրները դասավորել իրար դիմաց: Յեթե բուտիրոմետրները կենա են, մեկի դիմաց կարելի յե ջրով լիքը բուտիրոմետր ամբացնել: Յերբ բուտիրոմետրներն արդեն դարսված են, ապաքարատի խուփը փակում են, (յեթե խուփ ունի) ամրացնում և սկսում են արագ պտտել 3—4 րոպե: Կենտրոնախույյս ուժի շնորհիվ յուղը ջոկվում է, հավաքվում կենտրոնի մոտ, բուտիրոմետրի բարակ ծայրին: Յերբ պտտելը դադարեցնում էն, ապաքարատը կանգնում է, այնուհետև բուտիրոմետրներն զգուշությամբ հանում են բներից, բայց այնպես, վոր բուտիրոմետրների բարակ ծայրերը դեպի վեր ուղղված լինին և, 3—5 րոպեյով դնում են տաք վաճնայի մեջ (65 աստիճան Յելսիուսի): Այնուհետև բուտիրոմետրները վաճնայից հանում են և բռնում ուղղահայծ դիրքով, բարակ ծայրը դեպի վեր վեր ուղղած, խցանը ներքերից ողմում են, մին-



Նկ. 60. Պիպիտներ
(ձձիչներ)
ա—կարսի համար
б—ձձմաթթվուտի
համար
в)—ամերիկան ակո-
նոի համար

Հետո հալած պարզ յուղիներքի սահմանը կանգնի մի վորեն ասափանի վրա (լավ է զերոյի վրա) ու համարում են քանի դիմ և բանում յուղի սյունյակը: Մեծ զծերը ցույց են առաջիս լրիվ տոկումներ, իսկ նրանց արանքում մանը զծերը,



Նկ. 61. Ավտոմատ՝ ծծմբա-
թթվուա և ամիլյան ալղոհու
չափելու համար:

Են զոլ ջրով, ապա տաք սոգաջրով և վերջը՝ սորից զոլ ջրով, իսկ մնացած պիտիտները բավական և փողողել միայն մաքուր զոլ ջրով:

Բ. ԳԵՐԲԵՐԻ «ՍԱԼ ՄԵԹՈԴ».

Թթվուտային մեթոդը թեև շատ լավ արդյունքներ է տալիս բայց մի շարք անհարմարությունների հետ ե կապված:

Ծծմբաթթվի հետ գործ ունենալը վտանգավոր է, պիտի պետափ ձձելու ժամանակ կարող է հանկարծ բերանն այ-

բեր՝ Զեռքերը, շորերը և այլն հեշտությամբ այրվում են դրանից։ Թափահարելու ժամանակ բուտերումները՝ շափազանց տաքանում և դժվարացնում են աշխատանքը։ Ամիլյան ակորնը խեղափիչ հոտ ունի և նրա գոլործին վատ և ազդում բերանի և քթի լորձաթաղանթների վրա։

Այս անհարմարություններըց ազատ է Գերբերը գտնել և մի բաղադրություն «Սալ» անունով, վորը նույնպես հաջող կերպով յուղը չոկում է կոթից և այդ անհարմարությունները չունի: «Սալը» մի փոքի և ալկալի բետակցիայով, վորի հետ ամիլյան ալկոհոլի փոխարեն գործ են ածում իզոբռուտիլյան ալկոհոլը, (բռուտիոլ): Պահրանցութը լուծվում է ալկալի միջոցով:

Յելսիուսի:
Բուտիբոմեարի մեջ ածում են սկզբում 11 խոր.
ասնաւ. Ալ-ի լուծույթ, հետո 10 խոր. ասնաւ. կաթ և
ապա 0.6 խոր. ասնաւ. բուտիոլ: Յուրաքանչյուր հեղուկ
չափում են իր պիտիառվ: Բուտիբոմեարի բերանը խցանով
պինդ փակում են և մի քանի անգամ շրջում, վոր հեղու-
կը լավ խառնվի, ապա լավ թափահարում են, վոր կաթը
լրիվ լուծվի ու դնում են քաննայի մեջ: Վաննայի
տաքությունը Յելսիուսի 45°-ից բարձր չպիտի լինի,
հակառակ գեղքում խցանը կարող է դուրս թռչել:
Բուտիբոմեարները վաննայի մեջ պահում են 3—4 րոպե,
ապա, հանում են, նորից թափահարում և դնում են կենա-

բոնախույս ապարատի մեջ և պտտում են 3—5 լուսի: Ապարատից հանում են բուտիրոմետրները և դնում են նորից վաննայի մեջ ու հաշվում բուտիրոմետրների յուղով բանած աստիճանները, այնպես, ինչպես և թթվուային մեթոդի ժամանակ:

Գ. ԳԵՐԲԵՐԻ «ՆՈՐ ՍԱԼԻ» ՄԵԹՈԴԸ.

1910 թվին Գերբերը գասվ մի նոր միջոց յուղի տուկուր փորոշելու համար: Սա «Սալի» նման է, կոչվում է «Նոր սալ» և որա առավելություններն ավելի շատ են:

«Նոր սալը» ջրում հեշտ լուծվող փոշի յե, ունի չեզոք բեակցիա և այդ պատճառով բոլորովին անվտանգ է: Շատ տաքացնելուց կաթի յուղը սասնանման չի դառնում, ինչպես այդ տեղի յե ունենում «Սալ մեթոդի» ժամանակ: Նրա լուծույթն առաջուց խառնած է լինում ալկոհոլի հետ, այնպես վոր բեակախվը չափում են միայն մեկ անգամ և միայն մեկ պիպետով: Վաննան կարիք չի լինում 45°-ից ավելի տաքացնել:

«Նոր սալը» պահանջում է 2 պիպետ, մեկը կաթի համար—9,7 խոր. սանտիմետր (10 դրամմ) և մյուսը՝ «Նոր սալի» համար 12 խոր. սանտ.:

Բուտիրոմետրի մեջ ածում են նախ «Նոր սալ» և ապա կաթ ու փարզում են այնպես, ինչպես «Սալ» մեթոդի ժամանակ:

«Նոր սալի» փոշին վաճառվում է առանձին տուփերով, փորոնց մեջ նա գտնվում է տարբեր քանակությամբ—250,500 և նույնիսկ 1000 փորձի համար:

«Նոր սալի» լուծույթը պատրաստում են այսպես. տուփի մեջ գանգած ամբողջ փոշին ածում են մի ապակե ամանի մեջ և վրան ափելացնում են այնքան մաքուր ջուր, փորքան դրված և տուփի վրա: Լուծույթը թափահարում են, փոշին հալվում և ստացվում է գեղեցիկ կա-

լույսու դույնի լուծույթի: Նրան ավելացնում են փոշու տուփի հետ վաճառվող ալկոհոլը ու լավ խանում և կարիք յեղած դեղքում գործ են ածում վերեռում նկարագրած ձևով:

5. ՔԱՆԱԾ ԿԱԹԻ ՅՈՒՂԻ ՏՈԿՈՍԸ ՎՈՐՈՇԵԼԸ

Քաշած կաթի յուղի տոկոսը վորոշում են սովորական բուտիրոմետրներով այնպես, ինչպես և անարատ կաթինը, բայց այն տարբերությամբ, վոր քաշած կաթը խառնում են անարատ կաթի հետ, վորի յուղի տոկոսը նախապես վորոշած և լինում: Որինակ՝ յենթաղրենք անարատ կաթի յուղի տոկոսը—4-ի, իսկ քաշած կաթի հետ հավասար չափավ խառնելուց և հետազոտելուց հետո՝ ստացվել է 2,2 տոկ., կիշանակի, յերկու տոկոսը անարատ կաթի հաշվին է, իսկ 0,1 քաշած կաթի հաշվին: Բայց վորովիետե քաշած կաթը միայն կեսն է կազմում, ուստի յեթե վերցնենք միմիայն քաշած կաթը, նրա մեջ կատացվի վոչ թե 0,1 տոկ., այլ յերկու անգամ ավելի այսինքն 0,2^{0/0}: Քաշած կաթի համար հատուկ բուտիրոմետրներով վորոշելիս կարիք չի լինում խառնել անարատ կաթի հետ:

6. ԿՐԱԺԱՆԻ ՅՈՒՂԻ ՏՈԿՈՍԸ ՎՈՐՈՇԵԼԸ

Կաթինատնախական արտեները քաղցր արաժան կամ սմետանա ծախելիս, պետք է իմանան դրանց յուղի տոկոսը, վորպեսզի չմնավեն, վորովիետե դրանց գինը կախված է յուղի տոկոսից: Այդ պատճառով անհրաժեշտ է կարիք յեղած գեղքում, վորոշել արաժանի և սմետանի յուղի տոկոսը: Ամենանի յուղի տոկոսը վորոշելու համար գոյություն ունին հատուկ բուտիրոմետրներ, կշեռք և այլ պարագաներ, վորոնք բարդացնում են գործը: Քաղցր արաժանն ել ունի հատուկ բուտիրոմետրներ, բայց նրա յուղի տոկոսը վորոշելն անհամեմատ հեշտանում է, վորովիետե

հարավոր ե լինում վորոշել և կաթի սովորական բուտի-
րումներով, այսպես վոր հարկավոր ե միայն ունենալ
այն բոլոր պարագաները, վորոնք անհրաժեշտ են կաթի
յուղի տոկոսը վորոշելու համար:

Ամետանի համար հատկացրած քաղցր արաժանի յու-
ղի տոկոսը վորոշելով միաժամանակ իմացվում ե և ստաց-
վելիք չքամած սմետանի յուղի տոկոսը: Քամած սմետանի
յուղի տոկոսը պետք ե վորոշել այլ կերպ:

Նմուշը վերցնելուց առաջ, պետք ե արաժանը ջրի
վաճառյում տաքացնել մինչեւ $40 - 50^{\circ}$ Ց., վորպեսդի դա-
զերը դուրս գան, լավ խառնել, հետո հոգացնել ու վեր-
ցնել նմուշը: Արաժանը պետք ե տաքացնել ջրով վորպեսդի
սերը չխանձի և յուղը չհալիք:

Սովորական բուտիրումների մեջ ածում են 10 խոր.
սանտիմետր $1,820 - 1,825$ տես. կշռու ունեցող ծծմբաթ-
թու: Առանձին սլիպետով դրա վրա ածում են 5 խոր.
սանտ. արաժան և ապա սի ուրիշ սլիպետով չափում են
5 խոր. սանտ. թորած կամ յեռացրած ջուր և արաժանի
սլիպետի միջով ածում են նույնպես բուտիրումների մեջ:
Դրան ավելացնում են 1 խոր. սանտ. ամիլյան ալկոհոլ և
այսուհետեւ վարդում են ճիշտ այնպես, ինչպես կաթի
համ:

Բայց վորովնետեւ արաժանին նույն չափով ջուր և
խառնված և հետևապես արաժանի թանձրությունը յերկու
անգամ պակասած է, ուրեմն բուտիրումների աստիճան-
ները հաշվելուց հետո պետք ե ստացած 10° -ը բազմապատկել
յերկուառվ: Որինակ՝ յեթե, բուտիրումները ցույց ե տա-
լիս 8° , ուրեմն արաժանի յուղի տոկոսը կլինի 16
(Սա կեզեր ֆունկեի մեթոդն է):

Թանձր արաժանը սովորաբար ավելի յեն ջրիկա-
ցնում: Որինակ դրա համար վերցնում են սլիպետով
10 խոր. սանտ. արաժան, ածում են բաժակի մեջ և դրան
սլիպեցնում 50 խոր. սանտ. մաքուր ջուր, (արաժանի

սլիպետով 5 անգամ ջուր են չափում և ավելացնում),
հետո լավ խառնում են ու վորոշում յուղի տոկոսն այն-
պես, ինչպես անարատ կաթինը: Բայց վորովնետեւ յուղի
տոկոսը խառնուրդի մեջ վորոշելիս 6 անգամ պակաս և
ստացվում (ջուր ենք խառնել), ուստի յուղի խսկական
չափն իմանալու համար անհրաժեշտ ե ստացած թիվը
բազմապատկել 6-ով: Բայց այդ բավական չե, անհրա-
ժեշտ ե նկատի առնել և հետևյալը: Այդ բուտիրումն-
երները պատրաստված են կաթի համար, վորի միջին տե-
սակարար կշռու, համարում են մոտավորապես 1,03,
իսկ արաժանի և ջրի խառնուրդինը—համարյա 1-ի: Այս-
պես վոր, յերբ խառնուրդի յուղի տոկոսը վորոշում ենք
այդ բուտիրումներներով, վորոնք ինչպես ասացինք կաթի
համար են պատրաստված և հարմարեցված են մոտավո-
րապես 1,03 տեսակարար կշռու ունեցող հեղուկին, մենք
դրանով խառնուրդի յուղի տոկոսը պակասեցնում ենք
1,03 անգամ: Այդ պատճառով խսկական տոկոսն իմանա-
լու համար անհրաժեշտ ե յուղի ստացած տոկոսը վեցով
բազմապատկելուց հետո բազմապատկել նաև 1,03-ով: Որի-
նակ՝ դիցուք բուտիրումները ցույց ե տալիս 4° , այդ
գեպքում հարկավոր ե $4 \times 6 = 24$ և ապա $24 \times 1,03 = 24,72^{\circ}$:
Ուրեմն այս արաժանի յուղի խսկական տոկոսը, $= 24,72 \cdot 1$:

1,03-ով բազմապատկում են այն գեպքում, յերբ ա-
րաժանի հետ շատ ջուր են խառնում (5—6 անգամ),
բայց յերբ խառնուրդի մեջ ջուրն ու արաժանը հափառար
չափով են գանգում, կամ ջուրը շատ քիչ ե ավելի կամ
սլիպետ արաժանից, այն գեպքում սովորաբար 1,03-ով
չեն բազմապատկում, ինչպես ցույց ե տված վերիւու
բերած կելլեր-ֆունկեյի մեթոդի ժամանակը վորովնետեւ
տարրելությունը անհամն և լինում:

7. ԻՆՉՊԵՍ ՎՈՐՈՇԵԼ ԿԱԹԻ ԹԹՎՈՒԹՅՈՒՆԸ

Մենք արգեն գլաւենք, վոր նոր կթած և բոլորովին
թարմ կաթը միաժամանակ ունի աննշան թթու և ալկալի

հատկություն: Բայց յերբ նա հսանում է, միջի բակտերիաներն սկսում են բազմանալ և կաթի շաքարը դարձնում են կաթնաթթու: Այդ պատճառով կաթի թթվի քանակը հետգինեա շատանում է, և կաթը թթվում է: Յերբ թթվության չափը վորոշ սահմանից անցնում է, այն դեպքում կաթը կտրվում է: Հաճախ, թեպեա և կաթը վորոշ չափով թթված է լինում, բայց պաղ ժամանակ չի կը տրվում, այլ կտրվում է միայն տաքացնելիս, իսկ երեսն տաքացնելիս ել չի կտրվում: Մենք գիտենք, վոր լավ կաթնամթերքները, մանավանդ պանիրները, տուանձնապես շվեյցարական պանիրը, ստացվում են միայն թարմ կաթից: Յեկ վորքան կաթը հին ու թթված, այնքան նա անպետք է կաթնամթերքներ, մանավանդ պանիրներ պատրաստելու համար: Ուրեմն կաթի թարմությունն ստուգելու համար անհրաժեշտ է վորոշել կաթի թթվության չափը: Այդ անհրաժեշտ է մանավանդ կաթնարարեների համար, վորտեղ բազմաթիվ ընկերներից կաթ և ստացվում և մի ընկերոջ թթված կաթը կարող է մի քանի փութ պանրի փշանալու պատճառը դառնալ:

Կաթի թարմությունն ստուգել կարելի յե հետեւ միջոցներով:

ա) Համով ու հոտով.—Բայց պետք է ասեմ վոր կաթի թարմությունը համով վորոշելը ամենաանկատար յեղանակն է, վորովհետեւ կաթը պետք է բավականին թթված լինի, վոր համով իմացվի թթվությունը: Հոտով ավելի շուտ է իմացվում: Այդ ինարկե, կախված է նրանից, թե ինչ չափով են զարգացած մարդու այդ զգայարանները:

բ) Լակմուսի թղթի միջոցով.—սա յերկու դույնի և լինում՝ կարմիր և կապույտ: Բոլորովին թարմ կաթի մեջ կարմիրը կապտում է, իսկ կապույտը՝ կարմրում, իսկ թթված կաթի մեջ կապույտը կարմրում է,

իսկ կարմիրը մնում և անփոփոխ: Մի քանի կովերի խառն թարմ կաթի մեջ կարմիրը չի կապտում:

գ) Տաքացնելով.—Թթված կաթը յեռացնելուց կտրվում է: Հիվանդ կովերի կաթը նույնպես կտրվում է յեռացնելուց: Դայի հետ խառնած կաթը նույնպես կը տրվում է դրանից: Այնպես վոր չպետք է ընդունել այն կաթը, վորը յեռացնելուց կտրվում է:

Փորձելու համար բավական է վերցնել ապակի փորձանոթներով մի յերկու խորանարդ սանտիմետր կաթ և տաքացնել՝ մինչև յեռած աստիճանը: Թթված կաթ արատավոր կաթը իսկույն կտրվում է:

դ) Կաթի թթվության չափը վորոշելով.—Կաթնատնտեսի համար շատ կարևոր է իմանալ թթվության այն նվազագույն չափը, վորից բարձրն արդեն ընդունելի չե թթված կաթի համար: Այնպես վոր բավական չե, վոր կաթը թթված է, հարկավոր է իմանալ և թթվության չափը, սատիճանը, քանի վոր աննշան թթվություն ունեցող կաթը կարող է պետքական լինել նույնիսկ պանրագործության համար:

Թթվության չափը վորոշելու յեղանակները հասկանալու համար պետք է իմանալ, վոր թթուն ու ալկալին իրար հակասող հատկություններ ունեն և յերբ խառնում ենք, դրանք միանում են և չեզոք աղեր կազմում: Յեթե հայտնի լինի, թե վորքան ալկալի յե գործածվել թթուն չեզոքացնելու համար, կարելի յե դրանից միշտ իմանալ կաթի միջի թթվի քանակը: Զեղոքությունն առաջանալու վայրկյանը հայտնվում է Ֆենոլ-ֆտալեինի միջոցով: Ֆենոլ-ֆտալեինը ալկոհոլի մեջ լուծված անգույն հեղուկ է, վորը յեթե թթվի մեջ ենք ածում, իր գույնը չի փոխում, բայց ալկալի մեջ իսկույն փոխում է: Քիչ ալկալու մեջ վարդի դույն է ստանում, իսկ շատ ալկալու մեջ՝ կարմրում է: Ֆենոլ-ֆտալեինի այս հատկությունից ոգտվում էն կաթի թթվության սատիճանը վորոշելու ժամանակ:

կաթի մեջ ֆենոլ-ֆտալեին են ածում և քիչ-քիչ ավելացնում են ալկալի մինչև փոք կաթը իր գույնը փոխի:

Եթի խոր. սանտ. ալկալու միջոցով չեղոքացը թթվի քառակը կոչվում է թթվության մի աստիճան:


Թթվության աստիճանը փորոշելու յերկու յեղանակ՝ մեկը՝ Սոքալեափ, մյուսը՝ Թյորիների:

Ա. Սոքալեափի յեղանակը. — Այս յեղանակով թթվությունը չափելու համար հարկավոր են՝

1. Աստիճանների բաժանված բյուրեաներ (տես նկ. 62 և 63):

2. Պիպետներ

3. Նար ալկալու $\frac{1}{10}$ նորմալ լուծույթ⁽¹⁾



Նկ. 62. Բյուրեան ալկալի չափելու համար:

ալկալի ձողիկով, մինչև կաթը վարդի գույն ստանա և խոր:

Նկ. 63. Սոքալու-հինկելի գործիքը ալկալի չափելու համար:

նույն ալկալի ու կաթը նորմանդհատ խառնում

ալկալի ձողիկով, մինչև կաթը վարդի գույն ստանա և խոր:

(1) Առաջ վերցնում են 100 լր. ու կաթ և ալկալու $\frac{1}{10}$ նորմ. լուծույթ:

լուց գույնն այս չկորցնի: Այդ վայրկյանին համեմուն պես, իսկույն զաղարեցնում են ալկալու կաթիները և հաշվում են բյուրեափի վրա թե, վորքան խոր. սանտիմ. ալկալի յեղանակը թթվուն չեղոքացնելու համար: Բյուրեափի մի խոր. սանտ. համապատասխանում է Սոքալեափի թթվության մեկ աստիճանին: Որինակ՝ յեթե 40 խոր. սանտիմ. կաթի թթվությունը չեղոքացնելու համար զնացել է 8,75 խոր. սանտ. ալկալի, ուրեմն կաթի թթվության աստիճանը կլինի 8,7 Սոքալեափի աստիճաններով: 40 խոր. սանտ. կաթի փոխարեն կարելի յեղանակը միայն 20 խոր. սանտ., բայց գործածած ալկալու քանակը հարկավոր և բազմապատկել յերկուսով թթվության իսկական աստիճանն ստունարու համար: Թարմ կաթը ցույց է տալիս Սոքալեափի 7—8 թթվության աստիճան: Յեփելուց կաթը կարգում է 10—11°-ում, իսկ ինքն-իրեն՝ պաղ ժամանակ՝ 26—30°-ում: Սոքալեափի 10 հավասար է 0,025 գրամ կաթնաթթվին:

Բ. Թյորների յեղանակը. — Այս յեղանակով վորոշիլու նույնպես հարկավոր և ունենալ բոլոր այն գործիքները և սյութերը, փորոնք անհրաժեշտ են Սոքալեափի յեղանակով թթվությունը վերոշելու ժամանակ:

Բաժակի մեջ ածում են 10 խոր. սանտ. կաթ կամ արածան և պիկրացնում են 20 խոր. սանտ. յեղացրած ալկալու թորյալ ջուր ու խառնում: Սրան ավելացնում են 5—6 կաթիլ ֆենոլֆտալեին: Հետո վերեւում ալկալու ձևով լուծույթը և խառնում, մինչեցնում ալկալի $\frac{1}{10}$ նորմալ լուծույթը և խառնում, մինչեցնում ալկալի գույնը չփոխի: Բյուրեափի վրա հաշվում են, թե նորից գույնը չփոխի: Բյուրեափի վրա հաշվում են, թե քանի խոր. սանտ. և զնացել ալկալից և ստացած թիվը բազմապատկելով ստանում են թյորների թթվության աստիճանը: Այսպես որինակ՝ յեթե ալկալուց սպասվել է 1,75 խոր. սանտ., ապա բազմապատկելով 10-ով, կոտանանք թթվության 17,5 աստիճան լսած թյորների:

Այստեղից յերկում ե, վոր մի խորանարդ սանտիմետր ալկալիով չեզոքացըրած թթվուաթի քանակը վոչ թէ թթվության մեկ աստիճանին ե հավասար, ինչպես Սոքակետինը, այլ 10 աստիճանին:

Կաթնանտեսական արտեխներում թարմ կաթի թըթվության ամենաբարձր աստիճանը համարում են 18 ըստ Թյորների: Դրանից բարձր թթվություն ունեցող կաթը համարվում է անպետք: Այդ պատճառով, հեշտության համար աշխատանքը կատարում են հակառակ ձևով, վերցնում են 1,8 խոր. սանտ. ալկալի նատր, 20 խոր. սանտ. թորյալ կամ յեփած մաքուր. ջուր և 5 կաթիլ ֆենոլֆտալեյին ու խառնում: Ստացվում է վարդի գույն: Յեթե 16 խոր. սանտ. կաթ ածելուց գույնը մնում է նույնը ապա դա նշանակում է թթվությունը 18 աստիճանից ցած ե, ուրեմն և բավարար ե, իսկ յեթե գույնը կորչում ե, ուրեմն կաթի թթվությունը 18-ից բարձր ե, ապա և կաթն արդեն թթված և անպետք պետք ե համարել:

Թարմ, նորմալ կաթը ունենում է ըստ Թյորների թթվության 16—18°, յեփելու ժամանակ կտրվող կաթը՝ 23—26°, կանոնավոր թթված արաժմանը և հասած մերանը ունենում ե, ըստ Սոքակետի՝ 30—32°, ըստ Թյորների՝ 75—80°:


Կաթի թթվությունը վորոշելը խոշոր գործնական նշանակություն ունի: Նա հնարավորություն և տալիս իմանալու՝

1. Թարմ և կաթը, թէ թթված,
2. Կարելի յե անվտանգ տաքացնել, պատերիզացիայի յենթարկել կաթը, թէ վոչ
3. Առողջ և կաթը, թէ վոչ,
4. Կարելի յե պահրի համար գործածել թէ վոչ:
8. ԽԾՈՐՄԱՆ ՓՈԲԶ.

Յերբեմն թթվությունը վորոշելով դեռևս բավական չէ լինում կաթի հատկությունների մասին գաղտափար կազ-

մելու համար: Կեզտու և բակաերիններով հարուստ կաթի հատկությունները կարող են արտահայտվել մի վորոշ ժամանակից հետո: Այդպիսի կաթը յերբեմն վասակար և լինում թէ սպառելու և թէ վորեւ կաթնամթերք պատրաստելու համար: Փորձը ցույց ե արգել, բոր բակաերիաներով հարուստ կաթը ջերմության 35—40° Յելսիուսի սկզբում և թթվել կամ փշանարու նշաններ ցույց տալ արդեն ժամից հետո, մինչդեռ նորմալ և առողջ կաթը գիմանում է 12 ժամ և նույնիսկ ավելի: Վնասակար բակաերիաների գարգացման համար ամենանպաստավոր ջերմությունը Յելսիուսի 38—40° ե: Այս աստիճանում 12 ժամից հետո արգեն պարզ յերեսում ե, թէ վոր բակաերիաներն են հաղթող դուրս գալու, և ինչպիսի հատկություն ունի կաթը:

Գերբերի խմորման ապարատի (տես նկ. 64) մեջ կաթով լիքը խողովակներ են լինում մի թիթեղյա արկղի մեջ, վորի հատակին ջուր և լինում ածքած: Զրի տակը ճրագ են վառում, ջուրը տաքացնելու համար: Արկղը վերեկց փակվում և խուփով ջրի տաքությունից տաքանում են և կաթի խողովակները: Նկ. 64. Զրի վանսա խմորման փորձ կատարելու համար: Հատուկ ջերմաշափով կանոնավորում են ջերմության աստիճանը, վորը պետք է 38—40° վոչ բարձր վոչ ցածը լինի: Յեթե կաթը 6 ժամում, կտրվում ե, ուրեմն անպետք ե: Յեթե չի կտրվում՝ 12 ժամից հետո խողովակները հանում են և նայում. թարմ, մաքուր և առողջ կաթը 12 ժամից ընթացքում չի փոխվում, մնում է թարմ հեղուկ գրության մեջ: Այդպիսի կաթը նորից դինում են արկղի մեջ և



սպասում գարձյալ 12 ժամ։ Վատ կաթն, ընդհակառակն,
շատ շուտ փոփոխության ե յինթարկվում։ Յեթե կաթը
լավ ե մակարդագած և մերգածքը կրող՝ ե լինում, այդ
ցույց ե տալիս, զոր կաթի մեջ գերակշռում են կաթնա-
թթվուտային բակտերիաները, ուրեմն կաթը կարելի յե-
նամարել առողջ, իսկ յեթե մերգածքը անհավասար ե, հա-
տիկավոր ե և պղտոր շիճուկ ե դուրս տվել, կնշանակի
կաթը կեղտու և յեղել և մեջը մեծ քանակությամբ վնա-
սակար բակտերիաներ են ընկել։ Յեթե կաթից վատ հոտ ե
գալիս և մերգածքի վրա բշտիկներ են յերեսում, այդպի-
սի կաթը բոլորովին անպետք ե և այդպիսի կաթից պա-
նիք ու յուղ չի կարելի պատրաստել։

Հարկավոր ե ուշագրություն դարձնել և արաժանի
վրա, թե ինչ կերպ ե յերես բռնել. կամ յերեսը
չի ծածկված գաղերի շնորհիվ առաջացած բշտիկներով և
կամ յերեսը քաշելիս արաժանը չի ձգվում և այլն
և այն:

Արագածանը պիտք է ունենա դյուրավի թթու համ,
յեթե կաթը առաջ է յեղել։ Գառը, սուր, անդուրեկան
համը, կաֆէի վատովիյան նշան է։

համը, կաֆէի վատության սշաս ու:
Պանրագործաբաններում խմորման փորձի միջոցով
կարելի յեւ ստուգել ընկերների կաթի հատկությունը
և պանրի փշանալու առաջն առնել: Սա լավ միջոց է
կաթ ըերողների վրա հոկելու համար:

9. ԱԼԿՈԶՈՒԻ ՓՈՐՁ.

Կաթի ընդհանուր հատկությունը, նրա գիմացկությունը վարութելու համար գործ են ածում և ալկոհոլը (սպիրտ): Վեցնում են մաքուր ալկոհոլը, վոր ըստ Տրալեսի 68 աստիճան պիտի ունենա (այսինքն ջի և մաքուր գտփած ալկոհոլի խառնուրդ, վորի 68 մասը ըստ ծավալի կազմում և ալկոհոլը):

Ալկոհոլը խառնում են հավասար քանակով կաթի հետ,
յեթե կաթը շաղփում ե, կոշանակի նա կամ թթված ե,
կամ թթվելու վրա յե: Ըսթանբապես յեթե կաթի թթվու-
թյան չափը հասել է 7—8 աստիճանի ըստ Սոքոլեաի, այն
գեպքում ալկոհոլի հետ խառնելուց կաթն իսկոյն կտրվում
է, մինչդեռ յեռացնելուց՝ կաթը կտրվում է միայն, յերբ
թթվությունը 11 աստիճանի յե հասել: Ալկոհոլի փորձով
կարելի յե ուրեմն ավելի շուտ ստուգել կաթի հատկու-
թյունը, քանի թե խմորման փորձի միջոցով, կամ թթվու-
թյունը փորոշելու միջոցով:

կիրաները այկոհոլի փորձի մասին տառմ են

«Կաթինատեսական ընկերություններում, վորտեղ
մեծ քանակությամբ զանազան կաթերի նմուշներ են քննվում,
ալիոհովի փորձն արժնի յե առանձին ուշադրության,
վորովհետև գա հսարապորություն ե տալիս անփորձներին
հունիսկ չափազանց արագ կերպով ստուգել կաթի վո-
րակը»:

10. Բնօգես Պետք Ե ՎԵՐՑՆԵԼ ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ
ՆՄՈՒՇՆԵՐԸ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ:

Յերբ ուզում ենք մի վորևէ կաթնամթերք (կաթ, արածան և այլն) հետազոտել, անհրաժեշտ ե վերցնել այդ մթերքների նմուշը: Նմուշը այնպիս պետք է վերցնել, վոր նա ունենա մթերքի բոլոր հատկությունները: Դրա համար պետք է իմանալ նմուշ վերցնելու ձեր:

Յեթե կաթը կամ արաժանը յերկար և մացել ունե-
նում, պետք է այսպես խառնել, վոր վերեկի մասը լով
խառնվի ցածի մասի հետ։ Յեթե պատերին կպած սառն ա-
րաժան կա, պետք է տաքայնել ու նորից խառնել հե-
տու կաթը և առաջ միայն վերցնել նմուշ։

զուկը ներքնից զօրս և առ կաթի կամ արաժանի նմուշն ածում են բոլորովին մաքուր ու չոր շնի կամ բաժակի մեջ և պիտետով այդ

տեղից վերցնում են քննելու համար: Յեթե կաթի նմուշը հեռու տեղ են ուղարկում, հարկավոր է լցնել շինուած կամաց 3/4-ը և խցանով ամուր փակել: Յեթե դրանից պահաս լցնենք, կարող ե ճանապարհին հարվել, իսկ յեթե ավել լցնենք հետազոտության ժամանակ գժվար կլինի կաթը լավ խառնել միապաղաղ հեղուկ ստանալու համար:

Կաթի նմուշը մի քանի որ պահելու համար լավ է փորձալին ածել մեջը: Մեկ շիշ կաթին մեկ խորանորդ սանտ. փորձալին ե պետք, իսկ 100 խոր. սանտ. կաթին՝ 3—4 կաթիլ: Այդպես պիտի անել վոր կաթը չթթվի:

Յեթե կաթնասանակության ընկերության մի վորեն անդամի բաժին կաթի նկատմամբ կեղծիքի կասկած կա, պետք ե նրա կաթից յերկու տեսակ նմուշ վերցնել, մեկը զարծարանում ստացած կաթից, մյուսը կրվը կթելուց անմիջապես հետո:

Կաթի նմուշը կովի տակից վերցնելու ժամանակ, հարկավոր ե կատարել հետևյալ կանոնները:

1. Նմուշը պետք ե վերցնել 24 ժամվա ընթացքում կեղծիքը նկատելուց հետո:
2. Վոր ժամի կաթը կասկածի տակ ե յեղել, նույն ժամին ել պետք ե վերցնել նմուշը:
3. Յեթե ստացած կաթը մի քանի կովերի կաթի խառնուրդ ե յեղել, հարկավոր ե նմուշը վերցնել նույն կովերի խառը կաթից.
4. Նմուշը վերցնելու ժամանակ կրվը պետք ե կթել մշտական կթողը, կթելու սովորական ժամերին:
5. Պետք ե ցամաք կթել կովերը:
6. Նմուշի համար պետք ե վերցնել առնվազն մեկ շիշ կաթ վկաների ներկայությամբ և պաշտոնական կնիքով կնքել շիշը զմուռով և աղա ուղարկել քննության:

ԱՂՅՈՒՍԱԿ № 2.

Ցույց ե տալիս թե մի ֆունտ կարազը քանի ֆունտ կաթից ե ստացվում:

3ուղի %	1 ֆունտ կաթիցը քանի փ. կաթից և ստացվում:	3ուղի %	1 ֆունտ կաթիցը քանի փ. կաթից և ստացվում:	3ուղի %	1 ֆունտ կաթիցը քանի փ. կաթից և ստացվում:
2.00	46.5	2.21	41.8	2.42	37.9
2.01	46.2	2.22	41.5	2.43	37.8
2.02	46.0	2.23	41.3	2.44	37.6
2.03	45.7	2.24	41.1	2.45	37.4
2.04	45.5	2.25	41.0	2.46	37.3
2.05	45.3	2.26	40.8	2.47	37.1
2.06	45.0	2.27	40.6	2.48	36.9
2.07	44.8	2.28	40.4	2.49	36.8
2.08	44.6	2.29	40.2	2.50	36.6
2.09	44.3	2.30	40.0	2.51	36.4
2.10	44.1	2.31	39.8	2.52	36.3
2.11	43.9	2.32	39.6	2.53	36.1
2.12	43.7	2.33	39.4	2.54	36.0
2.13	43.4	2.34	39.3	2.55	35.8
2.14	43.2	2.35	39.1	2.56	35.7
2.15	43.0	2.36	38.9	2.57	35.5
2.16	42.0	2.37	38.7	2.58	35.4
2.17	42.8	2.38	38.6	2.59	35.2
2.18	42.2	2.39	38.4	2.60	35.1
2.19	42.2	2.40	38.2	2.61	35.0
2.20	42.0	2.41	38.1	2.62	34.8



3ուղի %	1 ֆունտ կարագը քանի ֆ. կաթից և սոսացվում:		1 ֆունտ կարագը քանի ֆ. կաթից և սոսացվում:		1 ֆունտ կարագը քանի ֆ. կաթից և սոսացվում:	
	3ուղի %	3ուղի %	3ուղի %	3ուղի %	3ուղի %	3ուղի %
2.63	34.7	2.87	31.6	3.11	29.2	
2.64	34.5	2.88	31.5	3.12	29.1	
2.65	34.4	2.89	31.4	3.13	29.0	
2.66	34.3	2.90	31.3	3.14	28.9	
2.67	34.1	2.91	31.2	3.15	28.8	
2.68	34.0	2.92	31.0	3.16	28.7	
2.69	33.9	2.93	30.9	3.17	28.6	
2.70	33.7	2.94	30.8	3.18	28.5	
2.71	33.6	2.95	30.7	3.19	28.4	
2.72	33.5	2.96	30.7	3.20	28.3	
2.73	33.3	2.97	30.6	3.21	28.2	
2.74	33.2	2.98	30.5	3.22	28.1	
2.75	33.1	2.99	30.4	3.23	28.0	
2.76	33.0	3.00	30.3	3.24	27.9	
2.77	32.8	3.01	30.2	3.25	27.8	
2.78	32.7	3.02	30.1	3.26	27.7	
2.79	32.6	3.03	30.0	3.27	27.6	
2.80	32.5	3.04	29.9	3.28	27.5	
2.81	32.3	3.05	29.8	3.29	27.4	
2.82	32.2	3.06	29.7	3.30	27.3	
2.83	32.1	3.07	29.6	3.31	27.2	
2.84	32.0	3.08	29.5	3.32	27.1	
2.85	31.9	3.09	29.4	3.33	27.0	
2.86	31.7	3.10	29.3	3.34	27.0	

3ուղի %	1 ֆունտ կարագը քանի ֆ. կաթից և սոսացվում:		1 ֆունտ կարագը քանի ֆ. կաթից և սոսացվում:		1 ֆունտ կարագը քանի ֆ. կաթից և սոսացվում:	
	3ուղի %	3ուղի %	3ուղի %	3ուղի %	3ուղի %	3ուղի %
3.35	26.9		3.59	25.0	3.83	23.4
3.36	26.8		3.60	24.9	3.84	23.3
3.37	26.7		3.61	24.9	3.85	23.2
3.38	26.6		3.62	24.8	3.86	23.2
3.39	26.5		3.63	24.7	3.87	23.1
3.40	26.5		3.64	24.6	3.88	23.1
3.41	26.4		3.65	24.5	3.89	23.0
3.42	26.3		3.66	24.5	3.90	22.9
3.43	26.2		3.67	24.4	3.91	22.9
3.44	26.1		3.68	24.4	3.92	22.8
3.45	26.1		3.69	24.3	3.93	22.8
3.46	26.0		3.70	24.2	3.94	22.7
3.47	25.9		3.71	24.2	3.95	22.6
3.48	25.8		3.72	24.1	3.96	22.6
3.49	25.7		3.73	24.0	3.97	22.5
3.50	25.7		3.74	24.0	3.98	22.5
3.51	25.6		3.75	23.9	3.99	22.4
3.52	25.5		3.76	23.8	4.00	22.3
3.53	25.4		3.77	23.8	4.01	22.3
3.54	25.4		3.78	23.7	4.02	22.2
3.55	25.2		3.79	23.6	4.03	22.2
3.56	25.2		3.80	23.6	4.04	22.1
3.57	25.1		3.81	23.5	4.05	22.1
3.58	25.1		3.82	23.4	4.06	22.0

<i>Յուղի %</i>	1 ֆունտ կա- րագը քանի ֆ. կաթից և ստացվում:	<i>Յուղի %</i>	1 ֆունտ կա- րագը քանի ֆ. կաթից և ստացվում:	<i>Յուղի %</i>	1 ֆունտ կա- րագը քանի ֆ. կաթից և ստացվում:
4.07	21.9	4.31	20.7	4.55	19.5
4.08	21.9	4.32	20.6	4.56	19.5
4.09	21.8	4.33	20.6	4.57	19.5
4.10	21.8	4.34	20.5	4.58	19.4
4.11	21.7	4.35	20.5	4.59	19.4
4.12	21.7	4.36	20.4	4.60	19.3
4.13	21.6	4.37	20.4	4.61	19.3
4.14	21.6	4.38	20.3	4.62	19.2
4.15	21.5	4.39	20.3	4.63	19.2
4.16	21.4	4.40	20.2	4.64	19.2
4.17	21.4	4.41	20.2	4.65	19.1
4.18	21.3	4.42	20.1	4.66	19.1
4.19	21.3	4.43	20.1	4.67	19.0
4.20	21.2	4.44	20.0	4.68	18.0
4.21	21.2	4.45	20.0	4.69	18.0
4.22	21.1	4.46	20.0	4.70	18.0
4.23	21.1	4.47	19.9	4.71	18.0
4.24	21.0	4.48	19.9	4.72	18.0
4.25	21.0	4.49	19.8	4.73	18.0
4.26	20.9	4.50	19.8	4.74	18.0
4.27	20.9	4.51	19.7	4.75	18.0
4.28	20.8	4.52	19.7	4.76	18.0
4.29	20.8	4.53	19.6	4.77	18.0
4.30	20.7	4.54	19.6	4.78	18.0

<i>Յուղի %</i>	1 ֆունտ կա- րագը քանի ֆ. կաթից և ստացվում:	<i>Յուղի %</i>	1 ֆունտ կա- րագը քանի ֆ. կաթից և ստացվում:	<i>Յուղի %</i>	1 ֆունտ կա- րագը քանի ֆ. կաթից և ստացվում:
4.79	18.5	—	—	—	—
4.80	18.5	—	—	—	—
4.81	18.5	—	—	—	—
4.82	18.4	—	—	—	—
4.83	18.4	—	—	—	—
4.84	18.3	—	—	—	—
4.85	18.3	—	—	—	—
4.86	18.3	—	—	—	—
4.87	18.2	—	—	—	—
4.88	18.2	—	—	—	—
4.89	18.1	—	—	—	—
4.90	18.1	—	—	—	—
4.91	18.1	—	—	—	—
4.92	18.0	—	—	—	—
4.93	18.0	—	—	—	—
4.94	18.0	—	—	—	—
4.95	17.9	—	—	—	—
4.96	17.9	—	—	—	—
4.97	17.8	—	—	—	—
4.98	17.8	—	—	—	—
4.99	17.8	—	—	—	—
5.00	17.7	—	—	—	—

ԱՂՅՈՒՍԱԿ № 3.

ՑԵՐՄԻՌԱԾԻ և ՌԵՎՈԼՄԱԿՈՎԻ ջերմության տատիճանների
համեմատության.

ՌԵՎՈԼՄԱԿՈՎԻ աստիճաններ ներ	ՑԵՐՄԻՌԱԾԻ աստիճաններ ներ	ՌԵՎՈԼՄԱԿՈՎԻ աստիճաններ ներ	ՑԵՐՄԻՌԱԾԻ աստիճաններ ներ	ՌԵՎՈԼՄԱԿՈՎԻ աստիճաններ ներ	ՑԵՐՄԻՌԱԾԻ աստիճաններ ներ	ՌԵՎՈԼՄԱԿՈՎԻ աստիճաններ ներ	ՑԵՐՄԻՌԱԾԻ աստիճաններ ներ
1	1.25	21	26.2	41	51.2	61	76.2
2	2.5	22	27.5	42	52.5	62	77.5
3	3.7	23	28.7	43	53.7	63	78.7
4	5	24	30	44	55	64	80
5	6.2	25	31.2	45	56.2	65	81.2
6	7.5	26	32.5	46	57.5	66	82.5
7	8.7	27	33.7	47	58.7	67	83.7
8	10	28	35	48	60	68	85
9	11.2	29	36.2	49	61.2	69	86.2
10	12.5	30	37.5	50	62.5	70	87.5
11	13.7	31	38.7	51	63.7	71	88.7
12	15	32	40	52	65	72	90
13	16.2	33	41.2	53	66.2	73	91.2
14	17.5	34	42.5	54	67.5	74	92.5
15	18.7	35	43.7	55	68.7	75	93.7
16	20	36	45	56	70	76	95
17	21.2	37	46.2	57	71.2	77	96.2
18	22.5	38	47.5	58	72.5	78	97.5
19	23.7	39	48.7	59	73.7	79	98.7
20	25	40	50	60	75	80	100

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

I.	ՅԵՐԿՈւ խոսք	3
I.	Կովի կաթի բաղադրությունը	5
1.	Զուրը	5
2.	Չոր կամ պինդ մասը	6
II.	Մյուս կենդանիների կաթերի հատկությունները	10
III.	Նորմալ կաթի հատկությունը	13
IV.	Դալ	14
V.	Կուրծը և կաթի գոյանալը	15
VI.	Ի՞նչ պայմաններ են ազդում կաթի քանակի և վորակի վրա	18
VII.	Կթելը	24
ա.	Կթելու ձեր	24
բ.	Կովկիթները	27
VIII.	Ի՞նչ են բակտերիաները և ի՞նչ դեր են խաղում կաթնա-	28
	տնտեսության մեջ	
IX.	Մաքուր կաթ ստանալու միջոցները	36
X.	Կաթ քամեն ու քամիչները	40
XI.	Ի՞նչ տեսակ ամաններ պետք են գործածել կաթնատնաե-	43
	սության կարիքների համար: Ամանների լվանումը	
XII.	Կաթի կշռելն ու չափելը	49
XIII.	Կաթի պաղեցնելն ու տաքացնելը	53
1.	Կաթի պաղեցնելը	56
2.	Կաթի տաքացնելը, պատուրիզացիա և ստերիլիզա-	61
	ցիա, հոմոգենիզացիա .	
XIV.	Տաշուը և սերզաալը	67
1.	Տաշտի պակասությունները	67
2.	Սերզատը (սեպատատորը) և նրա գործածության	69
յեղանակը		
ա.	Կաթից յուղը զատվելու պատճառը	69
բ.	Սերզատի մասերը և կաթի անցման ձանապարհները	70
գ.	Սերզատների տեսակները	76
դ.	Սերզատի նշանակությունը և առավելությունները	79
յ.	Ի՞նչ պետք են պահանջել սերզատից	81
դ.	Ի՞նչ պայմաններում և սերզատի միջոցով կաթը լավ	81
	յուղանան լինում .	
ե.	Սերզատը բանեցնելու յեղանակը	84
XV.	Կարագը և նրա պատրաստելու ձեերը	89
1.	Բնդիսանուր դիտողություններ	89

	Եց
2. Կարագ գոյանալու եյությունը	90
3. Ինչ նյութերից են յուղ պատրաստում	90
4. Արաժանի ներկելը	96
5. Ինչ պայմաններ են ազգում կարագ գոյանալու վրա	98
6. Խնացիների տեսակները	101
7. Կարագ հարելու յեղանակները	104
8. Կարագ հանելու և լվանալու ձեր	109
9. Կարագի ցամաքեցնելը	110
10. Ինչպես իմանալ թե քանի փունտ կաթից և սոսց փում մեկ փունտ կարագը	116
XVI. Կարագի մյուս տեսակները	117
1. Աղ արած քաղցր կարագ	117
2. Փարիզյան կարագ	117
3. Թթված արաժանի կամ եքսպորտի կարագ	120
4. Պանրաշիճուկի կարագ	122
XVII. Պանազան կաթնամթերքներ	124
1. Թթու արաժան. (սմեռանա)	124
2. Մածուն	127
3. Կեֆիր	128
4. Շոռ	130
5. Զել պանիր	132
6. Թան	133
XVIII. Կաթի հետազոտությունը	134
1. Ինչու համար են կաթը հետազոտում	134
2. Տարության չափելը	136
3. Կաթի տեսակաբար կշռի վորոշելը	137
Աղյուսակ № 1	143 և 144
4. Ինչպես են վորոշում անարատ կաթի յուղի տոկոսը	145
5. Քաշած կաթի յուղի տոկոսը վորոշելը	153
6. Արաժանի յուղի տոկոսը վորոշելը	153
7. Ինչպես վորոշել կաթի թթվությունը	155
8. Խմորման փորձ	160
9. Ագկոհոլի փորձ	162
10. Ինչպես պետք է վերցնել կաթնամթերքների նմուշները հետազոտության համար	163
Աղյուսակ № 2	165
Աղյուսակ № 3	170

ՎՐԻՊԱԿՆԵՐ ՅԵՎ ԱԿՂՋՈՒՄՆԵՐ

Գիրքը կարդալուց առաջ խնդրում ենք ուղղել հետևյալ
վրիպակները:

Եց	Տող	Տպագրված է	Պետք է կարգալ
3—5 ներքեցից—գիրք			գիրքու
5—4 » —միջա			միջա
18—12 » —պայմանները			պայմանները
19—1 վերեկց —նրանակ՝ տափարի			ցեղերի մեջ
19—14 ներքեցից—ըջան			ըջան
22—2 վերեկց —աղջում			աղջում
29—3 » —ով չի սովորական ով չի սովորական			
29—14 » —անալի ենք, թողնում անալի յենք թողնում			
29—15 ներքեցից—ով չգիտե			ով չգիտե
32—7 վերեկց —նրանից			նրացից
32—11 ներքեցից—ջերմությունը			ջերմություն
32—12 » —ջերմություն			ջերմություն
33—14 վերեկց —կաթիլներով և			հատիկներով
37—12 » —թիմարե			թիմարել
42—10 » —ամրանում են			ամրացնում են
46—8 ներքեցից—(տես նկ. 15)			(տես նկ. 16)
52—նկար 21 թարս և. ողը պիտք և վերել լինի, կեսը ցած			
59—3 վերեկց —սառնցում են			սառնցում են
59—14 ներքեցից—ընդունաբանից			ընդունաբանից
60—9 » —յերը			յերը
66—14 » —Ստերլիպացիս			Ստերլիպացիս
67—7 վերեկց —յերեսը քաշելու			յերեսը քանելու
69—8 ներքեցից—մեզ շատ մոտ			մեզանից շատ մոտ
70—9 » —վերե անյուղ			վերե, անյուղ
73—2 վերեկց —ծորածրակ			ծորակ
79—5 » —պետքական			աշխատունակ
83—5 ներքեցից—դրված			տված

ԵՐԵՎԱՆԻ ՏԱՐԱԳՐԵՎԱԾ Ե ՊԵՏՔ Ե ԿԱՐԳԱԼ

- 86—5 վերեից —վեր վերեում
88—4 » —արաժանի արաժանն
88—5 » —ինչպես մաքուր . ինչպես հարկն և, մաքուր
88—6 » —իսչանակներ . խողանակներ
88—6 վերեից —մաքուրտաք . մաքուր, տաք
96—10 » —7—80 7—8
109—9 ներքեից —միջուկն միջուկն,
110—6 վերեից —դուրս դա մաքուր դուրս դա
115— նկ. տակ—կենտրոնախոր . կենտրոնախոր
117—17 ներքեից —Սենդանի Սեղանի
117—11 » —1 $\frac{1}{2}$ ֆունտ 1 $\frac{1}{2}$ —1 ֆունտ
119—13 վերեից —արաժանից արաժան
120—4 » —պտակլուց արօրելուց
125—9 » —շատ շուտ
126—4 ներքեից —թթված կամ
—հոմ թթված հոմ
128—2 » —կարաղի կարգին
-

ԳԻՆՆ Ե 1 Ր. 50 Կ.



«Ազգային գրադարան



NL0298094

22.752